1918 Թ.
ՄԱՅԻՍՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԷՋ

1918 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ԵՐԵՎԱՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ИСТОРИИ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ)
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ОО "МЕЖДУНАРОДНОЕ ОБЩЕСТВО ШИРАК"

НОВАЯ СТРАНИЦА ИЗ ИСТОРИИ МАЙСКИХ СРАЖЕНИЙ 1918 г.

Материалы конференции, посвященной майским сражениям 1918 г. и 85-летию Первой республики Армения

Издательство РАУ
Ереван 2005

9(47.925)
Հ-47

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
«ՇԻՐԱԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

1918 թ. ՄԱՅԻՍՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԷՋ

1918 թ. մայիսյան հերոսամարտերի
և Հայաստանի Առաջին Հանրապետության 85-ամյակին
նվիրված գիտաժողովի նյութեր

3393

ՌՀՀ հրատարակչություն
Երևան 2005 թ.

ՀՀԱԶ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Հ 247

Ժողովածուն հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Պատասխանատու խմբագիրներ՝
պատմական գիտությունների դոկտորներ
Ա.Մելքոնյան, Հ.Մելիքյան

Հ 247 1918 թ. մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ, Եր., ՌՀՀ, հրատ., 2004, 102 էջ:

Ժողովածուում ամփոփված են 1918թ. մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Առաջին Հանրապետության 85-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը:

Գիտաժողովը կազմակերպել են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը, Ռուս-հայկական (սլավոնական) պետական համալսարանը և «Շիրակ միջազգային միություն» հասարակական կազմակերպությունը 2003 թ. հունիսի 13-ին Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղում:

Հ $\frac{0503020913}{0112(01)-2005}$ 2005 ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99941-919-9-3
© ՌՀՀ հրատարակչություն, 2005

Խմբագրության կողմից

2003 թվականի հուլիսի 13-ին Շիրակի մարզի Սառնաղբյուր (Սոգյուբլի) գյուղում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ, Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի և «Շիրակ միջազգային միություն» հասարակական կազմակերպության մասնակցությամբ տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված Հայաստանի Առաջին հանրապետության հռչակման 85-րդ տարեդարձին և Արևելյան Շիրակում 1918թ. մայիսի կեսերին տեղի ունեցած գոյապայքարի հարցերին:

Լսվեցին զեկուցումներ Հայոց պետականության վերականգնման, նրա նշանակության, թուրքական նվաճողների դեմ 1918թ. կեսերին, նախքան Սարդարապատի բախտորոշ ճակատամարտը, ինչպես Սոգյուբլի (նաև՝ Սոգյուբլու) և նրան հարևան գյուղերի, այնպես էլ ողջ Շիրակի բնակչության գոյապայքարին վերաբերող, նորահայտ փաստերով առատ, 1918թ. հերոսամարտերի պատմությունը հարստացնող արժեքավոր զեկուցումներ:

Ժողովածուում ամփոփված են այդ գիտաժողովի նյութերը: Գիտաժողովը նվիրված էր 1918թ. մայիսյան հերոսամարտերին և Հայաստանի Առաջին հանրապետության 85-ամյակին: Բացահայտվեցին մայիսյան հերոսամարտերից մեկի հետ առնչվող մի շարք նոր փաստեր, արվեցին գիտական կարևոր ընդհանրացումներ:

Այդ հերոսամարտը նախաձեռնել ու կազմակերպել էին արևմտահայ անվանի ազգային գործիչները՝ Սոգյուբլիի և հարևան մի շարք գյուղերի ավագանու հետ համատեղ: Նրա նպատակն էր կոտորածից փրկել մի քանի տասնյակ հազար արևմտահայ, ինչպես նաև Կարսի, Շիրակի հազարավոր փախստական-գաղթականներին և իրականացնել նրանց ապահով անցումը դեպի Ս.Էջմիածին, Երևան:

Շիրակի բնակչության մի մասի այդ գոյապայքարի

պատմությունը դեռ կշարունակվի հետազոտվել, ըստ արժանվույն կգնահատվի, իր տեղը կգտնի դպրոցական, բուհական դասագրքերում, պատմական գրականության մեջ: Այն մայիսյան հերոսամարտերի օրգանական մասն էր, թուրք բռնակալների դեմ հայ ժողովրդի գոյապայքարի անբաժանելի օղակը:

Նստաշրջանը Սառնաղբյուրից ու հարևան գյուղերից այստեղ եկած բազմաթիվ գյուղացիների համար յուրահատուկ տոնախմբության վերածվեց, դրվեց հերոսական գոյապայքարին նվիրված ապագա հուշարձանի հիմքը:

Սահմանամերձ այդ շրջանում նման միջոցառման կազմակերպումը լայն արձագանք գտավ Շիրակում և ողջ հանրապետությունում: Այն կարևոր խթան կհանդիսանա երիտասարդության հայրենասիրական դաստիարակության գործում:

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Բացման խոսք՝ Աշոտ Մելքոնյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,
պատմական գիտությունների դոկտոր

Հարգելի գործընկերներ և ներկաներ.

Այսօր ուրախալի օր է և՛ մասնագետ-պատմաբանների և՛ մեր հանրության, մասնավորապես Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղի բնակչության համար: Գաղտնիք չէ, որ խորհրդային տարիներին տարբեր քաղաքական կաղապարների առկայության պատճառով մեր պատմության շատ էջեր մնացել են չլուսաբանված: Եթե անգամ դրանց եղել է անդրադարձ, ապա դարձյալ գերակշռել է քաղաքական կոնյուկտուրայի թույլատրելի սահմաններում պատմական ճշմարտությունը բացահայտելու մոտեցումը: Այդ իմաստով բացառություն չի կազմել 1918 թ. մայիսյան հերոսամարտերի թեման: Հետխորհրդային տարիներին մեր ժողովրդի նոր պատմության այդ փառապանծ էջին անդրադարձան շատերը: Ես կուզենայի հատուկ ընդգծել ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանի ծանրակշիռ դերն այս գործում: Նրա հրատարակած երկու արժեքավոր մենագրություններն ու բազմաթիվ հոդվածները նոր լույս սփռեցին այս խնդրի վրա: Հ.Ավետիսյանն էր, որ մեզ՝ պատմաբաններիս և խնդրի լուսաբանմամբ շահագրգիռ մարդկանց նպատակամղեց դեպի 1918 թ. գարնանը Շիրակի և մասնավորապես՝ Սոգյութլուի հերոսական ինքնապաշտպանության մութ էջերի բացահայտմանը:

Սիրելի ներկաներ, թույլ տվեք ողջունել բոլորիդ այս ուշագրավ և գիտաճանաչողական մեծ նշանակություն ունեցող միջոցառման կապակցությամբ և գիտաժողովը հայտարարել բացված:

Ողջույնի խոսք՝
Ռ. Մանուկյան
Շիրակի մարզպետ

Հարգելի հյուրեր, սիրելի սառնաղբյուրցիներ. ինձ համար մեծ պատիվ է ներկա լինել այս գիտաժողովին, որտեղ քննարկվում է 1918 թվականի մայիսյան գոյապայքարի մի դրվագի՝ «Սառնաղբյուրի ճակատամարտի» վերահաստատման հարցը: Համոզված եմ, որ Սոգյուլիի հերոսամարտը հոգեբանորեն ազդել է մեր տարածաշրջանի, մեր նոր սերնդի դաստիարակության վրա և պատահական չէ, որ Շիրակ աշխարհը, նաև սառնաղբյուրցիներն արցախյան գոյամարտին փայլուն մասնակցություն ցուցաբերեցին: Մեր պատմաբանները պետք է արձանագրեն, որ Սառնաղբյուրի հերոսամարտը մեծապես ազդելու է գալիք սերունդների հայրենասիրական դաստիարակության վրա:

Սիրելի պատմաբաններ. հուսանք, որ սա կունենա շարունակություն՝ մանրամասն ուսումնասիրելու Սոգյուլիի գոյապայքարի պատմությունը: Շնորհակալություն Ռ.Գևորգյանին, որ կազմակերպեց այս գեղեցիկ հավաքը: Իմ շնորհակալությունը ձեզ բոլորիդ այս գեղեցիկ միջոցառման, գիտաժողովի համար: Համոզված ենք, որ դեռևս նոր էջեր կբացվեն մեր պատմության և աղբյուրագիտության համար:

ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ

ՎԱՀԱՆ ՍԵԼԻՔՅԱՆ
պ.գ.թ., ՌՀՀ, համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ

Հայաստանի Հանրապետության առաջացումը 1918 թվականին տեղի ունեցավ քաղաքական ներքին և արտաքին բարդ իրադրության պայմաններում: Հայկական պետության ձևավորման ու զարգացման հազարամյակների համատեքստում հանրապետության ծնունդը բնորոշվում է նախ նրանով, որ այս փուլում պետությունն առաջացավ պատմական Հայաստանի մի փոքր՝ արևելահայ հատվածում: Այն օբյեկտիվորեն բխում էր Թուրքմենչայի պայմանագրի քաղաքական բազմաբնույթ հետևանքներից:

Արևմտահայությունն ու սփյուռքահայությունը ներկայացնող հայ ազգային, հասարակական գործիչների կողմից այն կոչվել է Արարատյան հանրապետություն, մի հանգամանք, որ վկայում էր հայ ազատագրական ծրագրերի մասնակի իրականացման, ինչպես նաև ներքին ու միջազգային քննարկումներում արևմտահայության խնդրի առաջնության և հանրապետության ղեկավարության հետ հաճախ անլուծելի հակասությունների մասին:

Պետականության ծնունդն այս անգամ ևս ուղղակիորեն առնչվում է օտար կայսրության փլուզման գործընթացի հետ: Հայ ազատագրական մտքի և պայքարի մի ամբողջ փուլ, որը սկիզբ էր առնում 16-17-րդ դարերից, Ռուսաստանի արտաքին նվաճումների արդյունքում չէր հանգել իր բաղձալի հանգուցալուծմանը: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում և հայոց մեծ եղեռնի հետևանքով թեև հայությունը աննախադեպ կորուստներ կրեց և իր գոյապայքարի ընթացքում հայտնվեց թերևս ամենազարհուրելի իրավիճակում, այնուամենայնիվ Թուրքմենչայից շուրջ 80 տարի հետո Ռուսաստանը վերջապես գրավեց նաև Արևմտյան Հայաստանը, սակայն,

դարձյալ Հայկական պետություն չստեղծելու ցանկությամբ:

Այս իրադրության պայմաններում 1917 թվականին տեղի ունեցան ռուսաստանյան երկու իրարամերժ հեղափոխություններ, որոնք թեև հայության շահերի համար չէին բռնկվել, սակայն հենց այդ արմատական իրադարձություններն էին, որ արագացրին նախ՝ բազմազգ կայսրության փլուզումը, ապա և՝ ազգային պետությունների առաջացման գործընթացը:

Ռուսական ինքնակալությունը տապալած Փետրվարյան հեղափոխությունը կոչված էր ռուսական պետության մեջ հիմնել կառավարման ժողովրդավարական, սահմանադրական սկզբունքը, լուծել դեմոկրատական հեղափոխության կենսական խնդիրները, իրականացնել բազմազգ կայսրության ժողովուրդների ազգային ինքնորոշման երազանքը:

Հեղափոխությունն ամբողջ երկրում, այդ թվում և հայ իրականության մեջ ջերմորեն ընդունվեց: Հայության տրամադրություններն այդ համընդհանուր ոգևորության պայմաններում դարձյալ առանձնանում էին, այս անգամ նրանով, որ չլինի թե սպասված հեղափոխությունը խոչընդոտի ժողովրդի գլխավոր խնդրի՝ Արևմտյան Հայաստանի ազատագրմանը: Ռուսական կովկասյան բանակը Թուրքիայից նվաճել էր Արևմտյան Հայաստանի մեծ մասը, Ռուսաստանի նորաստեղծ կառավարությունն առաջին անգամ Ռուսաստանի և հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ Արևմտյան Հայաստանը ենթարկել էր իրեն՝ այնտեղ ստեղծելով քաղաքացիական իշխանության մարմին: Հայ ազգային դեմոկրատական կուսակցություններն ու գործիչները Փետրվարյան հեղափոխության գլխավոր փորձություն էին համարում ինչպես Հայկական, այնպես էլ Կովկասի ազգային հարցը: Հայության տագնապը ոչ այլ ինչ էր, եթե ոչ հայ ժողովրդի ազգային քաղաքական վերածնության երկունք: Տագնապը նաև նրանում էր, որ ջախջախելով միապետությունը, տվյալ դեպքում հայկական տարածքները գրավող-ազատագրող ուժը՝ հեղափոխությունն այնուամենայնիվ մեծ հարված հասցրեց ռուսական պետության զորությանը, որն այս փուլում ևս հայ

ժողովրդի գոյության ու զարգացման պատմական գլխավոր հակաթուրքական նեցուկն էր համարվում: Ավելի էր արմատավորվում հայության նկատմամբ ռուսական «դրական իմպերիալիզմի» դրույթը: Հայկական հարցի ծանրության կենտրոնը օբյեկտիվորեն տեղափոխվում էր Ռուսաստան և նրա լուծումը կապվում էր նախկին կայսրության ներքին վերակառուցման հետ: Շարունակվող պատերազմը և գրավված Արևմտյան Հայաստանի ճակատագիրը պայմանավորում էին հայ իրականության, ազգային ուժերի սպասողական և անցնցում զարգացումների միտումը, ավելին, հեղափոխության առաջադրած բոլոր կենսական խնդիրների լուծումը ստորադասվում էր Հայկական հարցին, պատերազմի հաղթական ավարտին:

Միաժամանակ, Փետրվարյան հեղափոխությունն իր շուրջ ութամսյա գոյության և զարգացման ընթացքում հնարավորություն տվեց ձևավորելու և ամրապնդելու ազգային, դեմոկրատական այն կառույցները, որոնք հիմնականում կազմեցին 1918 թվականի պետականության հիմքը: Դրանք են՝ հայկական ազգային խորհուրդների, ազգային զորամասերի ձևավորման, նոր իրադրության մեջ կուսակցությունների կուտակած փորձի, Հայկական և ազգային հարցերի ազատ, հրապարակային քննարկման, անգամ Հայաստանի մանդատի գաղափարի ձևավորման, ցարիզմի բացակայության պայմաններում Անդրկովկասի ազգային ուժերի հակասությունների անթաքույց դրսևորումը ու դրան անպատրաստ գտնվելը և այլ խնդիրներ:

Փետրվարյան հեղափոխության ընձեռած նպաստավոր պայմաններում ձևավորվեցին հայկական ազգային երկու՝ Արևմտահայ և Արևելահայ խորհուրդները: Դրանց ստեղծման նախապատրաստական աշխատանքները հայ իրականության մեջ սկսվել էին դեռևս 1916թ. գարնանից՝ կապված պատերազմի պայմաններում Հայկական հարցի ակտիվացման, տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքը հայ գործիչների կողմից ղեկավարելու միտումների հետ: Ազգային խոր-

հուրդների հանդես գալը նպաստում էր ազգային ոգու զարթոնքին, ազգային համախմբմանը, որոնք, վերջին հաշվով, ազգային պետականության ձևավորման ու ազգային իդեալի շուրջ հայ ազգային, քաղաքական բոլոր հոսանքների ու կուսակցությունների համախմբման նպատակ էին հետապնդում: Ցարիզմի և միաժամանակ հայոց պետականության բացակայության իրականությունը, միանգամայն նոր, աննախադեպ կացություն էր առաջացրել, երբ առաջին անգամ հայ գործիչներին և քաղաքական ուժերին տրվում էր քիչ թե շատ ինքնուրույն գործելու հնարավորություն՝ իրենց դրական ու նաև աղետաբեր հետևանքներով: Հայկական ազգային խորհուրդների առաջնահերթ խնդիրն էր՝ շարունակվող պատերազմի պայմաններում ազգային կյանքը կազմակերպելն ու տնօրինելը: Այստեղ է, որ դրսևորվում է Ռուսաստանի ապագա դաշնային հանրապետության նոր ազգային վարչական կառուցվածքում հայկական կուսակցությունների քաղաքական մենաշնորհի և վերջին հաշվով իշխանության համար սկսված անզիջում պայքարը: Այն սկզբում ընթանալու էր ծրագրային հակասությունների և Սահմանադիր ժողովում մեծամասնության հասնելու նպատակի շուրջ: Դա թեև նորմալ քաղաքական պայքար էր, սակայն, ցավոք, պատմականորեն ձևավորված և հայությանը պարտադրված երևույթ էր. պայքարն ընթանում և գնալով խորանում էր հայության երկու հատվածները ներկայացնող ուժերի միջև: Այն ամբողջությամբ լեգալացվեց Փետրվարյան հեղափոխության ժամանակ՝ Արևմտահայ և Արևելահայ ազգային խորհուրդների ստեղծմամբ և իր աղետաբեր, համահայկական հետևանքներով դրսևորվեց Առաջին հանրապետության, ինչպես նաև հետագայում՝ Հայկական հարցի միջազգային արծարծումների ժամանակ. հայությունը միջազգային հանրությանը ներկայանում էր երկու պատվիրակություններով:

Հայկական ազգային զորամասերի ստեղծման գաղափարը հայ իրականության մեջ ծնվել էր Հայոց Ազգային բյուրոյի, ինչպես նաև 1916-1917թթ. միջկուսակցական խորհրդակցությունների քննարկումներում, ապա լայն աջակցություն էր ստացել Ժամանակավոր կառավարության կողմից: Հայ իրականության համար ազգային զորամասերի ստեղծումը նպատակ ուներ սեփական, վստահելի ուժերով դիմագրավել թուրքական հարձակումներին, պաշտպանվել քրդական զանգվածային բռնություններից:

Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությունը ազգային զորամասեր ստեղծելով՝ ելնում էր ռազմաճակատը պաշտպանելու և պատերազմը հաղթական ավարտին հասցնելու սկզբունքից: Կովկասյան ռազմաճակատում ռուսական իշխանությունները նման վստահելի ու կարգապահ զինուժ էին տեսնում հայկական զորամասերը: Ժամանակավոր կառավարության հուլիսյան ճգնաժամը և բոլշևիկների՝ ռուսական պետության շահերի դեմ ուղղված պատերազմից անհապաղ դուրս գալու կարգախոսներն ու գործելակերպը կազմալուծում էին նաև Կովկասյան բանակը: Այս հանգամանքը հրամայական էր դարձնում ազգային հայկական զորամասերի ստեղծումը, որպես Անդրկովկասում ժամանակավոր կառավարության վստահելի և, միաժամանակ, ընդդիմադիր ուժ՝ բոլշևիկացող Ռուսաստանին:

Հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում հայկական ազգային զորամասերը, հետո նաև Ազգային կորպուսը հանդիսացան հայ ժողովրդի գոյապահպանման, մայիսյան հերոսամարտերի ու ապա նաև Հայաստանի Հանրապետության ստեղծման հիմնական ռազմական միջոցն ու պաշտպանը:

Կարևորվում է նաև Արևմտյան Հայաստանի կարգավիճակի խնդիրը, և ոչ միայն Հայկական հարցի մասնակի լուծման հեռանկարի, այլև հատկապես Հոկտեմբերից հետո այս հարցում ռուսական երկու իշխանությունների քաղաքականության բևեռային տարբերության տեսանկյունից ելնելով:

Ռուսական ցարիզմի կողմից նվաճված Արևմտյան Հայաստանի նկատմամբ քաղաքականությունը գրեթե լիովին որդեգրեց Ժամանակավոր կառավարությունը՝ սկզբունք ընդունելով ռուսական պետության ազգային շահի հա-

ռատևությունը և շարունակականությունը: Առաջնորդվելով դեմոկրատական հեղափոխության հռչակած ազգերի ինքնորոշման բուրժուական կարգախոսով՝ նոր իշխանությունը փոխեց միայն հարցի արտաքին հանդերձանքը, այն է՝ զուտ ռազմականացված վարչակազմին փոխարինեց քաղաքացիական ձևը, կառավարմանը ներգրավվեցին հայ գործիչներ /Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության՝ քաղաքացիական մասի տեղակալ նշանակվեց դաշնակցական Հ.Զավրիյանը և այլն – *Վ. Մ.*/: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ժամանակավոր կառավարությունը, ելնելով իր պետական ազգային շահի սկզբունքից, կայսրության ազգային շրջաններին անկախություն չէր շնորհելու, այլապես ինչո՞վ էր արդարացվելու հաղթական պատերազմի գրավումների կարգախոսը, որ Ռուսաստանն էր մղում:

Այս ամենի հետ մեկտեղ Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության ստեղծումը վիթխարի առաջընթաց քայլ էր Հայկական հարցի լուծման ճանապարհին. նախ, Արևմտյան Հայաստանը ազատագրվում էր թուրքական լծից, կատարվում էր այն, ինչ 1828 թվականին Թուրքմենչայում: Տարբերությունն այն էր, որ պատերազմը դեռ չէր ավարտվել և Թուրքիայի հետ պայմանագիր չէր ստորագրվել: Ժամանակավոր կառավարությունը, դարձյալ ելնելով ռազմաճակատի ապահովության նկատառումներից, լայնորեն աջակցում էր արևմտահայ գաղթականության երկիր վերադառնալու քաղաքականությանը, այսինքն՝ խոսք չէր գնում Արևմտյան Հայաստանը հայաթափելու մասին: Պատերազմի հաջող ելքի դեպքում Արևմտյան Հայաստանը, ըստ երևույթին, առանձին կարգավիճակով կմիանար Ռուսաստանին և Ռուսաստանի խորհրդայնացումից հետո անգամ այն կմնար այդ պետության կազմում: Ասվածից հետևում է, որ հայոց պետության վերաստեղծումը մեծապես կապվում է ռուսական իրականության հետ, այն առումով, որ օբյեկտիվորեն միայն վերջինիս կազմում ստեղծվեցին բոլոր այն նախադրյալներն ու հիմքերը, որոնք թեև ոչ լիարժեք, այնուամենայնիվ, հնարավոր դարձրին Հայաստանի Հանրապետության ստեղծումը: Գոնե անվիճելի է այն իրողությունը, որ այդ պետությունը չստեղծվեց ո՛չ Թուրքիայի և ո՛չ էլ Իրանի կազմում: Ցայրահեղ դեպքում մենք կունենայինք երկատված, բայց կայացած Հայաստան, որի միավորումը, Գերմանիայի նման, լոկ ժամանակի խնդիր կդառնար:

Այս հավանական հեռանկարը ընդհատվեց Հոկտեմբերյան հեղաշրջմամբ: Պատմագրությունը սովորաբար նույն հարթության վրա է լուսաբանում Ռուսաստանի նոր իրադրության նկատմամբ Անդրկովկասի վերաբերմունքի հիմնահարցը: Մինչդեռ միանգամայն տարբեր է Կովկասի ազգային-քաղաքական ուժերի, ինչու չէ, նաև ազգերի դիրքորոշումը բոլշևիկյան հեղաշրջմանը: Այս հարցի պարզեցումը կարևորվում է հետագա ռազմաքաղաքական իրադարձությունների և Անդրկովկասի ներքին հակասությունների տեսանկյունից: Ստացվում է, որ վրացական ազգայնականությունը՝ ի դեմս մենշևիկների, այս իշխանափոխության մեջ տեսավ «ատելի» Ռուսաստանից անջատվելու վաղեմի երազանքի իրականացումը. Կովկասի թաթարների /ադրբեջանցիներ/ դիրքորոշումը ավելի քան պարզ էր: Պատերազմից դուրս եկած և տարածքային նվաճումներից հրաժարվող բոլշևիկյան Ռուսաստանը այլևս չէր սպառնում դարավոր հակառակորդ Թուրքիային, որն էլ իր հերթին այս հեղաշրջման մեջ տեսնում էր նախ և առաջ պանթուրքիզմի ծրագրերի իրագործման հնարավորություն: Ինչ վերաբերում է հայ իրականությանը և քաղաքական ուժերին, ապա վերջիններս կանգնեցին բարդ երկընտրանքի առջև. մի կողմից անհրաժեշտ էր շարունակել աջակցել Արևմտյան Հայաստանն ազատագրած Ռուսաստանին՝ շուրջ հարյուրամյա ռազմավարական դաշնակցին, մյուս կողմից՝ բարձրանում էր հայ իրականության ազդեցիկ ազգային-քաղաքական ուժի, դաշնակցության՝ բոլշևիզմի նկատմամբ անսքող ատելության և թշնամանքի հիմնահարցը: Այս հանգամանքը ՀՅԴ-ը մղեց դեպի Կովկասի ազգային ուժերի հետ դաշինքին՝ երկրորդ պլան մղելով թուրքական սպառնալիքը և Փետրվարյան հեղափոխության ժամանակ արդեն իսկ

դրսևորված Կովկասի ազգամիջյան, տարածքային հակասությունները: Անդրկովկասյան բազմաթիվ և տարաբնույթ համագումարներում, մասնավորապես Կովկասի ապագա ազգային վարչական բաժանումներին նվիրված խորհրդակցություններում, թերևս 1905-1907թթ. հայ-թաթարական ընդհարումներից հետո նոր մակարդակով դրսևորվեց վրացադրբեջանական դաշինքը՝ հայության ու այն ներկայացնող քաղաքական ուժերի դեմ: Դեռևս 1917թ. մայիսին վրացական մենշևիզմը ներկայացնող Ն.Ժորդանիան, խոսելով Արևմտյան Հայաստանի ապագայի մասին, նշում էր. «Քանի որ գրավված շրջանները վերադարձվելու էին Թուրքիային, հարկ չկա ավելորդ գումարներ ծախսել այդ երկրամասը կազմակերպելու համար»[1]: Դա այն մենշևիզմն էր, որ պատերազմի նախօրեին Գերմանիայի միջնորդությամբ գաղտնի պայմանագիր էր կնքել Թուրքիայի հետ՝ ընդդեմ Ռուսաստանի:

Ստեղծված քաղաքական իրավիճակում կա՞ր արդյոք այլընտրանք: Դա, իհարկե, բարդ քաղաքական և պատմագիտական խնդիր է, որ այդ իրադարձություններից ի վեր լուրջ մտորումների տեղիք է տալիս, պառակտում է նաև հայ հասարակությանը: Ամբողջ հարցն այն է, որ ժամանակի սկզբնաղբյուրային հենքի վրա անգամ չի հաջողվում ստանալ իրավիճակի լիարժեք պատկերը:

Հաճախ մենք՝ պատմաբաններս հետամուտ լինելով պատմագիտական նյութի մանրամասներին, հեռանում ենք տվյալ դեպքում Անդրկովկասի քաղաքական իրադարձություններին երանգ տվող համընդհանուր արտատարածաշրջանային անցուդարձից: Այդպիսիք են՝ նախ Ռուսաստանի խորհրդայնացման փաստը, երբ այդ ճանապարհով վերջինս փաստորեն զրկվեց պատերազմի հաղթական արդյունքներից, գերմանական իմպերիալիզմի և բոլշևիզմի գաղտնի

[1] Տես ЦГИАГ; Ф. 1839, оп 2, д. 9, л.54.

համաձայնությունը, սիոնիզմի գործոնը, դրա հետ կապված Անդրկովկասում խորհրդային իշխանության հաստատման և բոլշևիկյան ղեկավար գործիչների տարաձայնությունների խնդիրը, բոլշևիկների ու երիտթուրքերի ձևավորվող դաշինքը և այլն: Այս և նման հարակից հարցերն էլ հենց պայմանավորում էին խորհրդային Ռուսաստանի և Անդրկովկասի, հայ-թուրքական, հայ-վրացական, այդ բոլորի ու խորհրդային իշխանության բազմաշերտ փոխհարաբերությունները: Միայն այս ամենի նկատմամբ որոշակի մոտեցման և համակողմանի գիտական հետազոտման արդյունքում հնարավոր կլինի լուսաբանել մասնավորապես 1917-1918թթ. քաղաքական զարգացումները և Անդրկովկասի անկախացման գործընթացը:

Իրադարձությունների ծրագրավորված զարգացումը, վերջինիս առաջադրած անհուսալիության և դատապարտվածության գործոնը թերևս բխում էին Գերմանիա-երիտթուրքեր-բոլշևիկներ-սիոնիզմ ալյանսից, որտեղ բոլշևիկների «համաշխարհային հեղափոխության» համար և միջազգային իմպերիալիզմի դեմ պայքարի /պատերազմի սանձազերծող և Հայկական ցեղասպանության գլխավոր մեղսակից Գերմանիան բոլշևիկների համար այլևս իմպերիալիստ չէր համարվում. այստեղից էլ Բրեստ-Լիտովսկի կործանարար պայմանագիրը – Վ.Մ./ քաղաքականության լաբիրինթոսում էին խճճվել հայ ժողովուրդն ու նրա ազգային-դեմոկրատական կուսակցությունները:

Այլընտրանքի բացակայությունը տանում էր դեպի խորհրդային իշխանության նկատմամբ ատելության, դրա կարճատևության և արկածախնդրական մեկնակետին գերապատվություն տալուն: Դրանից է հիմնականում բխում դաշնակցության անցումը Անդրկովկասի ազգայնական, հակառուսական ուժերի և անգամ Թուրքիայի ճամբարը: Ցավոք, այլընտրանքի կիզակետը հենց Անդրկովկասի խորհրդայնացման խնդրի մեջ է: Հասկանալի է, որ խորհրդային կենտրոնական իշխանությունը դեմ չէր դրան և 1920-1921թթ. երկրամասի խորհրդայնացման փաստը ասվածի լավագույն

3393

ապացույցն է: Բոլշևիկ Ստ.Շահումյանի պայքարը Անդրկովկասի Կոմիսարիատի ու նաև դաշնակցության որոշ գործիչների դեմ /չմոռանանք, որ Շահումյանի հետ սերտորեն համագործակցում էին ՀՅԴ հիմնադիր Ռոստոմը, գեներալ Բագրատունին – Վ.Մ./ ոչ թե Անդրկովկասի խորհրդայնացման պարզունակ գաղափարի, այլ այդ ճանապարհով Արևմտյան Հայաստանի խնդիրը լուծելու, և ավելին, Անդրկովկասում հայկական տարրի գերիշխանության հաստատման խնդրի մեջ էր: Բաքվի խորհրդի իշխանության ղեկավարը 1917թ. նոյեմբերին առաջարկում էր դաշնակցական գործիչներին, որպեսզի իրեն և այդ ճանապարհով նաև բոլշևիկներին ենթարկվող կովկասյան բանակի զգալի մասի ու նաև դաշնակցության ազգային զորամասերի միջոցով գրավեն Թիֆլիսը, տապալեն Անդրկովկասյան Կոմիսարիատը, այլ խոսքով Անդրկովկասում վրացական մենշևիզմի հեգեմոնիան և խորհրդայնացման ճանապարհով թերևս միասին փրկեն հայ ժողովրդին բազում վտանգներից:

Շահումյանի հանդուգն և կենտրոնին չենթարկվող վարքագիծը գործնականում դատապարտվեց նախ Լենինի, Տրոցկու և Ստալինի կողմից: Ուշագրավ է, որ Բաքվի 26 կոմիսարների գնդակահարությունից հետո, մինչև իր կյանքի վերջը, շուրջ 7 տարի, Լենինը ոչ մի խոսք չի հրապարակել իր «լավագույն զինակից» Շահումյանի մասին:

1918թ. մարտին, թուրքական նոր արշավանքի պայմաններում, Դաշնակցությունը համագործակցեց Շահումյանի և Բաքվի կոմունայի հետ, սակայն ավելացել էր հայության հակառակորդների թիվը. թուրքերին, ադրբեջանցիներին, վրացիներին այժմ ավելացել էին նաև հակաբոլշևիկյան սոցիալիստական կուսակցությունները /էսեռներ, մենշևիկներ և այլն/, սպիտակ շարժումը, անգլիացիները:

Ինչ վերաբերում է Թուրքիայի քաղաքականությանը, ապա այն ստանալով Գերմանիայի լիարժեք աջակցությունը և խորհրդային իշխանության նկատմամբ ամրապնդելով իր «հակաիմպերիալիստական» և «կարմիր» կեցվածքը, լայնորեն

ձեռնամուխ եղավ նախ Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու, ապա և արևելահայության բնաջնջման քաղաքականության իրագործմանը: Միայն մայիսյան հերոսամարտերը կանգնեցրին այդ հրեշավոր ծրագիրը և ապահովեցին հայոց պետականության վերականգնումը:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի տնօրեն

1918 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐՈՒՄ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱԿՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

1918թ. հունվարին օգտվելով ռազմաճակատի կազմալուծումից թուրքական զորքերը Վեհիբ փաշայի հրամանատարությամբ խախտեցին Երզնկայի զինադադարը և անցան հակահարձակման: Ռուսական զորքը Արևմտյան Հայաստանում թողնելով ահռելի քանակությամբ զինամթերք արագորեն սկսեց հեռանալ: Մեծ զոհերի գնով գրաված հսկայածավալ Արևմտյան Հայաստանում թուրքերի դեմ մենմենակ հայտնվեցին հայ կամավորները: Վերջիններս տեղ-տեղ փորձեցին դիմադրություն կազմակերպել՝ Երզնկայում՝ Սեբաստացի Մուրադը, Բաբերդում՝ Սեպուհը, Քղիում՝ Թուրիկյանը: 1918թ. հունվարին Կովկասյան բանակի հրամանատարությունը Անդրանիկին շնորհեց գեներալի կոչում և նշանակեց ռազմաճակատի հրամանատար:

Անդրանիկը ժամանեց Ալեքսանդրապոլ, որտեղ ապարդյուն անցան կամավորներ հավաքագրելու նրա փորձերը: Ապա նա անցավ Կարս, փետրվարի 10-ին ժամանեց Էրզրում՝ փորձելով այն դարձնել ուժեղ ամրոց: Արյունալի մարտեր մղելով՝ բազմաթիվ գաղթականների հետ Մուրադը Երզնկայից

նահանջեց Դերջան, ապա՝ Էրզրում: Անարդյունք եղան նաև Քղիում թուրքերին և քրդերին կանգնեցնելու Թուրիկյանի ջանքերը:

Հայերի ռազմական անհաջողությունները պայմանավորված էին նաև միջազգային անբարենպաստ իրադրությամբ: Թուրքերի ճնշման տակ Անդրկովկասի վրաց և ադրբեջանական քաղաքական ուժերը երկրամասը Ռուսաստանից անջատելու նոր քայլ կատարեցին: 1918թ. փետրվարի 10-ին Թիֆլիսում գումարվեց Անդրկովկասյան սեյմը, ուր ներկայացված էին 32 մենշևիկներ, 30 մուսավաթականներ, 27 դաշնակցականներ և տասնյակ այլ կուսակցությունների ներկայացուցիչներ: Սեյմի նախագահ ընտրվեց Չխեիձեն: Սեյմը դարձավ Անդրկովկասի դաշնային հանրապետության իշխանության նոր մարմին՝ փոխարինելով կոմիսարիատին: Հայ դաշնակցականները՝ Հովհ. Քաջազնունին, Ալ. Խատիսյանը, Խ. Կարճիկյանը և ուրիշներ, դեմ լինելով Ռուսաստանից անջատվելուն, մտան սեյմի մեջ՝ թուրքերի դեմ միայնակ չմնալու համար: Մինչդեռ թուրքերը շարունակում էին անարգել առաջանալ: Նրանք փետրվարին գրավեցին Դերջանն ու Բաբերդը, մարտի սկզբին՝ Էրզրումը, որտեղից Անդրանիկը նահանջեց Կարս՝ չստանալով օգնական ուժ:

Այս ամենին գումարվեց Բրեստ-Լիտովսկում 1918թ. մարտի 3-ին խորհրդային Ռուսաստանի և գերմանաթուրքական բլոկի միջև կնքված չարաբաստիկ պայմանագիրը, որով բոլշևիկյան կառավարությունը հրաժարվում էր Արևմտյան Ուկրաինայից, Արևմտյան Բելոռուսիայից և Մերձբալթիկայից՝ հօգուտ Գերմանիայի և Արևմտյան Հայաստանից՝ հօգուտ Թուրքիայի: Ավելին, փաստորեն թուրքերին էր տրվում նաև Կարսի մարզը, որը 1878 թվականից Ռուսաստանի կազմում էր:

Անդրկովկասյան սեյմը չճանաչեց Բրեստ-Լիտովսկի թալանչիական պայմանագիրը և 1918թ. մարտին Տրապիզոնում առանձին բանակցություններ սկսեց թուրքերի հետ: Սեյմի պատվիրակության (նախագահ Ա. Չխենկելի) 12 անդամներից 7-ը մահմեդականներ էին: Ուստի շուտով դրսևորվեց վերջին-

ներիս թուրքամետ դիրքորոշումը: Ադրբեջանցի պատվիրակները, ընդառաջ գնալով իրենց թուրք եղբայրների թալանչիական պահանջներին, գտնում էին, որ պետք է ճանաչել Բրեստ-Լիտովսկու պայմանագրով նախատեսված հողերի անցումը Թուրքիային: Վրաց պատվիրակները թեև դեմ էին Արևմտյան Հայաստանի և Տրապիզոնի անցմանը Թուրքիային, սակայն իրականում ոչ մի լուրջ քայլ չէին կատարում թուրքերի առաջխաղացումը կասեցնելու ուղղությամբ: Պատահական չէ, որ վրացի գեներալ Օդիշելիձեի դավաճանության պատճառով և Չխենկելու հրամանով 1918թ. ապրիլի 11-12-ին, գրեթե առանց կռվի, թուրքերին հանձնվեց բավականին լավ ամրացած Կարսի բերդը: Բանակցությունները Տրապիզոնում արդյունք չտվեցին, և Սեյմի պատվիրակությունը վերադարձավ Թիֆլիս:

Ստեղծված իրադրության մեջ պարզ էր դառնում, որ թուրքերը չեն բավարարվելու Բրեստ-Լիտովսկով նախատեսված հողերի բռնագրավմամբ և ներխուժելու են նաև բուն Արևելյան Հայաստան՝ այն գրավելու և իրականացնելու հայ բնակչության ոչնչացումը: Այդ ժամանակ Երևանում հայրենիքի պաշտպանության գործն իր վրա վերցրեց 1915թ. Վանի հերոսամարտի ղեկավար Արամ Մանուկյանը, որը 1917թ. դեկտեմբերի վերջից գլխավորում էր Երևանի ազգային խորհուրդը: Շուտով Արամը ստացավ դիկտատորի լայն լիազորություններ՝ իր ձեռքը կենտրոնացնելով Արևելյան Հայաստանի ռազմական և վարչական իշխանությունը: Նա Երևան հրավիրեց մի շարք նշանավոր զինվորականների՝ Մ. Սիլիկյանին, Դ. Բեկ-Փիրումյանին, Դրոյին, Ն. Ղորղանյանին և այլոց: Արամը կարողացավ կարգ ու կանոն հաստատել Երևանի նահանգում, սանձել ավազակային խմբերը, կազմակերպել զինական ուժեր և ուղարկել ռազմաճակատ: Իրադրությունը Անդրկովկասում շարունակում էր ավելի վտանգավոր դառնալ: Թուրքերի ճնշման տակ սեյմը 1918թ. ապրիլի 9(22)-ին վրաց մենշևիկների և ադրբեջանցի մուսավաթականների ջանքերով ընդունեց որոշում Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու մասին: Սեյմի հայ պատվիրակությունը, որ դեմ էր այդ որոշմանը,

մնաց փոքրամասնություն: Երկրամասի անջատումը Ռուսաստանից ավելի անկաշկանդ դարձրեց թուրքերի նվաճողական ձեռնարկումները:

Անցնելով Ախուրյան գետը՝ թուրքական հորդաները մայիսի 15-ին ներխուժեցին Ալեքսանդրապոլ: Այստեղ ևս բավականաչափ ուժեր կային թշնամուն դիմադրելու համար: Սակայն սեյմի ղեկավարությունը կարգադրեց քաղաքը հանձնել թուրքերին: Ալեքսանդրապոլի զավթումից հետո թուրքական «Կարս» զորամիավորումը 4 ուղղություններով սկսեց առաջանալ Արևելյան Հայաստանի խորքերը: Թուրքերի 3-րդ և 4-րդ բանակային զորախմբերը հրաման էին ստացել Արարատյան դաշտով մտնել Երևան: Մայիսի 21-ին այդ զորախմբերը գրավեցին Սարդարապատ գյուղն ու կայարանը: Վտանգը կախվեց Էջմիածնի ու Երևանի վրա, որտեղ բազմահազար արևելահայերի հետ ծվարել էին հարյուր հազարավոր արևմտահայ գաղթականներ: Երևանի անկումը կնշանակեր թուրքերի ձեռնարկած 1915թ. ցեղասպանության ավարտ, հայ ժողովրդի իսպառ ոչնչացում:

Այս օրհասական ժամին խոսեց հայ ժողովրդի ինքնապաշտպանական բնազդը: Վերջ տրվեցին միջկուսակցական տարաձայնություններին, համախմբվեցին բոլոր ուժերը: Արամ Մանուկյանը գեներալ Թովմաս Նազարբեկյանին լիազորեց ստանձնելու հայկական զորքերի հրամանատարությունը: Վերջինս էլ գեներալ Մովսես Սիլիկյանին նշանակեց Երևանյան ուղղությունը պաշտպանող զորաջոկատի հրամանատար: Սարդարապատի շրջանում ռազմական գործողությունների անմիջական ղեկավար դարձավ արցախցի գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը: Վերջինիս ազգական Պողոս Բեկ-Փիրումյանը գլխավորեց կամավորներից կազմված «Մահապարտների գունդը»: Սարդարապատում հայկական զորքերի դեմ դուրս բերվեց թուրքական 15 հազարանոց զորաբանակ՝ Շևքի փաշայի հրամանատարությամբ:

Մայիսի 22-ին հայերն անցան հակահարձակման և հուժկու

հարվածով ոչնչացրին Ղամշլու (Եղեգնուտ) գյուղի շրջանում կենտրոնացած թուրքական ուժերը՝ ազատագրելով մեկ օր առաջ գրավված Սարդարապատը: Թուրքերը նահանջեցին և նոր դիրքեր բռնեցին Արաքս կայարանի շրջանում: Այս հաղթանակը ոգևորեց հայկական ուժերին: Տարբեր տեղերից սկսեցին ժամանել նորանոր ջոկատներ: Մարտիկների առջև ելույթ ունեցավ Մ. Սիլիկյանը՝ հիշեցնելով Ավարայրի հերոսներին, և որ նահանջել չի կարելի, քանզի թիկունքում Սուրբ Էջմիածինն է: Համանման ճառ արտասանեց նաև Թ. Նազարբեկյանը. «Մեր ապագան մեր ձեռքին է, կամ կհասնենք նրան պայքարով, կամ երբեք մենք և մեր սերունդները չեն տեսնի այն»:

Մինչև մայիսի 27-ը տևած արյունալի մարտերից հետո հայկական ուժերը թշնամուն ետ շպրտեցին մինչև Արաքս կայարանը: Ապարանի ուղղությամբ հայկական ուժերին շրջանցելու և թևերից հարվածելու թուրքերի 9-րդ դիվիզիայի ջանքերն անցան ապարդյուն: Դա տեղի ունեցավ շնորհիվ Բաշ-Ապարանի ուղղությամբ հայկական զորքերի հաջող գործողությունների: Բաշ-Ապարանի շրջանում աչքի ընկավ Դրաստամատ Կանայանը: Հերոսաբար զոհվեց հայտնի կամավորական Ջեմլյակը: Մայիսի 27-29-ի ընթացքում Բաշ-Ապարանի տակ թշնամին գլխովին ջախջախվեց և ետ շպրտվեց: Սարդարապատի և Բաշ-Ապարանի շրջանում կրած պարտությունների վրեժը թուրքերը փորձեցին հանել Մեծ Ղարաքիլիսայում: Այս ուղղությամբ թուրքերը ձգտում էին ճեղքել դիմադրությունը և դուրս գալ դեպի Թիֆլիս: Մեծ Ղարաքիլիսայի մարտերում Մայիսի 24-28-ին աչքի ընկան գնդապետներ Բեյ Մամիկոնյանը, Ն.Ղորղանյանը, Գ. Նժդեհը: Միայն մայիսի 30-ին մեծ կորուստների գնով թշնամին կարողացավ ներխուժել Ղարաքիլիսա: Այնուհանդերձ մայիսյան հերոսամարտերն ավարտվեցին թշնամու ջախջախմամբ: Տալով 3500 զոհ՝ թուրքերը նահանջեցին դեպի Ալեքսանդրապոլ: Մայիսյան հերոսամարտերում, որոնք հայոց պատմության ամենապայծառ էջերից են և հայ ժողովրդի

գոյատևման հզորագույն գրավականը, աչքի ընկան նաև հեծյալ ջոկատի հրամանատար Հովհ. Բաղրամյանը, կապիտան Դոլուխանյանը, գրող Ա. Բակունցը, լեզվաբան Գր. Ղափանցյանը, ռուս զինվորականներ Պերեկրեստովը, Սիլինը, հույն Սակելարին, բազմաթիվ հոգևորականներ՝ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի գլխավորությամբ և ուրիշներ:

Մայիսի 26-ին սեյմի վրաց մենշևիկյան խմբակցությունը հանդես եկավ սեյմը լուծարելու և վրացական անկախ պետություն հռչակելու հայտարարությամբ: Սեյմը ցրելու առաջարկությունը պաշտպանեցին մուսավաթականները, որոնք էլ մայիսի 27-ին հռչակեցին իրենց պետականության ստեղծումը՝ Գյանջա (Գանձակ) մայրաքաղաքով (Բաքուն այդ ժամանակ գտնվում էր սովետների ձեռքին՝ Ստ. Շահումյանի գլխավորությամբ): Սեյմի փլուզումից վերջնականապես պարզ դարձավ, որ հայերը մեն-մենակ են մնում թուրքական ագրեսիայի առջև: Վրացիները ստացան Գերմանիայի, իսկ ադրբեջանցիները՝ Թուրքիայի աջակցությունը: Սեյմի հայ պատվիրակները բողոք ներկայացրեցին Վրաստանի նորակազմ կառավարության նախագահ Նոյ Ժորդանիային: Վերջինս ցինիկորեն պատասխանեց. «Դուք՝ հայերդ խեղդվում եք, մենք պարտավոր չենք ձեզ հետ խեղդվել»:

Մայիսի 28-ին Ազգային խորհուրդն ընդունեց որոշում անկախ պետություն ստեղծելու մասին: Ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը հրապարակեց Նիկոլ Աղբալյանի ձեռքով գրված Հայաստանի անկախության հռչակագիրը, որը տպագրվեց մայիսի 30-ին: Նրանում մասնավորապես ասվում էր. «Ի նկատի ունենալով, որ Վրաստանի և Ադրբեջանի անկախության հռչակումով լուծարվում է Անդրկովկասյան դաշնակցությունը, Հայոց ազգային խորհուրդը ժամանակավորապես իր վրա է վերցնում կառավարման ֆունկցիաները հայկական գավառների նկատմամբ»: Հունիսի 1-ին նոր հայտարարությամբ Ազգային խորհուրդը իրեն հռչակում էր հայկական բոլոր հողերի միակ իշխանություն: Այսպես՝ 1045թ. մայր հայրենիքում և 1375թ.

Կիլիկիայում պետականությունը կորցնելուց հետո հայ ժողովուրդը վերականգնեց իր անկախությունը:

Նորաստեղծ պետականությունը փրկելու համար անհրաժեշտ էր միջպետական հարաբերություններ հաստատել դարավոր թշնամու՝ Թուրքիայի հետ: Այդ նպատակով, հետևելով Անդրկովկասյան հարևան երկու նորաստեղծ պետությունների օրինակին, ժամանակավոր կառավարության ֆունկցիաներ իրականացնող Ազգային խորհուրդն իր պատվիրակությունն ուղարկեց Բաքում, որտեղ ընթանում էին մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից՝ անդրկովկասյան հանրապետությունների բանակցությունները: Հայկական կողմը ներկայացրեցին Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջազնունին: Սկզբում թուրքական պատվիրակությունը չէր ուզում բանակցել հայերի հետ: Սակայն, հավանաբար տեղեկանալով Սարդարապատում կրած իրենց զորքերի անհաջողություններին, հաշվի նստեց նաև հայերի հետ: Հունիսի 4-ին Բաքումում հաշտություն կնքվեց Թուրքիայի և առանձին-առանձին՝ անդրկովկասյան հանրապետությունների միջև: Թուրքիան ճանաչում էր Հայաստանի Հանրապետության անկախությունը: Սակայն հայերին այդ անկախությունը տրվում էր չափազանց թանկ գնով: Բաթումի պայմանագիրն ավելի ծանր էր, քան Բրեստ-Լիտովսկի հաշտությունը: Հայաստանը հրաժարվում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանից ու Կարսի մարզից, այլև Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններից՝ Ալեքսանդրապոլի և Համամլուի (Սպիտակ) գավառներից, Երևանի ու Էջմիածնի գավառների մի մասից, Շարուր-Դարալագյազի 1/5-րդից, Ալեքսանդրապոլ-Նախիջևան երկաթուղուց (բացի Երևան-Մասիս 6 վերստանոց հատվածից): Հայաստանում տեղակայվելու էին թուրքական կայազորներ: Թուրքերը իրավունք էին ստանում Հայաստանով զորք տեղափոխել Բաքու, որտեղից պետք է դուրս բերվեին Կոմունան պաշտպանող հայկական ուժերը: Եվ վերջապես Հայաստանը պարտավորվում էր իր տարածքում զինաթափել հակաթուրքական ավազակային զորաջոկատները: Վերջինիս անվան տակ թուրքերը

նկատի ունեին հատկապես Անդրանիկի ջոկատը: Այս հանգամանքը դժգոհություն առաջացրեց Անդրանիկի մոտ, և նա հեռացավ Զանգեզուր:

Այսպիսի ծանր պայմաններում 12 հազ. քառ. կմ-ի վրա ծնվեց հանրապետությունը, որը, սակայն, աստիճանաբար ամրապնդվեց և ուժեղացավ:

1918թ. մայիսի 28-ին հանրապետության հռչակումից հետո առաջնահերթ խնդիրներից մեկը իշխանության մարմինների ստեղծումն էր: Սկզբում իշխանության ժամանակավոր գործառույթներն իրականացնում էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որը, թուրքերի կողմից ճանապարհներին հարուցած արգելքների պատճառով (երկաթուղին թուրքերի ձեռքին էր), ինչպես և այլ հանգամանքների բերումով, չէր կարողանում Վրաստանից տեղափոխվել Երևան: Հայաստանում իշխանության ղեկը շարունակում էր մնալ Երևանի ազգային խորհրդի ձեռքում՝ Արամ Մանուկյանի ղեկավարությամբ: Վերջինս հսկայական գործ կատարեց Երևանում պետականության հռչակումը նախապատրաստելու և նորաստեղծ պետությունն ամրապնդելու ուղղությամբ: Պատահական չէ, որ Արամը իրավամբ համարվում է հայոց պետականության վերականգնման հեղինակը: Նրա ղեկավարած Հատուկ կոմիտեն մինչև հուլիսի կեսերը՝ Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ժամանումը Երևան, Հայաստանում իրականացրեց ժամանակավոր կառավարության գործառույթները:

1918թ. հուլիսի 19-ին Ազգային խորհուրդը վերջապես ժամանեց Երևան: Ազգային խորհուրդների (Թիֆլիսի, Երևանի) և քաղաքական կուսակցությունների համաձայնությամբ կազմվեց իշխանության բարձրագույն մարմին՝ Հայաստանի խորհուրդ (պառլամենտ, խորհրդարան), որի մեջ մտան ազգային խորհուրդների, տարբեր կուսակցությունների, անկուսակցականների, ազգային փոքրամասնությունների (եզդիներ, ռուսներ, մահմեդականներ) ներկայացուցիչներ, ընդամենը՝ 46 հոգի (18-ը՝ դաշնակցականներ): Հուլիսի 24-ին հրապարակվեց կառավարության կազմը. վարչապետ՝

ճարտարապետ Հովհ. Քաջազնունի (1868-1937), ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան (1879-1919), արտգործնախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ֆինանսների նախարար՝ Խաչատուր Կարճիկյան, զինվորական նախարար՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան և արդարադատության նախարար՝ Գրիգոր Տեր-Պետրոսյան:

Օգոստոսի 1-ին Երևանում հանդիսավորությամբ բացվեց հայոց առաջին պառլամենտի՝ խորհրդի (խորհրդարանի) առաջին նստաշրջանը: Խորհրդի նախագահ ընտրվեց Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ): Նստաշրջանը որոշում ընդունեց երկիրը ծանրագույն վիճակից դուրս բերելու ուղղությամբ շուտափույթ քայլեր ձեռնարկելու մասին: Մինչև հիմնական օրենքի՝ սահմանադրության ընդունումը, որոշվեց ժամանակավորապես առաջնորդվել ցարական Ռուսաստանի «Հավաք օրինաց» (օրենքների ժողովածու) օրենքների ժողովածուով: Մինչև տարեվերջ բարելավվեց դատական գործը: Ստեղծվեց երդվյալ ատենակալների դատարան: 1919թ. դեկտեմբերի 26-ին խորհրդարանն ընդունեց մի կարևոր որոշում՝ հայոց լեզուն պետական ճանաչելու մասին: Գործավարությունը բոլոր հիմնարկներում այսուհետև կատարվելու էր հայերենով: Ընդունվեց պետական դրոշը՝ եռագույնը, որը պետք է բարձրացվեր պետական, կառավարական հիմնարկների վրա: Եռագույնի կարմիրը խորհրդանշում էր հայ ժողովրդի թափած արյունը, երկնագույնը՝ ազատագրված հայրենիքի բաց երկինքը, նարնջագույնը՝ աշխատանքը (հողի գույնը): Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի և նկարիչ Հակոբ Կոջոյանի ներկայացրած հանրապետության զինանշանը՝ դրոշակի օրինակով ընդունվեց ժամանակավորապես: Զինանշանի վրա երկու Մասիսների շուրջ հին հայկական արքայատոհմերի (Արտաշեսյան, Արշակունյաց, Բագրատունյաց և Ռուբինյան) զինանշաններն էին, աջ և ձախ կողմերում արծվի և առյուծի պատկերներ էին, ներքևում՝ սուրը, գրիչը, հասկերը: Հանրապետությունում իբրև պետական հիմն գործածվում էր «Մեր հայրենիքը»: Սահմանվեցին շքանշաններ,

տոներ: «Հայրենիքին ծառայության համար», «Վարդան զորավար» և այլ շքանշաններ ունենալու մասին որոշումներ ընդունվեցին:

Հանրապետության կառավարությունը մեծ ուշադրություն դարձրեց բանակի ամրապնդման հարցին: Հին բանակը, որի կորիզը հայկական կորպուսն էր, այլևս չէր համապատասխանում ժամանակի ոգուն, ուստի կազմացրվեց և նոր՝ 20-25 տարեկանների զորահավաքի հիման վրա կազմվեց հայկական դիվիզիան՝ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ: Մինչև 1920թ. բանակի թիվը 10 գնդերում հասավ 25 հազարի: Սևանում հիմք դրվեց ռազմական նավատորմին, որի առաջնեկը դարձավ «Աշոտ Երկաթ» ռազմանավը:

Հանրապետությունում մեծ թիվ կազմող արևմտահայ գաղթականությունը դժգոհ էր, որ իրենց հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը դուրս է մնացել կառավարության ուշադրությունից: 1918թ. հոկտեմբերի վերջին համաշխարհային պատերազմում Անտանտի երկրներից Թուրքիայի կրած պարտության լուրը ոգևորություն առաջացրեց հայերի շրջանում: 1919թ. փետրվարին Երևանում կայացավ արևմտահայ գաղթականների համագումար, որն առաջ քաշեց «Միացյալ Հայաստանի» ստեղծման գաղափարը: Համագումարը գտնում էր, որ այս հանրապետությունը պետք է կոչել Արարատյան հանրապետություն, իսկ Հայաստանի Հանրապետությունն այն է, որը ներառում էր նաև Արևմտյան Հայաստանը: Ի կենսագործումն այդ պատմական խնդրի՝ միացյալ Հայաստանի ստեղծման, անկախության տարեդարձի օրը՝ մայիսի 28-ին կառավարությունը, որն արդեն գլխավորում էր Ալ. Խատիսյանը, Հայաստանը հռչակեց «Միացյալ, ազատ հանրապետություն»: Դրանով կառավարությունն իրեն համարում էր նաև Արևմտյան Հայաստանի տերը և Հայաստանը հռչակվում էր միասնական պետություն:

1919թ. հունիսի վերջին անցկացվեցին ընտրություններ՝ 366 հազ. ընտրողների, քաղաքական 7 կուսակցությունների մասնակցությամբ: Խորհրդարանի 80 անդամներից 72-ը դաշնակցականներ էին: 1919թ. օգոստոսի 1-ին բացվեց նորընտիր խորհրդարանը, որը հաստատեց նոր կառավարության կազմը վարչապետ Ալ. Խատիսյանի ղեկավարությամբ:

Հանրապետության ամրապնդման գործընթացը շարունակվեց: Հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ ինչպես հարևան, այնպես էլ հեռավոր երկրների հետ: 1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սևր քաղաքում համաշխարհային պատերազմում հաղթանակած Անտանտի երկրների և պարտված Օսմանյան Թուրքիայի միջև կնքված դաշնագրով Հայաստանի Հանրապետությանը պետք է միացվեր շուրջ 90 հազ. քառ. կմ տարածք Արևմտյան Հայաստանի Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգներից, որով հայոց պետության տարածքը կազմելու էր մոտավորապես 160 հազ. քառ կմ:

Սակայն խորհրդա-քեմալական համագործակցության հետևանքով այս ծրագիրը ի չիք դարձավ: 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմի և դեկտեմբերի 2-ին խորհրդայնացման հետևանքով կործանվեց Հայաստանի Առաջին հանրապետությունը: Պետականության մոտ երկուսուկես տարվա կարճատև ընթացքում հայ ժողովուրդն ունեցավ լուրջ առաջընթաց: Երկարատև ընդմիջումից հետո վերականգնվեց հայոց պետականությունը, սկսվեց հայրենադարձություն, ստեղծվեցին իշխանության մարմիններ, բավականին ուժեղ բանակ, հաստատվեց ժամանակի համար կառավարման ժողովրդավարական համակարգ, մարդկանց մեջ վերականգնվեց պետականության զգացումն ու զգացողությունը: Թեև ընկավ հանրապետությունը, սակայն նրա գոյությունն անհետևանք չմնաց: Նրա հիմքի վրա բոլշևիկները պարտավորված ստեղծեցին նոր հանրապետություն՝ Խորհրդային Հայաստանը, որի 70-ամյա պատմության ընթացքում հայ ժողովուրդն ապրեց տնտեսական ու մշակութային մեծ վերելք: Փաստորեն առաջին հանրապետության հենքի վրա, թեև վարչաքաղաքական միայնգամայն այլ համակարգի պայմաններում ստեղծված խորհրդային Հայաստանն էլ հող նախապատրաստեց երրորդ,

անկախ հանրապետության ձևավորման համար: Այս է 80 - ամյա հեռավորությունից 1918 թ. մայիսյան հերոսամարտերի ու անկախ պետականության հռչակման պատմական մեծ խորհուրդը:

ՌՈՒԴԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՄԻ ՆՈՐ ԷՋ՝ ՍՈԳՅՈՒԹԼՈՒԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ

Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի 1918 թվականի մայիսյան հերոսամարտերը ցույց տվեցին հայոց ազգի ուժն ու միասնությունը և թուրքերին ստիպեցին ճանաչելու Հայաստանի ազգային անկախությունը: 20-րդ դարի տարեգրության առաջին էջերում հայոց պատմության մեջ հավերժ սրբացան Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա անունները:

Բայց արդյո՞ք միայն այս երեքն են եղել...

Ավելի քան 170 տարի առաջ մեր նախնիները, գաղթելով Արևմտյան Հայաստանից՝ Ալաշկերտից, Մուշից, Վանից, հաստատվեցին Արագածի լանջին գտնվող Սոգյուլու գյուղում, որի նախկին բնակիչները ասպատակիչների կողմից սրի էին քաշվել: Նրանք եկան ապացուցելու, որ իրենք ոչ թե նույն բախտին կարժանան, այլ վրեժխնդիր կլինեն իրենց եղբայրների համար:

1918 թ. մայիսի 15-ի երեկոյան թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը: Ճանապարհն արդեն բաց էր գրավելու այն, որը դեռ մնացել էր Արևելյան Հայաստանից: Արևմտահայաստանից շատ փախստականների, ինչպես նաև Ալեքսանդրապոլի շրջանին հարող գյուղերի ազգաբնակչության համար կոտորածից փրկվելու միակ ելքը Արագածի լանջով դեպի էջմիածին ու Երևան անցնելն էր: Արագածի հարավարևմտյան

լանջով հիմնական ճանապարհն անցնում էր Սոգյուլիով (Սառնաղբյուր): Ահա այստեղ էլ 1918 թ. մայիսի 16-ից 22-ը ներառյալ տեղի է ունեցել հաղթական գոյամարտ թուրքերի դեմ, որի շնորհիվ բազմահազար հայեր փրկվեցին վերահաս կոտորածից:

Այս հերոսամարտի վերաբերյալ ուղղակի տեղեկություններ, փաստաթղթեր մեզ շատ քիչ են հասել: Այն տեղի է ունեցել արևմտահայ ազգային գործիչների և գյուղի բնակիչների նախաձեռնությամբ: Այդ խառը ժամանակներում ոչ ոք չի գրառել ճակատամարտի մասնակիցների անմիջական վկայությունները (համենայն դեպս այդպիսի գրառում չի պահպանվել): Այդ պատճառներով էլ Սոգյուլիի հերոսամարտը դուրս էր մնացել մեր պատմաբանների տեսադաշտից: Հանգուցյալ եղբորս՝ Լենրիկ Գևորգյանի սիրելի ընկերներից մեկին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանին պատմում էի, որ ըստ ինձ հասած տեղեկությունների, գյուղի դիմադրության մասին պետական արխիվներում փաստական նյութեր չկան: Ակադեմիկոսն ասաց, որ ինձ հասած տեղեկություններն այնքան էլ ճիշտ չեն, որ կան որոշ արխիվային նյութեր գյուղի քաջազունների վերաբերյալ, և որ պետք է որոնումները շարունակել: Հայաստանի պատմության պետական կենտրոնական արխիվի տնօրեն Սոնյա Միրզոյանի օգնությամբ սկսեցի ուսումնասիրել 1918թ. թուրքերին դիմադրելու հետ կապված արխիվային փաստաթղթերը: Վերջերս ՀՀ պաշտպանության նախարարության «Հայկական բանակ» գիտական հանդեսում արխիվային հիմնավոր փաստաթղթերի առկայությամբ տպագրվեց իմ կողմից գրված «1918 թվականի մայիսյան հերոսամարտերի մի նոր էջ» խորագրով հոդվածը /ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական հանդես «Հայկական բանակ» 2 /36/ 2003/, որի նյութերը հիմք ընդունելով, որոշ մանրամասնությամբ ներկայացվում է գիտաժողովի մասնակիցներին: /Ի դեպ, հանդեսը թարգմանվում է աշխարհի տարբեր լեզուներով և տրվում է ինչպես ՆԱՏՕ-ի, այնպես էլ ԱՄՆ-ի, Չինաստանի,

Ճապոնիայի և այլ պետությունների պաշտպանության նախարարություններին/:

Այն, ինչ ներկայացնում եմ գիտաժողովի մասնակիցներին, մասնավորապես ճակատամարտի կոնկրետ հանգամանքները, հիմնված է գլխավորապես հորս պատմածների վրա: Հայրս՝ Եղիշը, եղել է Սոգյութլուի ճակատամարտի ոչ միայն մասնակիցը, այլև կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը: Նրա հաղորդած տեղեկությունները ես համարում եմ լիովին հավաստի: Ընդ որում դրանք հետագայում հաստատվեցին այլ աղբյուրներից ստացված տվյալներով:

Սոգյութլու գյուղում կուտակվել էին տասնյակ հազարավոր փախստականներ: Ոչ միայն գյուղի փողոցներով (այն Հայաստանի մեծ բնակավայրերից մեկն էր), այլև արտերով, դաշտերով անցնելն անհնարին էր. մի քանի կիլոմետր հեռավորության վրա, սարերի լանջերին երևում էր մի հոծ բազմություն: Սակայն այս զանգվածը գրեթե զուրկ էր պաշտպանությունից: Ահա թե ինչ է գրում մեծ զորավար Հովհաննես Բաղրամյանը «Իմ հիշողությունները» գրքում. «Արփաչայ գետի ձախ ափին՝ Ղազարապատ (Իսահակյան) գյուղի մոտ, այդ ուժերի դեմ (խոսքը թուրքական ուժերի մասին է.–Ռ.Գ.) մինչև Ալագյազ երկաթուղային կայարան՝ ճակատով դեպի արևմուտք պաշտպանվում էր Ալագյազի ջոկատը: Այդ ջոկատի մեջ մտնող հայկական առաջին և երկրորդ հետևակային բրիգադների գնդերը խիստ սակավաթիվ էին. իրենց կազմում ունեին ընդամենը 300-400 զինվոր և սպա: Մեր առաջին հատուկ հայկական հեծելազորային գունդը (մինչև 300 թուր) ծածկապաշտպանում էր մեծ քանակությամբ փախստականների տարահանումը Արարատյան դաշտավայր: Բոլոր ճանապարհները բառացիորեն ողողված էին մարդկանցով, սայլերով, անասուններով»[1]: Հրամայական պահանջ էր դարձել ոչ միայն

[1] **И. Х. Баграмян.** Мои воспоминания. Е., 1979, с. 77.

Ալեքսանդրապոլից 22 կմ հեռավորության վրա գտնվող Սոգյութլու գյուղի բնակչության, այլև փախստականների վիթխարի բազմության արագ տարահանումը մինչև թուրքերի հայտնվելը: Պետք էր շտապ կազմակերպական միջոցներ ձեռնարկել: Եվ կազմակերպվեց դիմադրություն, որը պատահական չէր այս գյուղի համար. այն օրինաչափ երևույթ էր:

1870թ. հիմնված գյուղի դպրոցը տասնյակ տարիների ընթացքում իր որոշիչ դերն է ունեցել մարդկանց մտավոր և բարոյական զարգացման մեծ ու շնորհակալ գործում, և պատահական չէր, որ բանիմաց մարդկանց շնորհիվ գյուղն ավելի ու ավելի էր զարգանում, մեծ հեղինակություն վաստակում Շիրակի դաշտում: Իսկ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում գյուղի հասուն շատ երիտասարդներ քաղաքական տարբեր համոզմունքների տեր էին դարձել: Ահա թե ինչու այս հողահատվածում կայուն հայացքների տեր հայրենասեր մարդիկ, մի կողմ դնելով իրենց քաղաքական հայացքների տարբերությունները, որոշեցին հանուն հայոց հողի և ազգային արժանապատվության գոյամարտել մեր ժողովրդի դարավոր թշնամու դեմ:

Գյուղի «Հովեյ» օդայում հավաքվեցին տարիքավոր, կյանքի մեծ փորձ ու հեղինակություն ունեցող մարդիկ, այդ թվում՝ զինվորական գործից հասկացող, համաշխարհային պատերազմին մասնակցած սպաներ Նիոյի Սարգիսը (Գեորգիևյան Խաչի կրկնակի շքանշանակիր), Աթաշի Եղիշը (հայրս), Խչոյի Սերոբը, շարքայիններ Մնեյի Սմբատը, Հարութի Մարալովը, Կարոյի Տոնոն, Կարոյի Հարութը, Նիոյի Նահապետը, Շարաֆի Բարսեղը, Քոչոյի Թորոսը, Քոչոյի Հարությունը և ուրիշներ: Ճակատագրական պահին սխալվելը՝ մահ էր: Անհրաժեշտ էր ամեն մի մանրուք հաշվի առնել, ուշիուշով լսել բոլորի կարծիքը: Ընդունվեց ճիշտ, բազմակողմանի մշակված, առանց չափազանցության, հրաշալի որոշում: Հարցի համակողմանի և մանրամասն քննարկումը տևեց մինչև լուսաբաց:

Ըստ որոշման՝ նախ կազմակերպվեց կռվելու ոչ ունակ բնակիչների ու փախստականների տարահանումը դեպի

էջմիածին ու Երևան: Նրանք բաժանվեցին խմբերի, նշանակվեցին խմբերի ղեկավարներ, կցվեցին մի քանի զինված մարդիկ: Կցվեցին նաև կապավորներ, որոնք, երբ տարահանվածները մոտենային էջմիածնին, պետք է այդ մասին լուր բերեին գյուղ: Դրանից հետո կազմակերպվեց գյուղի պաշտպանությունը:

Իհարկե, գյուղի երիտասարդությունը՝ հատկապես պատերազմից վերադարձածներից շատերը, ինչպես նաև փախստականների մի մասը զինված էին, սակայն դա թուրքերի կանոնավոր բանակին դիմակայելու համար բնավ էլ բավարար չէր: Լեռներում պատսպարվելը կնշանակեր թուրքերի յաթաղանի ճարակ դարձնել գյուղում մնացած մարդկանց՝ հիմնականում գաղթական, հիվանդ կանանց, երեխաներին և ծերերին: Կռվով նահանջել մինչև էջմիածին- Երևան, նույնպես վտանգի տակ կդներ բնակչությանը: Կարճ ժամանակում զենք հայթայթելը շատ դժվար էր: Պետք էր ժամանակ շահել, պետք էր թուրքերին վախեցնել, խուճապի մատնել, որ նրանք ընկրկեին, խուսափեին գյուղ մտնելուց: Որոշվեց գրավել պաշտպանական դիրքեր Գունի կոչվող սարից մինչև Տաշխալա (Քարաբերդ), շուրջ 14 կմ երկարությամբ: Նախատեսվեց որոշ հատվածներում պաշտպանների թիվը եռապատկել: Ինքնապաշտպանությունը պետք է տևեր այնքան ժամանակ, մինչև որ կապավորները լուր բերեին տարահանվածների տեղ հասնելու մասին: Հակառակ դեպքում պետք կլիներ մինչև վերջին փամփուշտը կրակելուց հետո դաշույններով, կացիններով, եղաններով հարձակվել թուրքերի վրա: Մի հատուկ խումբ առանձնացվեց զենք ու զինամթերք ձեռք բերելու համար: Թուրքերին հանկարծակիի բերելու, նրանց ապակողմնորոշելու նպատակով որոշվեց բնակիչների թվից քաջ և անվախ կանանց ևս թողնել գյուղում. իբր թե նրանք զբաղվում են իրենց տնտեսությամբ: Այդպիսի պատրանք ստեղծելու նպատակով գյուղում թողնվեց նաև առանց այն էլ սակավաթիվ անասունների մի մասը: Ըստ որոշման՝ գյուղում մնացածները թուրքերին պետք է ընդունեին առանց

դիմադրության և անհրաժեշտության դեպքում գիշերելու տեղ տային:

Մայիսի 16-ին գյուղ մտավ մի փոքր թուրքական ջոկատ՝ Ալլա փաշայի գլխավորությամբ: Գյուղացիները նրանց տեղավորեցին «Հովեյ» օդայում, իսկ փաշային՝ «Հովեյ» օթախում: Գիշերը դիրքերից գյուղ իջան Հարութի Մարալովը, Նոյի Սարգիսը, Մնեյի Սմբատը և մի քանի այլ զինված տղաներ: Հարութի Մարալովը սպանեց փաշային, մյուսները հարձակվեցին ասկյարների վրա, կանանցից Գրիգորյան Նուբարը (վանեցի) կացնով սպանեց երկու թուրքի: Թուրքերից մի քանիսը փախան՝ իրենց պարտության լուրը հասցնելով Ալեքսանդրապոլ (իհարկե սա էլ էր նախատեսված գյուղի պաշտպանների կողմից): Մայիսի 17-ին 50 ասկյարներից բաղկացած մի խումբ ուղարկվեց գյուղ՝ բոլորին սրի քաշելու և գյուղը այրելու հանձնարարությամբ: Զինված հայերն ըստ պատշաճի «դիմավորեցին» թուրքերին. բոլորին ոչնչացրին: Թուրքերի խմբի ղեկավարի կտրված գլուխը կապեցին ձիու թամբին և ձին քշեցին դեպի Մոլագյոքչա (Մարալիկ), որտեղ թուրքերն էին: Կայծակնային արագությամբ Սոգյութլուի դեպքի մասին լուրը տարածվեց Ալեքսանդրապոլի գավառի մոտակա գյուղերում: Այդ գյուղերի բնակիչներն էլ մտածելով, որ թուրքերը իրենց վրա էլ կհարձակվեն և սրի կքաշեն, ով ինչպես կարողանում է, իրեն գցում է Սոգյութլու: Մի գիշերվա մեջ գյուղի տարածքը լցվում է նոր փախստականներով:

Նախապատրաստվելուց հետո կանոնավոր զորաբանակով թուրքերը շարժվում են դեպի Սոգյութլու ոչ թե Մոլագյոքչայի, այլ Շիրվանջուղի (Լեռնակերտ) ուղղությամբ: Ինքնապաշտպանությանը վերաբերող բոլոր մտահաղացումները իրականանում են: Այդպես էլ գիտեին, որ նրանք հարձակման ուղղությունը կփոխեն: Քաջակորով պաշտպանները Նոյի Սարգսի, Աթաշի Եղիշի, Խչոյի Սերոբի, Հարութի Մարալովի, Շարաֆի Բարսեղի և պատերազմի փորձության ճանապարհն անցած այլ մարդկանց ղեկավարությամբ, ըստ ծրագրվածի, վաշտեր կազմած, թեժ մարտի բռնվեցին Սոգյութլուին և

Շիրվանջուղին հարող սարի ամբողջ երկարությամբ:

Այն, ինչ տեղի ունեցավ մայիսի 18-ից 22-ը, վեր է ամեն տեսակի երևակայությունից: Թշնամու նկատմամբ խոր ատելությունը, նրան մինչև վերջ դիմադրելու վճռականությունը տվեցին իրենց արդյունքը: Հանդիպելով կրակի անառիկ պատնեշի՝ թշնամին ամեն անգամ նահանջում էր՝ տալով մեծ կորուստներ: Մերոնք կարողացան նաև թուրքերի մեջ կեղծ լուր տարածել, թե իբր Երևանից անգլիացիների կողմից օգնություն է եկել:

Հիշարժան է հետևյալ դեպքը: Ըստ գրող Վահան Թոթովենցի վկայության՝ 1918 թ. փետրվարի 14-ին զորավար Անդրանիկը Թիֆլիսի կայարանում տեղի ունեցած հանրահավաքում զինվորների միջից դուրս հանելով 14-ամյա մի կամավորի և նստեցնելով զինվորների ուսերին՝ բացականչում է. «Երբ այս ցեղը կրնա այսպես մանուկներ ղրկել դեպի ճակատ, վստահ եղեք, որ մեր ազատությունը մոտ է»[2]: Իսկ Սոգյուլուի պաշտպանների շարքերում կային 14-15 տարեկան բազմաթիվ տղաներ...

Արժանին պետք է հատուցել այն բոլոր կանանց, որոնք գյուղից չհեռացան և թև ու թիկունք դարձան իրենց ամուսիններին: Գյուղացիներն այսօր էլ մեծ ակնածանքով ու հարգանքով են խոսում արծվասիրտ կանանց՝ Ղուրշուդյան Զեյրանի (Զեյրո), Սարգսյան Թարգուլի, Ենոյի Վարսիկի, Հովեյի Նոյեմի, Մալխասի Շուշիկի մասին (ինձ բախտ է վիճակվել նրանցից մի քանիսին տեսնելու):

Հրաշքներ են պատմում Գրիգորյան Նուբարի մասին: Գյուղացիները նրան ուղղակի վանեցի էին ասում, որովհետև գաղթել էր Վանից: Ծնվել էր 1883 թվականին Վանի Արճեշ քաղաքում: Վանի ջարդերի ժամանակ Նուբարի աչքի առաջ

[2] Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Ժողովրդական հերոս Անդրանիկ, Ե., 1990, էջ 105:

թուրքերը սպանում են հորը և չորս եղբայրներին: Նուբարը մեծ ճարպկությամբ թուրքերից վերցնում է նրանց զենքերը և կռվելով հասնում Կարս: Կարսում ամուսնանում է սոգյուլեցի Եկմալյան Շաբոյի հետ, որը զինվորական ծառայության մեջ է լինում այնտեղ և միասին գալիս են Սոգյուլու: Այս անձնվեր ու քաջ կնոջ կյանքը իսկական լեգենդ է: Ըստ Նուբարի որդի Եկմալյան Սարգսի պատմածի, նրա խիզախությունները սկսվել են դեռ Վանից: Մինչև վերը նշված դեպքը, թուրքերը տղամարդկանց հավաքում, լցնում են մարագը և այրում: Նուբարն այրված դիակների տակից հանում է ամուսնուն (առաջին ամուսնուն), որը 12 տեղից վիրավորված էր, հագցնում է կանացի շորեր և տանում տուն: Մի քանի օր հետո թուրքերն իմանում են և գալիս նրանց տանից դուրս հանում ամուսնուն ու շեմքի վրա գլուխը կտրում: Այդքան դաժանություններ տեսած կինը մտքում մի ուխտ է անում՝ որտեղ թուրք հանդիպի, իր վրեժը պիտի լուծի: Ահա եկել էր ամենապատեհ առիթը: Գտնվելով ամենաթեժ տեղում, ըստ հորս պատմածի (նաև այլ ականատեսների)՝ վանեցին մեծ ճարպկությամբ ուղղակի տեղից տեղ թռչելով դիպուկ կրակով իրար հետևից գետնին էր տապալում դեպի առաջ շարժվող թուրքերին...

Բայց վիճակը գնալով ծանրացավ. վերջանում էին փամփուշտները (պաշտպանվողներն ունեին միայն մեկ գնդացիր և զինված էին «Մոսին» հրացաններով): Սակայն մի հանգամանք փրկեց պաշտպաններին. Սոգյուլուի վրա կախված վտանգի լուրը հասավ Կոշ, որտեղ տեղակայված էր գեներալ Խաչատուրովի հրամանատարությամբ մի հայկական զորամաս: Ահա թե ինչ է հիշում այդ զորամասում ծառայած սոգյուլեցի Արեստակ Խաչատրյանը: Հայրենի գյուղի վրա կախված վտանգի լուրն անմիջապես տարածվեց զորամասում: Զորամասի ղեկավարության որոշմամբ կազմակերպվեց 250 հեծյալ մարտիկներից բաղկացած մի ջոկատ. նրանցից 60-ը սոգյուլեցիներ էին, մյուսները՝ շրջակա գյուղերից: Վերցնելով մեծ քանակությամբ զինամթերք՝ ջոկատը գիշերով շարժվեց դեպի Սոգյուլու: Նրա գալը ոչ միայն հնարավորություն տվեց կազմակերպված գործողություններ ծավալելու, այլև

բարոյական մեծ լիցք հաղորդեց դիմադրության մասնակիցներին[3]:

Դիմադրության յոթերորդ օրը մայիսի 22-ին, թուրքերն սկսեցին կրակել թնդանոթներով: Երջանիկ պատահականությամբ դիրքերի մոտ ընկած ոչ մի արկ չպայթեց: Հայրս պատմում էր, թե ինչպես իրենից 3-5 մետր հեռավորության վրա, աջ ու ձախ կողմերում ընկավ երեք արկ և ոչ մեկը, բարեբախտաբար, չպայթեց. միայն ձայնն էր խլացնում ականջները և ուրիշ ոչինչ: Գիշերը էջմիածնից եկած կապավորը տեղեկացրեց, որ բոլորն էլ բարեհաջող տեղ են հասել: Իրենց պարտքը կատարած պաշտպանները թողեցին գյուղը և կազմակերպված հեռացան դեպի էջմիածին: Թուրքերը չեն հավատացել, թե դիմադրողները հեռացել են գյուղից: Միայն երրորդ օրը նրանք համարձակվել են, շրջանցելով կատարելով Ադիյամանի կողմից, մտնել գյուղ:

Այստեղ նշենք մի բացառիկ հանգամանք. Սոգյուլուի ամբողջ ճակատամարտի ընթացքում հայերը տվեցին ընդամենը վեց զոհ (սպանվեց մի կին): Դա վկայում է, թե որքան լավ է կազմակերպվել պաշտպանությունը, որքան հաջող են դասավորվել դիրքերը: Պատերազմների պատմության մեջ նման դեպքեր քիչ են եղել:

Սոգյուլեցի Թոփչի Արշակը, Գևորգ Սաղաթելյանը և շատ ուրիշներ հասցրել են մասնակցել նաև Սարդարապատի ճակատամարտին: Արշակը «Թոփչի» մականունը վաստակել է հենց այնտեղ, թնդանոթով թուրքերին դիպուկ հարվածներ հասցնելու համար:

Սոգյուլուի դիմադրությունը պատվի ու ազատության համար մղված պայքարի խորհրդանիշ է, մի պայքար, որը պահանջում էր մեծ անձնազոհություն: Այստեղ իշխեց առողջ դատողությունը, հաղթեցին սթափ մտածելակերպն ու համերաշխ գործողությունների խելամիտ հաջորդական իրականացումը: Արդյունքը եղավ այն, որ փրկվեց հազարավոր մարդկանց կյանք:

Պատմության կենտրոնական պետական արխիվում եղած փաստաթղթերից մեկում նշվում է, որ հատկապես 1918 թ. մայիսի 16-ից հետո ուժեղացել է դեպի էջմիածին և Երևան գնացող փախստականների հոսքը: Էջմիածնի տաճարին հարող ամբողջ շրջապատը հեղեղված էր փախստականներով, որոնք փակել էին էջմիածնի ելումուտի ճանապարհը: Միայն հրացաններով զինված տղամարդիկ էին մի կերպ դուրս գալիս իրարանցումից և բռնում Երևանի ճանապարհը[4]: Ականատեսները պատմել են, որ, ըստ նախնական պայմանավորվածության, գյուղի թափորների ղեկավարները հանդիպել են նախատեսված վայրում, և այդ փախստականների ճնշող մեծամասնությունը Սոգյուլուից գնացածներն են եղել:

Վերջապես հայտնաբերվեց գյուղի դիմադրության վերաբերյալ մի կարևոր տեղեկություն ևս, որից պարզվեց, որ մեր ծնողների պատմածը և որոշ անհատների կողմից թղթին հանձնված տեղեկություններն ամբողջությամբ համապատասխանում են արխիվային նյութերին: Ահա 1918թ. մայիսի 27-ի և 28-ի մարտերի մասին Սարդարապատի ջոկատի շտաբի պետ, շտաբսկապիտան Ալեքսանդր Շնեուրի հուշերից մի հատված. «... Պանդուխտի հեծյալները շարունակում են հետապնդել թշնամուն Կրիզլուի և Գյոգլուի վրայով, մայիսի 28-ին հասնում են Սողուլու: Այստեղ Պանդուխտի ջանքերով կազմակերպվում է հազար հոգանոց պարտիզանական զորամաս: Թուրքերը խուճապի մեջ են: Նրանց գումարտակներն անցնում են Արփաչայի արևմտյան մասը»[5]: Ուշադրություն դարձնենք. խուճապի մատնվելով թուրքերը փախչում են

[3] Ա. Խաչատրյանի հաղորդած այս տեղեկությունները նրա կենդանության օրոք գրառել է որդին: Այդ գրառումը ներկայումս գտնվում է մեզ մոտ:

[4] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 2:

[5] Տե՛ս նույն տեղում, թ. 28:

Արփաչայի արևմտյան ափը: Արխիվային ոչ մի փաստաթղթում ես չեմ հանդիպել ոչ մի հիշատակության, որ առանց դիմադրության, հանկարծակի, առանց որևէ ակնհայտ պատճառի թուրքերը խուճապի մատնվեին և փախչեին կռվի դաշտից: Մի մեջբերում էլ անենք գեներալ Սիլիկյանի կողմից Հայոց ազգային խորհրդին ուղղված մի հաղորդումից. «Հետապնդումը (խոսքը թուրքերին հետապնդելու մասին է.–Ռ. Գ.) տեղի է ունենում Կարակալա կայարանի և Սողուբլու գյուղի ուղղությամբ: Թուրքերի կորուստները նշանակալի են... մեր կորուստները այդ մարտերում աննշան են, զինվորների ոգին՝ գերազանց»[6]:

Հիշենք դիմադրության առաջին իսկ օրերին թուրքերին խելացի ձևով «դաս» տալը, որի արդյունքը եղավ այն, որ Շիրակի դաշտավայրով մեկ տարածվեց «թուրքի դասաբ սողուբլվեցի» արտահայտությունը: Սարդարապատի հաղթանակից հետո Ալեքսանդրապոլից Երևան և հակառակ ուղղությամբ՝ թուրքերին հետապնդելու վերաբերյալ ոչ մի փաստաթղթում ես չհանդիպեցի որևէ հիշատակության, որ մի վայրում, մի գյուղում, որ մեկ օրվա ընթացքում հազար հոգուց պարտիզանական ջոկատ ստեղծվի : Հետևաբար, ինչպես հայրս է լսել իր պապից, դեռ մինչև 1828 թվականը Արևմտյան Հայաստանում թուրքերի նկատմամբ ատելությամբ լցված հերոս նախնիները և այդօրինակ շատ ուրիշներ, իհարկե, կարող էին համախմբել ողջ բնակչությանը՝ ընդդեմ թուրքերի: Եթե Սարդարապատի հաղթանակից հետո սոգյուբլեցիներից շատերը կրնկոխ հետևել են թուրքերին, հետո նրանց ոչնչացնելու համար և մեկ օրվա ընթացքում կարողացել են իրենց ուժերով ստեղծել հազար մարդուց բաղկացած պարտիզանական զորամաս, ապա պարզ է, որ մազապուրծ եղած հարազատներին սրի քաշելուն ականատես տասնյակ հազարների հասնող գաղթականները պետք է միանային սոգյուբլեցիներին :

[6] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 18, թթ. 11–12:

Թուրքերի կողմից խուճապի մատնվելը պատահական չի եղել: Սոգյուբլեցիների յոթնօրյա դիմադրությունն էլ այնպիսի ահ ու սարսափ էր տարածել թուրքերի մեջ, որ հող ու օջախ սիրող գյուղացին անմիջապես հետ է վերադարձել տուն և պարտիզանական զորամաս ստեղծել հենց գյուղում, մեկ օրվա ընթացքում: Այս լուրը այնպիսի խուճապ է առաջացրել թուրքական բանակում, որ նրանք փախել են Արփաչայի մյուս կողմը, իսկ ովքեր էլ չեն հասցրել անցնել, ինչպես հաղորդման մեջ ասվում է, հետապնդվել են հայերի կողմից:

Ալեքսանդրապոլ-Սարդարապատ-Երևան ուղղությամբ հարձակվող թուրքական 36-րդ դիվիզիայի մեջ մտնում էին 3 հետևակային, մեկ հրետանային գունդ, հարվածային մեկ գումարտակ, սակրավորների մեկ գումարտակ, կորպուսային ուժեղացված մեկ գունդ, քրդական կանոնավոր հեծելազոր՝ 1500 սուր, 40 հրանոթ[7]: Պարզ է, որ յոթ օրվա ընթացքում և հատկապես մայիսի 18-ից 22-ը ընկած ժամանակահատվածում թուրքական բանակի որոշ ուժեր ուղղվել են դեպի Սոգյուբլու, մասնակցել այնտեղ տեղի ունեցող ճակատամարտին:

Հուսանք, որ մեր արխիվներում կգտնվեն Սոգյուբլուի դիմադրության մասին նոր նյութեր, և հայ ժողովրդի պատմությունը կհարստանա արժեքավոր տեղեկություններով: Շատ հավանական է, որ գյուղի դիմադրության մասին նշված լինի նաև թուրքական բանակի հաղորդագրություններում, քանի որ դիմադրությունը շեղել է թուրքերի ուշադրությունը՝ իր վրա գամելով զգալի ռազմական ուժ: Ի դեպ, վերջին հանգամանքը հիմք է տալիս պնդելու, որ Սոգյուբլուի ճակատամարտը որոշակի չափով նպաստել է Սարդարապատի փառահեղ հաղթանակին:

Այսպիսով, գալիս ենք այն համոզման, որ 1918 թ. մայիսին Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի մասին խոսելիս, պետք է ըստ արժանվույն անդրադառնալ նաև Սոգյուբլուի ինքնապաշտպանությանը:

[7] ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 121 ց. 2, գ 88, թ 4-5:

ԽԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
աշխ. գ.թ., դոցենտ
ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի
ընդհանուր պատմության
ամբիոնի հայցորդ

ՍՈԳՅՈՒԹԼՈՒԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ 1918 Թ. ՄԱՅԻՍԻ 14-22- ԻՆ

Հարյուր յոթանասուն հինգ տարի առաջ Ալաշկերտից, Մուշից, Վանից, Կարսից գաղթելով մեր նախնիները, եկել ու ամրացել են Արագած լեռան արևմտյան լանջի մի գողտրիկ անկյունում, որն այսօր համարվում է Շիրակի մարզի ամենամարդաշատ ու բարեկարգ գյուղերից մեկը: Բազում սերունդներ կպած այս հողին, փայփայեցին ու պահպանեցին իրենց նախնիների ավանդույթները, սովորությունները: Որպես պատմական հիշողություն սերունդներին էին փոխանցվում նախնիների ականջներում հնչած արևմտահայ բազմաթիվ բնակավայրերի եկեղեցիների զանգերի տագնապալի, մելամաղձոտ ղողանջները, Արաքս գետի սրտաճմլիկ վշշոցը: Նրանց հիշողության մեջ վառ էին մնացել իրենց պապերը՝ մի ձեռքում սուր, մյուսում՝ խաչ:

Նրանց կռիվն ու աղոթքն ուներ մի խորհուրդ՝ «գոյատևել»: Նրանց հոգու խավարը չէր փարատում Արագածի գագաթի կանթեղի լույսը, նրանց սրտի տափը չէր հովացնում Զաղայի սառցածին աղբյուրի ջուրը: Ատելություն ու վրեժ: Սա էր սոգյութլեցիների ուխտն ու պայմանը թուրքերի նկատմամբ: Գյուղը հնում կոչվել էր Ուռենուտ, որը հետո օտար նվաճողները թարգմանաբար դարձրել են Սոգյութլու: Այժմ այն կրում է Սառնաղբյուր անունը: Շիրակի դաշտից փոքր-ինչ հեռու՝ Արագածի ստորոտին՝ քարքարոտ բլրաշարերի ու լեռնապարերի միջև, բնության զվարթ քմահաճույքով ձևավորված, ուռենիներով ծածկված ափսեաձև գոգավորությունը գերեց

ամեն ինչից զրկված մի բուռ մարդկանց, որոնց գեղեցկությունը նրանց կապեց բնության այս հրաշքին:

«Ի ստորոտս Արագածու և առ ձորակի միոյ, կարի ընդարձակ խոտամարգոք», – կարդում ենք Ղևոնդ Ալիշանի մոտ, որի հայրենափափագ երազը այդքան վառ մնացել է նրա հոգում: Այս ուռենիների տակ պատսպարված սոգյութլեցին դեռ հետո պետք է ցույց տար իր խելքի ու բազկի ուժը:

Դարեր շարունակ Արագածի կրծքից բխելով հոսել է Լուսավորչի ակնակիտ աղբյուրը (Զաղան), նրա ակունքի մոտ խոյ ու աղավնի են մատաղ արել, ծնկաչոք աղոթել են բարեպաշտ մարդիկ, գիշեր ու ցերեկ ղողանջել են Հոգեվանքի զանգերը՝ աշխարհասփյուռ հայերի բազում վշտերը հաղորդելով երկինք՝ առ Աստված: Բայց այդ ամենին ավելանում էր կարկուտն ու հեղեղը, որը հողին էր հավասարեցնում բերրի արտերը, որ Չլկանի ձորի քաջքերը դիոլ-զուռնայով հրապուրեն յայլավորներին, որ ցավն ու համաճարակը ազատ շրջեն տնետուն, որ թշնամու հրոսակները ասպատակեն գյուղը, Շիրակն ու Հայաստանը:

Երկնքի ականջը խուլ էր երկրային հեծեծանքների առաջ: Գյուղի երկու ձիթհանքներն այլևս այնքան ձեթ չէին տալիս, որ սաստկացող բորյազի մեջ պլպլար Արագածի կանթեղը: Գյուղի բազում ջրաղացները մի նշխարի համար ալյուր չէին աղում: Այսպիսին էր գյուղի վիճակը սելջուկների տիրապետության շրջանում: Բացված լույսը (Ռուսաստանին միանալուց հետո) խավարում թողեց Ուռենուտը, Սոգյութլուին՝ ծնունդ տալով Սառնաղբյուրին: Գյուղ, որի անցած ու ներկա սերունդները փառավոր էջեր են գրել ու գրում հայրենի գյուղի պատմության գրքում:

Գյուղում ապրել ու ստեղծագործել են աշուղներ, բանաստեղծներ, գիտնականներ: Ինչպես չհիշել Հովսեփ Ասլանյանին՝ «Աղվանի-Օսանի» սիրո պատմության հեղինակին, նրա որդուն՝ Նիկողայոս Ասլանյանին, որի գողտրիկ տողերը մինչև օրս սիրով հնչում են այսօրվա սառնաղբյուրցիների շուրթերից՝

Զաղա, կամար ու կաթնաղբյուր,
Անմահական սառնորակ ջուր.
Ալագյազի մեղմիկ զեփյուռ
Զքնաղ բուրաստան, Սառնաղբյուր:

Ի դեպ, աշուղ Շիրակի (Նիկողայոս Ասլանյանի) մասին Գարեգին Լևոնյանը «Հայ աշուղներ» գրքում նրանից քառյակներ բերելով ապացուցում է, թե որն է թեջնիսն ու որը՝ մուհամման: Ըստ աշուղ Շիրակի Սոգյութլուն (Սառնաղբյուրը) օրրան է եղել Անանիա Շիրակացու, Արշավիր Կամսարականի, Հովսեփ կաթողիկոսի, սպարապետ Վահրամի, գնդապետ Մաթևոս Մադաթյանի, ֆիզիկական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս Գուրգեն Սահակյանի, հանճարեղ Դանիել Գևորգյանի, դոցենտ Լենրիկ Գևորգյանի, Խ. Սարգսյանի, բանաստեղծ Արշալույս Սարոյանի, ֆիզիկոս Անուշավան Խաչատրյանի, աստղաֆիզիկոս Ռաֆիկ Հովհաննիսյանի, լեզվագետ ու լեզվաբան Հակոբ Մխիթարյանի, քիմիկոսներ Պարսամ Մխիթարյանի, Ռազմիկ Մխիթարյանի և Հմայակ Սարգսյանի, տեխնիկայի հմուտ մասնագետ Ռաֆիկ Սիրեկանյանի, ճարտարապետ-քանդակագործ Սահակ Սահակյանի և բազմաթիվ այլ ճանաչված ու նշանավոր մարդկանց:

Փորձությունների միջով անցած սոգյութլեցիներին (սառնաղբյուրցիներին) վիճակված էր ևս մեկ անգամ ապացուցելու իրենց բազկի ուժը, աննկուն կամքը, ամեհի թշնամուն դիմակայելու, ոչնչացնելու, վրեժը առնելու ցանկությունը:

Արդեն 90-ական թվականներին, երբ կամաց-կամաց ժողովրդին էին վերադարձվում նրա հոգևոր արժեքները՝ վանքերն ու եկեղեցիները (որոնց մեծ մասը վերածվել էին պահեստների ու լքված ավերակների), սառնաղբյուրցիներին՝ որպես հոգևոր արժեք վերանորոգվեց ու վերադարձվեց Սուրբ Հակոբ եկեղեցին, որն այժմ գործում է՝ Կարմիր վանքը:

Այս աշխատանքներին զուգահեռ անհրաժեշտ եղավ ձեռնամուխ լինել գյուղի պատմության շարադրմանը: Այս

առիթով անհրաժեշտ էր փորփրել Հայաստանի պատմության պետական արխիվում պահպանված փաստաթղթերը՝ սկսած 1828 թվականից, քանի որ դրանից առաջ պատմական նյութեր, հավանաբար, գոյություն չունեին: Սակայն եղածը բավարար չէր գյուղի ամբողջական պատմությունը ներկայացնելու համար, հատկապես 1918 թվականին վերաբերվող ժամանակաշրջանին: Այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտություն զգացվեց զրուցել գյուղի տարեց մարդկանց կամ նրանց զավակների հետ, հատկապես նրանց, ովքեր անմիջական մասնակցություն են ունեցել 1918 թվականի մայիսի 14-ից-22-ը թուրքերի դեմ մղած մարտերին: Դրանք ուղղակի ականատեսների վկայություններ են, որոնց իսկությունն ու ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Հնարավոր չէր չհավատալ այնպիսի ականատես, արժանավոր մարդկանց պատմածներին, ինչպիսիք էին Աթաշի Եղիշը, Գևորգյան Նուբարը (Վանեցին), Ասլանի Քերոբը, Մալաղուզի Հարութը, Հովեյ Աշոտը, Խչոյի Սերոբը, Դիզինի Հարութը (Եղոյան Հարություն), Ասլանյան Երեմը, Ճաշոյի Հովհաննեսը (Հարությունյան Հովհաննես): Գրավոր տեղեկություններ են թողել Հովսեփ Ասլանյանը, Քոչոյ Թորոսը, հարգարժան արծվասիրտ կանանցից՝ Խերքոն, Զառոն, Թառոն, Մուրադի Նոյեմը, Ենգոյի Վարսեն, Կտեյ Մարանը, Մալխասի Շուշիկը, որոնք լինելով երիտասարդ աղջիկներ, անմիջական մասնակցություն են ունեցել Սոգյութլուի գոյամարտին: Ուսուցիչներից հայտնի են Շարաֆի Բարսեղը, Իսրոյան Հովհաննեսը, Ավագյան Հայրապետը, Գալուստի Մելքոնը: Բոլորի հիշողության մեջ առավել տպավորիչ ու պատկերավոր մնացել էր թուրքերի դեմ կազմակերպած հերոսամարտը 1918 թվականի մայիսի 14-ից-22-ը: Կան սղագրված բոլորի պատմածները:

Յուրաքանչյուրին լսելիս թվում է, թե թերթում ես հայ ժողովրդի պատմության էջերը, որը վաղ միջնադարից սկսած իր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար կենաց ու մահու կռիվ է տվել օտար նվաճողների դեմ: Այդպիսի ճակատագրով էլ ապրել են սոգյութլեցիներն իրենց գոյության

ընթացքում: Ինչպես արդեն նշել ենք, կարծես թե երեկ էր, երբ նրանք թողնելով իրենց շեն ու շքեղ Ալաշկերտը, Մուշը, Վանն ու Կարսը, եկել ու բնակություն են հաստատել սելջուկների, թուրքալեզու այլ բաշիբոզուկների կողմից ավերված այս գյուղում:

Անելանելի վիճակում շատ են հայտնվել սոգյութլեցիները (գաղթ, ինքնապաշտպանություն, պատերազմ, սով, համաճարակ), բայց միշտ էլ ուժ են գտել իրենց մեջ գոյատևելու, ինքնությունը պահպանելու համար: Բազում արհավիրքներ տեսած այս ժողովուրդն ամենասարսափելին համարում է 20-րդ դարի սկիզբը, երբ Առաջին համաշխարհային պատերազմից Ռուսաստանի դուրս գալուց հետո թուրքերը հնարավորություն ունեցան լուծելու դարերով փայփայած իրենց նպատակը՝ ջնջել հայ ազգը, վերջնականապես թուրքավարի լուծել այդքան չարչրկված Հայկական հարցը:

Ընտրելով հարմար պահը՝ թուրքերը 1918 թ. գարնանը ներխուժում են պետականությունը նոր-նոր վերականգնող Հայաստանի տարածք: Նրանք հյուսիս-արևմուտքից մտնում են Շիրակ, իսկ Արարատյան դաշտում հասնում Երևանի մատույցներին:

Հայ ժողովուրդն ամեհի թշնամու դեմ մնում է միայնակ: Ժողովրդի մեջ գերակշռող դարձավ այն համոզմունքը, որ ազգն իր սեփական ուժերով պետք է լուծի իր գոյատևման խնդիրը: Եվ ահա 1918 թվականի մայիսը դարձավ այդ համոզմունքի իրականացման լավագույն վկայությունը: Հայ ժողովուրդը կարողացավ միավորել իր բոլոր ուժերն ընդդեմ թշնամու, բռունցքվեց պայքարի վճռական կամքով, հաղթանակներ տոնեց Սարդարապատում, Ղարաքիլիսայում և Բաշ-Ապարանում: Հաղթանակներ, որոնց վերաբերյալ կան պահպանված բավականին շատ փաստաթղթեր, արխիվային նյութեր: Դրանք ռազմական հաշվետվություններ են, հեռագրեր և այլն: Եղել են նաև ինքնապաշտպանական մարտեր՝ կազմակերպված ժողովրդական զանգվածների կողմից, որոնք ղեկավարվել են զինվորական գործից քիչ թե շատ հասկացող աշ-

խարհազորային անհատների կողմից, որոնց վերաբերյալ շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Բայց պարզվում է, որ նաև դրանց շնորհիվ ձեռք բերվեցին Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի հաղթանակները:

Այդպիսի ինքնապաշտպանության լավագույն օրինակ է նաև Սոգյութլուի ինքնապաշտպանությունը:

Մենք կցանկանայինք անդրադառնալ Սոգյութլուի ինքնապաշտպանության գաղափարի ծագմանը, նախապատրաստման աշխատանքներին և որոշ մանրամասների, որոնք պատմել են ինքնապաշտպանության մասնակիցները:

Գրավոր և բանավոր տեղեկությունների համաձայն՝ Սոգյութլուի ինքնապաշտպանության գործի կազմակերպման նախապատրաստական աշխատանքները սկսվել են 1918 թվականի մայիսի 14-ից: Այն ժամանակվանից, երբ Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ շարժվող թուրքական բանակի գերազանցող ուժերի ճնշման տակ հայկական զորամիավորումները անկանոն դիմադրություն ցույց տալով, նահանջում են Ղարաքիլիսայի, Ապարանի և Թալինի ուղղություններով: Նահանջի ճանապարհին կազմակերպվում է «Ալագյազ» ջոկատը, որը պետք է պաշտպաներ Ալեքսանդրապոլի և Երևանի միջև ընկած տարածքի՝ Արփայի (Արփաչայի) հատվածը:

Սակայն ջոկատը չդիմանալով թուրքական գերազանցող ուժերի ճնշմանը՝ նահանջում է մինչև Ղարաբուռուն: Այդ հատվածում թուրքերը մեծ կորուստներ են պատճառում Էրզրումի և Երզնկայի գնդերին, իսկ առաջին հատուկ բրիգադի մի ողջ գումարտակ անհետ կորչում է: Հետագայում պարզվում է, որ այդ գնդերի ու գումարտակների զինվորների մի զգալի մասը կուտակվում է Կարակալայում և մասնակցում սոգյութլեցիների ինքնապաշտպանությանը: Ղարաբուռուն նահանջած «Ալագյազ» ջոկատի հրամանատար Կազիմիրսկին հրաման է ստանում՝ բանագնացներ ուղարկել թուրքերի մոտ: Այս ամենի մասին մանրամասնորեն շարադրված են Հայաստանի ազգային արխիվի մի փաստաթղթում /ֆոնդ 121, ցուցակ 2, գործ 82/: Արդեն մայիսի 16-ին Ալեքսանդրապոլի տարածաշրջանում հայկական

կանոնավոր զորքեր այլևս չեն մնում: Ականատեսների պատմածից պարզվում է, որ նահանջող և մասնատվող հայկական զինվորների մի զգալի մասը, այդ թվում նաև էրզրումից, Սարիղամիշից, Կարսից, Բայազետից, Մուշից, Վանից, Շիրակի տարբեր գյուղերից գաղթականների մի հսկա բազմություն է կուտակվում Սոգյութլուում: Ստեղծվում է շատ ծանր իրավիճակ, գաղթականների հսկա բազմությունն իր հետ տանում էր իր ողջ ունեցվածքը՝ գույքը, անասունները: Անհրաժեշտ էր որոշակի քայլ կատարել և փրկել գաղթականներին: Նրանք պետք է ապահով, առանց կոտորածի և թալանի հասնեին Էջմիածին, Երևան: Առանց հապաղելու Աթաշի Եղիշը և Նոյ Սարգիսը (ցարական բանակի սպա, Գեորգիևյան խաչի կրկնակի ասպետ) գործի են անցնում և 1918 թվականի մայիսի 14-ին Հովեյ Օդայում, որն այս գյուղի բնակչության համար եղել է բոլոր տեսակի վճռական որոշումների կայացման վայր, հրավիրում են խորհրդակցություն, որին, բացի այս երկուսից, մասնակցում են նաև ռազմական գործից հասկացող մարտիկներ, գյուղացիների հարգանքը վայելող Խաչոյ Քերոբը, Հարութի Մարալովը, Կարոյ Տոնոն, Կարոյ Հարութը, Շարաֆի Բարսեղը, Քոչոյ Թորոսը: Հովսեփ Ասլանյանը (Նիկոյ Հովսեփ), Տեր-Գևորգը (գյուղի քահանան), Քոչոյ Հարութը, Նոյ Նահապետը, Դիլանի Հարութը և էրզրումի, Երզնկայի, «Ալագյազ» գնդերից ու ջոկատներից մնացած սպաներ: Այս հավաքում որոշվում է ինքնապաշտպանություն կազմակերպել Սոգյութլուի տարածքում, քանի որ ինքնապաշտպանության համար տեղանքը վերին աստիճանի հարմար էր: Առանց մեծ կորուստների թուրքերն այստեղով անցնելու հնարավորություն չէին ունենա, որովհետև սոգյութլեցիների հետ թև ու թիկունք էին դարձել սասունցիների, մշեցիների, ալաշկերտցիների, կարսեցիների Շիրակի գյուղերից այստեղ կուտակված բազում կտրիճները, և ամենակարևորը պետք է ճակատը պահեին այնքան ժամանակ, որ գյուղում կուտակված փախստականները կարողանան կազմակերպված հեռանալ Երևանի ուղղությամբ: Մինչև տեղ հասնելու վերաբերյալ տեղեկություններ չստացվեր, ոչ ոք դիրքերը թողնելու իրավունք չուներ: Որոշվում է առաջին մի-երկու օրը երիտասարդությանը գյուղից հանել դեպի սարերը, ծրագրում են նաև գյուղ մտնող թուրքերի դիմավորումը, այնուհետև նրանց ոչնչացնելու տարբերակները և հաստատում են դիմադրության պլանն ու հատվածավորումը:

Մայիսի 16-ին թուրքական մի ջոկատ՝ 13 ասկյարներից բաղկացած, Ալի փաշայի գլխավորությամբ հին գերեզմանոցի կողմից հայտնվում է Սոգյութլուի տարածքում: Նախօրոք պայմանավորվածության համաձայն՝ գյուղացիներից Հենցու Տիգրանը, Բղդոյի Հարութը, Ասլանի Քերոբը աղ ու հացով դիմավորում են թուրքերին: Փաշային տեղավորում են Հովեյ «Օթախում», իսկ ասկյարներին՝ Հովեյ Օդայում:

Թուրքերին տեղավորելուց հետո անցնում են ծրագրի իրականացմանը: Հաջորդ գիշեր սարերից գյուղ են իջնում Հարութի Մարալովը, Նոյի Սարգիսը, Մնեյի Սմբատը: Հարութի Մարալովը սպանում է փաշային, մնացածները հարձակվում են ասկյարների վրա, կոտորում: Ասկյարներից մեկը, բնական պահանջով լինում է դրսում, այս ամենը տեսնելով փախչում է, ճանապարհին հանդիպում է Սեփանի Մնացին, վախից սպանում նրան և լուրը հասցնում է Մոլա-Գյոգչա (Մարալիկ), հետո Ալեքսանդրապոլ և տեսածի ապրած սարսափը պատմում է «քոնցոլին»: Ռազմական հրամանատարությունը, Կոնսուլը (հյուպատոսը) քառասուն հեծյալներից կազմած մի խումբ է ուղարկում, որ սրի քաշեն անհնազանդներին և այրեն գյուղը: Գյուղի զինված մարտիկները դիմադրում են թուրքերին, ոչնչացնում են բոլորին, խմբի ղեկավարի կտրած գլուխը կապում են ձիու թամբին և ուղարկում Մոլա-Գյոգչա: Թուրքական բանակի հրամանատարությունը, իմանալով 50-ից ավելի ասկյարների կորստի մասին, կանոնավոր զորամասով շարժվում է դեպի Սոգյութլու, ոչ թե Մոլա-Գյոգչայի, այլ Սիրվանջուղի ուղղությամբ: Դիմադրության շարժման կազմակերպիչներն արդեն հասցնում են պաշտպանական դիրքեր գրավել Շիշթափեքից, Սիրվանջուղի (Լեռնակերտի) մոտից.

լեռների ջրբաժաններով մինչև Դաշխալա (Քարբերդ) մոտ 14 կիլոմետր երկարությամբ՝ այնտեղ կուտակելով մի քանի տասնյակ հազար սվին:

Ինքնապաշտպանների զբաղեցրած հարմար դիրքը, թուրքերի նկատմամբ լեռնացած ատելությունը, վրեժխնդրության մոլուցքն այն հզոր ուժն էր, որ նրանց գամել էր ժայռերին և որպե՛ս առաջ թշնամուն հանդիպելու և ոչնչացնելու ցանկություն առաջացրել: Թուրքական բանակն այդ ամայի սարերում հանկարծ հանդիպում է դիմային հզոր կրակահերթերի: Նրանք չսպասելով այդպիսի դիմադրության՝ խուճապահար փախչում են՝ թողնելով մեծ քանակությամբ սպանված և ռազմավար, այդ թվում նաև մեկ թնդանոթ: Դիմադրության մասնակիցներն արագ հավաքում են զենքերն ու զինամթերքը, իսկ թնդանոթը՝ գլորում ձորը: Հաջորդ օրը թուրքական բանակում կեղծ լուր են տարածում, որ իբրև թե անգլիական զորքերն օգնության են հասել սոգյութլեցիներին: Առաջին հաջողությունից ոգևորված ինքնապաշտպանության պատասխանատուները՝ Նիոյ Սարգիսը, Աթաշի Եղիշը, Մնեյ Սմբատը, Շարաֆի Բարսեղը, Քոչոյ Թորոսը ամբողջ ճակատի գիծը բաժանում են 3 հատվածների, այսինքն՝ սկսում են իրականացնել մայիսի 14-ին կայացած որոշումը: Առաջին և խիստ կարևոր պաշտպանական տեղամաս համարելով Սիրվանջուղի ուղղությունը, որը Գունի բարձունքներից, Շիշթափքից 2107,9 մ բարձունքից ձգվում էր մինչև 1980,1 մ բարձունքը (տե՛ս քարտեզը): Այս ուղղության պաշտպանության հիմնական ղեկավարությունը դրվում է Նիոյ Սարգսի վրա (որպես հմուտ սպայի), նրան օգնականներ նշանակվել են Բղդոյ Հարութը, Մնեյ Սմբատը, Հարութի Մարալովը, Համոլգու Զատիկը, Նիոյ Նահապետը, Սրքեյ Մուկուչը, Նաջրի Սիմիգը, Հենցու Տիգրանը, Ասլանի Քերոբը և մի քանի սիրվանջուղցիներ ու գաղթականներ: Այս հատվածում զոհվում են Համոլգու Զատիկը, Նաջրի Սիմիգը և Սրքեյ Մուկուչը: Հոգևորականներից մասնակցել է Տեր Գևորգը, որը և կատարել է թաղման արարողությունը:

Ինքնապաշտպանության երկրորդ տեղամասը ընդգրկում էր Վանքի ձորի երկու բարձրադիր մասերը (1980.1մ բարձրությունից մինչև 1970.3մ բարձրությունը), որի առանցքային մասով անցնում էր Մոլա-Գյոգչա-Սոգյութլու ճանապարհը: Այս տեղամասի պատասխանատու նշանակվում է Աթաշի Եղիշը (ռուսական բանակի սպա), նրան օգնել են Խաչոյ Քերոբը, Կարոյ Տոնոն, Քչոյ Թորոսը, Ղուրշուդի Արմենակը, Քոչոյ Հարութը, Սեփանի Շաբոն և գաղթականներից մի խումբ սասունցիներ: Այս տեղամասում զոհվում են Ղուրշուդի Արմենակը, Սեփանի Շաբոն: Հոգևոր ծառայությունը կատարում է Քոչոյ Թորոսը (չնայած, որ նա հոգևորական չի եղել) և հողին է հանձնում զոհվածներին: Աթաշի Եղիշի պահանջով ինքնապաշտպանները դիրքեր են գրավում Կարմիր Վանքից բավականին հեռու, որպեսզի թուրքական հրանոթներից արձակված արկերը չվնասեն վանքին:

Ինքնապաշտպանության երրորդ տեղամասը ընդգրկել է լեռանցքից (1970, 3մ) մինչև Դաշխալայի (Քարաբերդի) մատույցները 1948.0մ (տես պաշտպանական գիծը պատկերող տեղագրական քարտեզը): Տեղամասի պատասխանատու է նշանակվում Շարաֆի Բարսեղը, որին օգնել են Կարոյ Հարութը, Բղդոյ Հարութը, Դիլանի Մարալովը, մի քանի դաշխալացիներ: Այս հատվածում ինքնապաշտպանությանը մասնակցում են մեծ թվով գաղթականներ: Հաջորդ օրը թուրքերը ուշքի գալով, համալրվելով թարմ ուժերով, անցնում են հարձակման, բայց ոչինչ չի ստացվում, ամեն քարի տակից կրակ է թափվում նրանց գլխին: Դիմադրության յոթերորդ օրը թուրքերն այս ճակատ են տեղափոխում հրանոթներ: Երջանիկ պատահականությամբ հրանոթներից արձակված արկերը կամ չեն պայթում, կամ հեռու են ընկնում ինքնապաշտպանների դիրքերից: Դիմադրության մասնակիցների վիճակը հետզհետե ծանրանում է, սպառվում են փամփուշտները:

Այն, ինչ կատարվեց մայիսի 16-ից մինչև մայիսի 22-ն այս հատվածում, վեր է ամեն տեսակի երևակայությունից: Դիմադրության մասնակիցները, նախօրոք պայմանա-

վորվածության համաձայն, երբ լուր է ստացվում, որ «քոչը» անվնաս հասել է էջմիածին, իրենց պարտքը կատարած համարելով, հեռանում են դիրքերից դեպի էջմիածին: Գյուղից չեն հեռանում Ավոյ Նիկոլը (12 տ.), Պողսեյ Վարագը (10 տ.), Սարգսյան Բաբկենը (10 տ.), Պողոսի Նախշունը, Հարեյ Ալեքը, Դիլանի Հարութը, որոնք էլ ականատես են լինում թուրքերի վայրագություններին: Ըստ նրանց պատմածի, թուրքերը երեք օր չեն փորձել մտնել գյուղ, նստել են «Կաթնով» աղբյուրի մոտ, հետո անցել Ադիաման (Գառնահովիտ) ու նոր միայն իջել գյուղ: Իմանալով իրողությունը, թուրքերը մտածել են Ադիամանով, Փիրթիքյանով շրջանցել հեռացողներին, բայց դա նրանց չի հաջողվել: Դրա փոխարեն նրանք հավաքում են Ադիամանի, Փիրթիքյանի, Մաստարայի, Մուսլուղլիի (Լանջիկ), Սոգյուլուի և Ջիթիանքովի ծերերին, կանանց ու երեխաներին լցնում են Ջիթիանքովի մարագները և պատուհաններից կրակում անզեն մարդկանց վրա: Երևույթն ավելի դաժան է եղել, քան Դանթեի դժոխքը: Այդ դժոխքից դուրս են գալիս սոգյուլեցի Նոյ Գասպարը և ադիամանցի Գլոն, որոնք հետագայում այդ մասին պատմում են ժողովրդին:

Սոգյուլեցիների կատարած այս սխրագործության մասին գիտեն շատերը, բայց հարցին հնչեղություն չէր տրվում: Այն պետք է համարել մեր ժողովրդի գոյապայքարի մի օղակը և հավասարապես հնչեցնել Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Ապարանի հերոսամարտերի կողքին:

Վերջում, ակնկալում ենք հարգարժան պատմաբանների ու պաշտոնատար բոլոր անձանց աջակցությունը Սոգյուլուի ինքնապաշտպանության վերաբերյալ եղած նյութերը հրապարակելու և այն ուսումնական գործընթացի ոլորտ ընդգրկելու գործում:


ՍՈԳՅՈՒԼՈՒԻ ԳՅՈՅԱՄԱՐՏԻ ՍԽԵՄԱՏԻՊ ՔԱՐՏԵՁ
Սոգյուլու
Ադիաման
Գառնահովիտ
Գլուխ Գոմեր
Գանձակ
Գանձակ գետ
Գանձակ գետի վերնահոսքի վանդակեցումներ
Գանձակ գետի ստորնահոսքի վանդակեցումներ
Գանձակ գետի ստորնահոսքի վանդակեցումներ
Գանձակ գետի ստոր

ՀԵՆՐԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ
պ.գ.դ. պրոֆ.,
Հումանիտար գիտությունների
միջազգային ակադեմիայի
/Մոսկվա/ ակադեմիկոս

1918 ԹՎԱԿԱՆԻ ՇԻՐԱԿԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԸ

Հայաստանի Հանրապետության ԳԱԱ պատմության ինստիտուտի և «Շիրակ միջազգային հայրենակցական միության» կազմակերպած ներկա գիտական նստաշրջանն անառարկելի դրական խորհուրդ ունի: Նախ՝ այն բացահայտում է 1918թ. մայիսյան գոյապայքարի պատմության նոր փաստեր՝ դարձնելով պատմական գիտության ու ժողովրդի սեփականությունը: Երկրորդ՝ սերտ միասնություն է հաստատում պատմական գիտության և Շիրակի բնակչության, իշխանությունների միջև: Մեր աչքերի առջև տեղի է ունենում հայագիտության ու ժողովրդի ողջունելի մերձեցում, միաձուլում: Համատեղ քննարկվում, ժամանակակից գիտական տեսքի է բերվում գիտական մի հիմնախնդիր, որը մեր օրերում բացառիկ կարևոր նշանակություն ունի հատկապես երբեմնի սահմանամերձ Անիի շրջանի, ամբողջ Շիրակի երիտասարդության հայրենասիրական դաստիրակության համար:

Մինչ արխիվների լիակատար բացումը, փականքի տակ գտնված պատմական փաստերի օգտագործման հնարավորությունը, տեղական մամուլը, մասնավորապես Մարալիկի շրջանային «Անի» թերթը 80-ական թվականների վերջին տարիներին սկսել էր իր էջերում տեղ հատկացնել 1918-1920 թվականների գոյապայքարի հարցերին: Այդ կարգի հրապարակումներից հատկապես հիշատակության է արժանի 1987թ. օգոստոսի 22-ի համարում լույս ընծայված ընդարձակ հրապարակումը՝ «Ճանաչիր արմատները քո» վերնագրով, որը, մեր կարծիքով, պատմական սկզբնաղբյուրի արժեք ունի: Այդ հոդվածի հեղինակը նախկինում Ձորակապ գյուղի բնակիչ

Անդրանիկ Դավթյանն է, որը իր հոր՝ բանիմաց ու կիրթ Ս.Դավթյանի հավաքած նյութերի և գրառումների հիման վրա համառոտակի ամբողջացրել և խմբագրությանն էր ներկայացրել նշված հոդվածը: Դրանում շարադրված են Ալեքսանդրապոլի գավառի 4-րդ գավառամասի շուրջ 45 գյուղերի կենտրոն Մոլլա-Գյոքչայի /Մարալիկ/ պատմության շատ արժեքավոր փաստեր, որոնց մեծ մասը ճշմարտացի է, համապատասխանում է արխիվային հավաստի նյութերին: Դրանք վերաբերում են Խնուսից, Բասենից, Մուշից, Ալաշկերտից, Վանանդի տարբեր շրջաններից և Արևմտյան Հայաստանի այլ մարզերից 1830թ. ամռանը գյուղ տեղափոխված շուրջ 53 ընտանիքների հաստատմանը, տեղի բնակիչների հետ գյուղական տնտեսության կազմակերպմանը, դպրոցի ու եկեղեցու բացմանը, 1903-1904թթ. հակացարական ժողովրդական շարժումներին, 1918-1920 թվականների թուրքական ամայացնող երկու արշավանքների պատճառով գյուղում և ամբողջ Շիրակում ստեղծված օրհասական դրությանը, թուրքական վանդալների դեմ տեղական բնակչության սկզբում՝ տարերային, հետո ինչ-որ չափով կազմակերպված դիմադրությանը և բազում այլ հարցերի, որոնք օգնում են գրի առնելու գյուղի /նաև՝ ինչ-որ չափով շրջանի/ պատմությունը:

Ներկա գիտական նստաշրջանի և մեզ հետաքրքրող գոյապայքարի հիմնահարցի առնչությամբ ցանկանում եմ այդ հոդվածից վկայակոչել մի հատված:

1918-1920թթ. թուրքական բանակի երկու ավազակային հարձակումները Արևելյան Հայաստանի վրա մեծ ավերածություններ են պատճառում նաև Մոլլա-Գյոքչային: Բնակչության մի մասին քշում են Արզրում /Էրզրում – Հ.Մ./ գերության, մի մասին էլ սպանում են: Թալինի /պետք է լինի Ձիթհանքովի – Հ.Մ./ մարագներում ողջ-ողջ այրում են Հեպոյան Արշակին, Ուռուտյան Խաչատուրին, Ավդալյան Սաքոյին: Գյուղից 40 մարդու քշում են Արզրում՝ գերության, մի մասին էլ սպանում են, այդ թվում՝ Սարոյան Տիգրանին:

Գյուղի բնակիչները թուրքերի դեմ դիմադրություն են կազմակերպում, որի ակտիվ մասնակիցներից էին Սիմոնյան Առաքելը և Աղաբալյան Աղանիկը / նրանք Հայ հեղափոխական դաշնակցության ակտիվ անդամներից են/: «Տանուտեր Գևորգյան Ալեքը՝ Տերտերանց գերդաստանից մերժում է գեղեցիկ կանանց թուրքերին հանձնելու պահանջը: Թուրքերը նրան պաշտոնանկ են անում, փոխարենը նշանակում Իգնատիոսյան Կարոյին: Իգնատիոսյանը ոչ միայն մերժում է թուրքերի պահանջը, այլև վճռում է պայքար կազմակերպել նրանց դեմ: Ղեկավարելով 50-60 մարդու՝ «Գող մաղարա» հանդամասում /գյուղի հյուսիսարևելյան կողմում, Ալեքսանդրապոլ-Երևան ճանապարհի ձախ մասում/ կռվում է թուրքերի դեմ: Թուրքերը չկարողանալով ծնկի բերել ջոկատին /նրա կազմում էին պատերազմի տարբեր ռազմաճակատներից գյուղ վերադարձած փորձառու զինվորականներ/՝ հրաժարվեցին հետագա պայքարից: Այդ կռվում աչքի ընկան Չարչօղլյան Հովհաննեսը, Բոզիկյան Սիրեկանը, Ավդալյան Մկրտիչը և ուրիշներ*:

Թուրքերի երկրորդ արշավանքի՝ 1920 թվականի թուրք-հայկական պատերազմի ժամանակ մոլլագյոկչացիները հակառակորդի գերազանց ուժերի դեմ՝ Անանիայի գյուղից մինչև Շիշքափա բլուրն ընկած տարածքում անհավասար մարտի են բռնվում: Կռվում խիզախությամբ աչքի են ընկնում Բրուտյան Ղազարը, Ժաժոյան Սեդրակը, Աբաջյան Տիգրանը, Բոզիկյան Մկրտիչը, ինչպես նաև Ուռումյան Անտոնի խումբը[1]:

1918-1920թթ. գոյապայքարին վերաբերող այս, ինչպես

* Գնալով մենք ավելի ենք համոզվում, որ այդ հերոսամարտի նախաձեռնողները եղել են Պանդուխտը և արևմտահայ այլ գործիչներ՝ տեղի հայրենասեր գյուղացիների հետ: Այն հետապնդում էր մի նպատակ՝ կանխել դեպի Շիրվանջուղ-Սոգյութլի թուրքական զորամաս ուղարկելը:

[1] Անի, 1987, 22 օգոստոս:

նաև այլ փաստեր պահպանվել են նաև գյուղացիների հիշողություններում: 1946 թվականին, երբ ես սովորում էի Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի 3-րդ կուրսում և արդեն նոր-նոր էի սկսել պատմական գիտության «համն առել», Շիրակի ցրտաշունչ ձմռանը, բուհական արձակուրդների ժամանակ, մի 2-3 օր «Կարո ապոր»՝ Բոզիկյան Կարոյի անմոռաց, հրաշալի ձիթհանքում գյուղացիների հետ զրուցում էի գյուղի պատմության շուրջ: Հայրենական պատերազմը նոր էր ավարտվել, մարդկանց հայրենասիրական տրամադրությունները դեռևս կապանքի տակ չէին ու բանիմաց, խելացի գյուղացիները, մեկը մյուսին լրացնելով, պատմում էին նաև 1918-1920թթ. թուրքական արշավանքների մասին: Ուզում եմ հատկապես վկայակոչել գյուղացիներից մեկի, իմ դպրոցական ընկերոջ՝ Վելիխանի հոր՝ Անդիկյան Հարութի հուշերից մի երկու փաստ:

«Թուրքերն անխնա թալանեցին ամբողջ գյուղը, տարան անասունների մեծ մասը, խոտի դեզերը, սայլերն ու ֆուրգոնները, գյուղատնտեսական գործիքները, մեղվափեթակները: Լացուկոծը ընկել էր գյուղը: Իրենց դիմադրողներին, կամքը չկատարողներին սպանում էին... Ցուցակագրված շատ գյուղացիների թուրքերը տարան «աշխատանքի»: Որոշ ժամանակ հետո պարզվեց, որ նրանց, Շիրակի մյուս գյուղերի երիտասարդներին տարել են դեպի Կարս, Սարիղամիշ, Էրզրում... Մի մասին սպանել են ճանապարհին, մյուսներին կենդանի-կենդանի թաղել նրանց իսկ փորած փոսերում...

Ես էլ եմ տեսել, ուրիշներն էլ էին պատմում, որ դեպի Երևան գնացող թուրքական ջոկատները հաճախ փոքրաթիվ էին, մի 20-30 հոգի: Նրանց առջևից ու հետևից մի-մի սպա էր գնում, և եթե հայերը տեղերում կազմակերպված զինված ուժ ունենային, ապա նրանց ոչնչացնելը շատ հեշտ կլիներ: Ցավոք, սկզբում տեր չկար, կազմակերպող չկար: Եթե հանկարծ թուրք զինվորի մազին կպնեին, ապա ամբողջ գյուղը կոչնչացնեին...

Որոշ ժամանակ ինչ-որ մարդիկ եկան գյուղ ... սկսեցին խիստ գաղտնի գործել: Շատերը տեսել էին ու գիտեին, որ

Տերտերանց տան կտուրում գնդացիր էր դրված: Դա գյուղի ամենաբարձր, ամուր ու բարետես շենքն էր...

Տեղի ակտիվ, ազգասեր հայ մարդկանցից հայտնի էին Բոզոենց Մելիքը, Մեսրոպը, Սերգոն, Աբաջոնց Տիգրանը, Սիմոնյան Առաքելը, Աղանիկը, Տերտերանց Ալեքը, Տիգրանը, Վահանը, Չարչօղլոնց Սերգոն, Իգնատիոսյան Կարոն և էլի ուրիշներ: Նրանք սկսեցին կազմակերպված պայքարել թուրքերի դեմ...

Մոլլա-Գյոքչայի գյուղացիները լավ տեղյակ էին, որ թուրքերին դիմադրելու գործը հաջողությամբ է ընթանում հատկապես Սոգյութլուում /Սառնաղբյուր/, որտեղ հարմար դիրքի պատճառով ապաստան էին գտել հազարավոր մարդիկ[2]: Արևմտահայ որոշ գործիչներ, տեղի ակտիվ գյուղացիները միասին ջոկատներ էին ստեղծել, զինվել ու մի քանի կիլոմետր շղթա էին կազմել՝ Շիրվանջուղ-Սոգյութլու-Տաշղալա-Մոլլա-Գյոքչա գյուղերի սարերում... Այդ ժամանակ մեր և մյուս գյուղերում հաճախ էին լինում Պանդուխտը, Սեպուհը, Սմբատը, Մուրադը, Մակեդոնը, Հովսեփը, Մելքոնը և էլի ուրիշներ: Ակտիվ էին հատկապես պատերազմի տարբեր ռազմաճակատներից վերադարձած ջահելները...

Թուրքերի համար ամենից հարմար ճանապարհը Ղազարապատ-Չռփլու-Աղին հատվածից Արփաչայն անցնելն ու դեպի մեր կողմը շարժվելն էր: Ահա այստեղ է, որ թուրքերն ու նրանց հետևից եկող «խուժանը» հանդիպեցին Սոգյութլուի և հարևան այլ գյուղերի գյուղացիների զինված դիմադրությանը: Դա Շիրակի գյուղացիության գոյապայքարն էր մինչ Սարդարապատի կռիվը: Դրանից հետո էլ Սոգյութլուի զինված ջոկատները շարունակում էին գործել թուրքերի դեմ, որոնք

[2] Այս կապակցությամբ ուշադրության է արժանի Ռ.Ե.Գևորգյանի «1918 թվականի մայիսյան հերոսամարտերի մի նոր էջ» հոդվածը /տե՛ս «Հայկական բանակ», նո. 2 /36/, 2003թ./: Այստեղ կան արժեքավոր շատ փաստեր:

նահանջում, փախչում էին դեպի Արփաչայ, դեպի Ալեքսանդրապոլ...

Մոլլա-Գյոքչայի 100-ից ավելի խիզախ գյուղացիների, բազմաթիվ փախստական-կամավորների պայքարը հատկապես հերոսական, անձնազոհ բնույթ ընդունեց «Գող մաղարա» կոչված հանդամասում: Թուրքերին չհաջողվեց հաղթանակի հասնել զինված գյուղացիների դեմ և նրանք ստիպված հեռացան մարտադաշտից՝ թողնելով շատ դիակներ»[3]: Գյուղացիները հուշեր էին պատմում նաև Ջիթհանքովի կոտորածի, 1920 թվականի թուրքական նոր արշավանքի մասին, երբ գյուղում դարձյալ թուրքերի դեմ դիմադրություն էր կազմակերպվել[4]:

Պատմական նյութերի հայտնաբերումը, դրանց նորովի, անկողմնակալ մեկնաբանումն ու գնահատումը մեզ հանգեցրել է այն հետևության, որ 1918թ. մայիսին Շիրվանջուղ-Սոգյութլու-Տաշղալա պաշտպանական գծի ստեղծումը, Սոգյութլուում ու դրա շրջակա լեռներում Սասունից, Մուշից, Խնուսից, Ալաշկերտից, Բասենից այստեղ հասած Շիրակի, Արագածոտնի գյուղերում ապաստանած մի քանի տասնյակ հազար փախստականների ու տեղական բնակչության գոյապայքարի ոգին, գլխավոր կազմակերպիչը Պանդուխտն էր՝ Միքայել Սեֆերյանը:

Ո՞վ էր նա, ի՞նչ ուղի էր անցել, ի՞նչ դեր էր խաղացել Սարդարապատում, ինչպիսին էր նրա կապը Սոգյութլու և շրջակա գյուղերի զինված ջոկատների հետ մայիսյան գոյապայքարի օրերին: Մինչ Բալկանյան ճգնաժամն ու Առաջին աշխարհամարտը նա հնչակյան կուսակցության Մուշի կազմակերպության հայտնի գործիչներից էր: Բալկանյան ճգնաժամի ժամանակ, Անդրանիկի նախաձեռնությամբ խոստումնալից, հայրենանվեր շատ երիտասարդներ ռազ-

[3] Գյուղացիների հուշերը պահվում են հեղինակի արխիվում:

[4] Տե՛ս «Անի» թերթի նշված հոդվածը:

մական փորձ ձեռք բերելու նպատակով մեկնեցին Բուլղարիա: Թուրքերի դեմ պայքարում հասունացան նրանք, կոփվեցին որպես ստորին ու միջին հրամանատարներ: Երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, երբ Թուրքիայի դեմ կազմավորվեց կովկասյան ռազմաճակատը, երբ ռուսական բանակի կազմում դրվեց հայկական կամավորական ջոկատների կազմավորման ու պատերազմական գործողություններին նրանց մասնակցության հարցը, Անդրանիկի, Բուլղարացի Գրիգորի, Նժդեհի և այլոց հետ Պանդուխտը եկավ Անդրկովկաս, եռանդուն մասնակցություն ունեցավ կամավորական ջոկատների կազմակերպման, մարզման գործում: Սարիղամիշի, Դիլմանի, Էրզրումի ազատագրման, Ալաշկերտի և այլ ճակատամարտերում նա թրծվեց որպես զինվորական: Վերահաս քաղաքական բարդ իրադարձությունների պայմաններում, երբ կովկասյան ռազմաճակատն օր-օրի վրա սկսեց կազմալուծվել, ռուսական բանակը զանգվածաբար հեռանալ ռազմաճակատից, Պանդուխտի ու նրա զինակիցների գլխավոր գործը եղավ թուրքական բանակի հարձակման ժամանակ տեր կանգնել փախստական հայ բնակչությանը, գլխավորել նրանց հեռացումը դեպի Արևելյան Հայաստան*: Այստեղ նա շուտով ներգրավվեց մայիսյան հերոսամարտերի մեջ, ճանաչվեց որպես հայերի նոր գոյամարտի խիզախ, անվանի գործիչներից մեկը:

Օրհասական պայքարում Պանդուխտին առաջինը քիչ թե շատ ամբողջական է ներկայացրել անվանի հրապարակախոս, թարգմանիչ Հարություն Թուրշյանը, որին էլ խորհրդահայ պատմագրության մեջ իրավմամբ պատկանում է Սարդարապատի գոյամարտին նվիրված առաջին, լայն ճանաչման արժանացած աշխատության ստեղծման պատիվը[5]:

* Այդ առնչությամբ ուշագրավ փաստաթղթեր են հրապարակված "**Андраник Озанян**. Документы и матерялы" գրքում, Երևան, 1991, էջ 261, 275, 276, 277, 433: Նյութեր կան նաև Ա.Չելեպյանի Անդրանիկին նվիրված գրքում:

[5] Տե՛ս **Հ. Գ. Թուրշյան,** Սարդարապատի հերոսամարտը, Եր., 1969:

Հնարավոր է, որ ժամանակին մեծ արձագանք գտած նրա այդ աշխատությունն ունենար թերություններ, իր վրա կրեր 60-ական թվականներին տիրապետող մտայնության ազդեցությունը[6], այսուհանդերձ գրքում ի մի են բերված պատմական բազմաթիվ փաստեր, որոնք միաձուլված են իրադարձությունների ժամանակակցի մեծարժեք հիշողություններին: Հ. Թուրշյանը արժանին է մատուցում Պանդուխտի հեծյալ ջոկատին ու նրա գլխավորությամբ կազմավորված ու հերոսաբար գործած պարտիզանների /«չետնիկ»/ ջոկատի ունեցած դերին Սարդարապատի ճակատամարտի ավարտական փուլում: Նա գրում է. «Հնչակյան մշեցի Պանդուխտը Վերին Թալինից և Մաստարայից ելնելով՝ իր 200 մշեցի հեծյալներով և աշխարհազորայիններով համալրելով իր շարքերը, մայիսի 26-ին թիկունքից գրոհել էր 440-րդ բարձունքի վրա, վերցրել մի թնդանոթ, գերել սպաների, կոտորել և փախուստի մատնել մնացածներին: Հետապնդման աղմուկ-աղաղակի վրա սարերի ծերպերից իջնում են թուրքական զորամասերի կողմից մինչև այդ օկուպացված Սոգյութլու, Ղըրմըզլու, Դաղալու և Գյոզլու գյուղերի՝ սարերը փախած զինված տղամարդիկ և Պանդուխտի հեծյալներին միանալով՝ հետապնդում ու ջախջախում են «Գելիբոլու» դիվիզիայի խուճապահար փախչող ասկյարներին: Հայ կադրային զորքին մնում էր միայն ամրապնդել հաղթանակը, գրավել թշնամուց մաքրված տարածքը և մայիսի 28-ին հասնել Աղին կայարանը» /այստեղ անկասկած նկատելի է հեղինակի կողմից հայկական կանոնավոր բանակի զորամասերի դերի նվազեցում- Հ. Մ./:

Պանդուխտի գլխավորած հայերի այդ սխրանքը Հ. Թուրշյանը համեմատում էր Սեբաստացի Մուրադի սարիղամիշյան հանդուգն պլանի հետ, որը, սակայն, չէր իրակա-

[6] Այդ մասին տե՛ս **Ա.Հ. Հարությունյանի** «Թուրքական ինտերվենցիան Անդրկովկասում 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները» աշխատությունը, Եր., 1969, էջ 179-189:

նացվել մի շարք խանգարող հանգամանքների պատճառով: Ավելորդ չենք համարում մասնակի խմբագրությամբ վկայակոչել Հ. Թուրշյանի մտքերն այդ մասին:

«Պանդուխտի այս փայլուն օպերացիան /թշնամուն թիկունքից հարվածելը/ ճիշտ և ճիշտ այնպիսի օպերացիա էր, ինչպիսին... Սեբաստացի Մուրադը ցանկացել էր կատարել Սարիղամիշում, սակայն գեներալ Արեշովը /Ալեքսանդրապոլի զորախմբի հրամանատարը/ չէր ընդառաջել նրան», իսկ ՀՀ Դաշնակցության ղեկավարները չէին կարողացել հակազդել գեներալ Արեշովի վրա: Բարեբախտաբար, - ավելացնում էր նա,- Սարդարապատում Պանդուխտին խանգարող չկար»[7]:

Պանդուխտի ու նրա ջոկատի սխրանքը ժամանակին այնպիսի արձագանք էր գտել, որ, ինչպես վկայում է Թուրշյանը, «այս մասին առաջին անգամ գրվել է դաշնակցության օրոք /նկատի ունի Հայաստանի Առաջին հանրապետության ժամանակաշրջանը/ լույս տեսնող «Ռազմիկ» թերթում: Նա նաև հիշում էր Պանդուխտի Թափառականի,- ինչպես կոչում էին հնչակյան կուսակցության նրա ընկերները,- ու նրա ջոկատի վերոհիշյալ սխրանքի վերաբերյալ Ե. Չարենցի հիացական արձագանքը «Երկիր Նայիրի» վեպում: Չարենցն իրեն բնորոշ ոճով փառաբանում էր Թափառականի պայծառ հիշատակը: Բնութագրելով Մուշի հնչակյան կուսակցության տեղական կազմակերպության ճանաչված դեմքերից մեկին՝ Միքայել Սեֆերյանին /Սերյանին/, Թափառական - Պանդուխտին, որը որոշ ժամանակ պայքարի փորձ էր կուտակել բախտակից Բուլղարիայում, Սերբիայում ու Մակեդոնիայում, Չարենցը գրում էր. «Վայել էր այդ դեմքին եվրոպական ծողոտի գլխարկը, նուրբ «պանաման»՝ սպիտակ ու լայնեզր, բայց ծածկել էր այդ դեմքն ահռելի մի փափախ, իսկ կողքից կախել էր ընկ. Թափառականը պատկառելի մի զենք /մաուզերը-Հ. Մ./, որը

[7] **Հ. Գ. Թուրշյան**, Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969, էջ 167-168:

հետագայում խորհրդանիշը դարձավ ամբողջ մի «պետական կազմակերպության»: Չէր, հազար ու բյուր անգամ չէր սազում այդ զենքը ընկ. Թափառականին, բայց ընկ. Թափառականը, ինչպես նա ցույց տվեց այդ հետագայում /նկատի ունի Սարդարապատի ճակատամարտում Պանդուխտի սխրանքը./ արժանի էր, այո՛, այդ զենքը կրելուն»:

Ե. Չարենցը, հիացած Պանդուխտի ու նրա զինվորների և պարտիզան գյուղացիների հերոսությամբ, ընդհանրապես հիացած Սարդարապատի հաղթանակով, պոետական իր ձոնով հավերժացնում էր նրա հայրենանվեր վարքագիծն այդ բախտորոշ ճակատամարտում[8]:

«Երկիր Նայիրի»-ում չարենցյան վարպետությամբ նկարագրված է Առաջին աշխարհամարտի տարիների կամավորական շարժումը Կարսում[9], որտեղից կամավորները պետք է մեկնեին ռազմաճակատ «ընկ. Թափառականի խմբապետությամբ», «Նայիրյան առաջին զորքը»՝ հայտնի խմբապետի առաջնորդությամբ...»:

Ամբողջացնելով «Թափառական» Պանդուխտի կերպարը՝ Չարենցը վկայակոչում է Կարսի կայարանում նրա ելույթը, որով պատասխանելով «ազդեցիկ անունների հարգալից ճառերին», նա ասում է. «Եթե այդ հարգանքի մի հարյուրերորդը գոնե նրանք արտահայտեին գործով, գործնական օգնությամբ նվիրական գործին՝ այն ժամանակ, այո՛... ինքը ևս ոչ մի վայրկյան չի կասկածի, որ հեռու չէ այն օրը, երբ ազատագրված կլինի Երկիրը Նայիրի...»:

Սարդարապատում Պանդուխտի հայրենանվեր գործունեությանը միանգամայն օբյեկտիվ, ճշմարտացի գնահատական է տվել նաև ֆրանսահայ անվանի պատմաբան Սերժ Աֆանասյանը, որը հնարավորություն է ունեցել օգտվելու տարբեր լեզուներով, այդ թվում՝ թուրքերենով լույս տեսած,

[8] **Եղիշե Չարենց**, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1966, էջ 161-162:

[9] Նույն տեղում, էջ 164-176:

ինչպես նաև անտիպ պատմական նյութերից: Նա նշում է, որ մայիսի 19-ին Սիլիկյանը շտաբից հրաման է ստանում իր տրամադրության տակ եղած ուժերը կենտրոնացնել էջմիածնի շրջանում: Այդ զորամասերի կազմում էր նաև «Մակեդոնի, Մուրադի /Բուլանըղցի-Հ. Մ./, Պանդուխտի ու Սեպուհի պարտիզաններից կազմված մի գումարտակ»[10]: Այնուհետև, հիշատակելով ճակատամարտի մասնակից Յաբլոկովի /Խնձորյան/ «Հայը» ինքնակենսագրական գիրքը՝ նա հատվածներ է բերում այդ գրքից. «... և շուտով հայերն այլևս չեն սպասում, մինչև թուրքերը նահանջեն: Մոռանալով գնդակ ու արկ, նրանք նետվում են գրոհի... Իմ զինվորները նույնն են անում՝ չսպասելով, որ ես նրանց հրաման տամ: Թուրքական դիրքերը գրավեցին առանց նկատելի կորուստների: Ավելի ուշ ես իմացա, որ թուրքերը ստիպված էին դրանք լքել, որովհետև նրանց թևը օղակված էր հայ կամավորների ջոկատի կողմից, որն անսպասելիորեն հայտնվել էր կռվի դաշտում... Ես չեմ կարծում, որ երբևէ եղել եմ ավելի երջանիկ, քան 1918-ի մայիսի 25-ի լույս 26-ի գիշերը»[11]:

Սարդարապատի ճակատամարտում մայիսի 21-ից մինչև 29-ը Պանդուխտը արխիվային պատմական սկզբնաղբյուրներում երևում է ամսի 26-27-ի վճռորոշ ճակատամարտում: Մեզ հետաքրքրող հարցի առնչությամբ առավել նշանակալից պատմական փաստաթուղթը Սարդարապատի ջոկատի շտաբի պետ, հետո՝ Երևանյան ջոկատի շտաբի պետի տեղակալ Ալեքսանդր Շնեուրի՝ «1918 թվականի մայիսի 24-ից մինչև 27-ը սարդարապատյան մարտերի նկարագրություն» զեկուցագիրն է:

«Մայիսի 27-ի առավոտյան,- ասված է այդ մեծարժեք պատմական փաստաթղթում,- թուրքերի տեղակայման թևով ուղարկվեց առաջին մարտկոցի 2 հրանոթ՝ Իգդիրյան գնդի 6-րդ վաշտի հրաձգային ջոկատի պաշտպանությամբ: Այդ թնդանոթները գնում են դեպի հյուսիս՝ Թալինի ճանապարհով

[10] **Սերժ Ափանասյան**, Սարդարապատի հաղթանակը /Հայաստան, մայիս, 1918/, Երևան, 1991, էջ 37:

[11] **Սերժ Ափանասյան**, նշվ. աշխ., էջ 54: Տեքստում ընդգծումը իմն է-Հ.Մ.:

և դիրքեր գրավում թիվ 440 բարձունքի դիմաց: Պանդուխտի հեծելազորը առաջ է շարժվում... և մարտի բռնվում թուրքական հեծելազորի հետ: Ժամը 9-ին սկսվում է հրետանային նախապատրաստությունը. մեր հրետանին գործում է հիանալի: Թուրքերի գնդացիրները ստիպված փոխում են իրենց տեղերը... Երկու թևերով հայերի հարձակման հետևանքով թուրքերը խուճապահար փախչում են դեպի Կարա-Բուռունի ճանապարհը՝ դեն նետելով հանդերձանքը: Մեր հեծելազորը /Պանդուխտի-Հ. Մ./ հետապնդում է նրանց: Ձախ զորասյունը հետապնդելով թուրքերին երկաթգծի երկայնքով՝ գրավում է Արաքս կայարանը և Մաստարա կիսակայարանը /գյուղից դեպի արևմուտք, 6-7 կմ հեռավորության վրա- Հ. Մ./: Աջ զորասյունը, որի կազմում էին նաև երզնկացիները, երեկոյան մոտենում է Մաստարա գյուղին: Պանդուխտի հեծելազորն իր ճանապարհին կոտորելով մանր ջոկատները /թուրք-թաթարական և քրդական-Հ. Մ./, շարունակում է հետապնդել թշնամուն, Ղըրմըզլուի և Գյոզլուի վրայով մայիսի 28-ին հասնում է Սոգյութլի: Այստեղ Պանդուխտի շուրջը համախմբվում են շուրջ 1000 «չետնիկներ» /պարտիզան գյուղացիներ, որոնք հետապնդում են թուրքերին-Հ. Մ./: Թուրքերը խուճապահար են: Նրանց գումակներն անցնում են Արփաչայի արևմտյան ափը: Կապը նրանց հետ, փախուստի պատճառով, ընդհատվում է:

Մարդիկ ուժասպառ են, ջուր և սննդամթերք չկա: Սարդարապատի ջոկատին հրամայված է կանգ առնել Մաստարա կիսակայարանի մոտակա բարձունքում: Մայիսի 28-ին ջոկատի զորամասերը գրավում են Ղարա-Բուռունը, Ներքին և Վերին Թալինները»[12]: Փաստաթղթից պարզ երևում է, որ Պանդուխտի

[12] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 82, թ. 15-17: Ալ. Շնեուրի զեկուցագրում եղած անառարկելի փաստերին չեն համապատասխանում, մեզ նույնպես չեն համոզում, Մ. Հ. Մանասերյանի «Հիշողություններ Սարդարապատի հերոսամարտից /1918թ. մայիսի 22-29/», որը հրատարակության է պատրաստել պաշտոնաթող գնդապետ Վ. Մուրադյանը /տե՛ս «Հայկական բանակ», նո. 2/16//, 1998թ. էջ 91, 95:

հեծելազորը և Սոգյութլուի շրջանում նրա շուրջը համախմբված շուրջ 1000 «չետնիկները» Սարդարապատի մոտ պարտված թուրքերին հետապնդող գլխավոր ռազմական ուժերի թվում են: Նրանց ավանդը Սարդարապատի հաղթական ճակատամարտի ու թուրքերի խայտառակ պարտության մեջ ակնառու է: Այդ մասին է նաև Մ. Սիլիկյանի հեռագիրը. Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդին: «Եռօրյա համառ մարտերից հետո Սարդարապատի ուղղությամբ մայիսի 27-ին շրջանցված թևերից ջարդված թուրքերը նահանջեցին՝ հետապնդվելով մեր զորքերի կողմից: Հետապնդումը տեղի էր ունենում Կարակալա կայարանի և Սոգյութլու գյուղի ուղղությամբ»[13]:

1929թ. սեպտեմբերի 7-ին, պատասխանելով իր հուշերի վրա աշխատող գեներալ Նազարբեկյանի հարցումին, Մ. Սիլիկյանը 1918թ. մայիսի 20-29-ը տևած մարտերի վերաբերյալ գրել է. «Մայիսի 20-ին սկսվեց թուրքերի հարձակումը Ալագյազի ձախ փեշերի շրջանում երկաթուղու երկայնքով: Տեղական թուրքերը /Ազգային խորհուրդ/ կապ էին հաստատել թուրքերի հետ /բանակի հրամանատարության-Հ. Մ./ և նրանց համառորեն կոչ էին անում գրավել Երևանը...

Սարդարապատյան ջոկատին /որի պարտիզանական 5-րդ գնդի կազմում էր նաև Պանդուխտի հեծելազորը-Հ. Մ./... հրամայեցի առաջ շարժվել Արագած լեռան փեշերով՝ հյուսիս, լուսաբացին շրջվել դեպի արևմուտք, դուրս գալ թուրքերի թիկունքը՝ նշելով ճշգրիտ վայրը: Մայիսի 27-ի լույս 28-ի գիշերն այդ գումարտակները իրագործելով ռազմախաղը՝ անցան հարձակման և թուրքերին հետ մղեցին դիրքերից, որոնք նահանջեցին նաև 5-րդ պարտիզանական գնդի ճնշման տակ: Նահանջն այնքան հանկարծակի էր, որ առաջ շարժվող ջոկատը մինչև Անի կայարան չհանդիպեց թուրքական զորամասերի:

[13] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 18, թ. 11-12: Այդ մասին տե՛ս նաև **Հրանտ Ավետիսյան**, Հայոց ազգային միասնության հաղթանակը: 1918 թվականի մայիս: Երևան, 1998, էջ 105-106:

Մայիսի 22-ից 29-ը 8 օր տևած մարտն ավարտվեց թուրքերի լրիվ պարտությամբ, նրանց դեպի Ալեքսանդրապոլ նահանջով»:

Շարունակվող հաղթական մարտերի առնչությամբ մայիսի 26-ին Արամ Մանուկյանը հեռագրում է Մ. Սիլիկյանին. «Ուրախ եմ հաղորդելու Ձեզ, որ Ձեզ վստահված բանակի հաղթանակը Սարդարապատում կենարար ազդեցություն ունեցավ մեր ժողովրդի վրա: Ոտքի է ելել ոչ միայն Երևանի նահանգը, այլև Ղազախն ու Դիլիջանը»[14]:

Առայժմ այսքանով բավարարվենք, գրելով հայոց ազգային-ազատագրական շարժման «պայծառ» /Ե. Չարենց/ դեմքերից մեկի՝ Պանդուխտի մասին, որն արյան ու կրակի միջով էր անցել 1914-1918 թվականներին և հայկական բանակի կանոնավոր զորամասերի կազմում ու նրանց հետ կարևոր դեր խաղացել Սարդարապատի ճակատամարտի օրերին՝ ստանձնելով «Հերկրից» իր հետ եկած անձնազոհ հեծյալների և «Արագածի փեշերին» ծվարած հազարավոր արևմտահայ և Կարսի ու Շիրակի փախստական գյուղացի-պարտիզանների ղեկավարությունը՝ հանուն կործանման եզրին կանգնած Հայրենիքի փրկության: Նա և իր օգնականներն էին, որ տեղացիների հետ կազմակերպել, իրենց հետ բերած զենքով զինել, վարժեցրել էին Շիրվանջուլու-Սոգյութլու-Տուշխալա ճակատի, «Գող մաղարայի» գյուղացի պարտիզաններին /տե՛ս նաև Խ.Սարգսյանի հոդվածը և կազմած քարտեզը/:

Շիրակի անվանի բարերար Մելիք Բոզիկյանն ու մյուսները, ովքեր *ամիսներ շարունակ,* թեկուզ և թուրքական օկուպացիայի պայմաններում, տասնյակ հացթուխներ ու կերակուր պատրաստողներ էին ոտքի հանել, կերակրում էին հատկապես Արևմտյան Հայաստանից եկած սասունցի, մշեցի և այլ գաղթականներին, որոնց պատսպարել էին գավառամասի կենտրոնում՝ Մոլլա - Գյոքչայում ու հարևան գյուղերում,

[14] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45,ց. 1, գ. 18, թ. 11-12:

որպեսզի նրանք այդ ընթացքում տեղավորվեին, բնակություն հաստատեին Շիրակի ու Արագածոտնի գյուղերում: Մի քանի գյուղացիներ տեղավորվեցին հենց Մելիքի տանը, նրա հյուրընկալ օջախում: Այդ ժամանակներում էր, որ Թալինի կողմերում հիմնադրվեցին կամ վերակենդանացան սասունցիների, մշեցիների մի շարք գյուղեր...

Այնպես որ, Պանդուխտն ու գաղթականներին ուղեկցած այլ խմբապետներ բավականաչափ «ռեզերվ» ունեին, որպեսզի իրենց ջոկատներում ընդգրկեին պայքարի պատրաստ փախստականներին և կազմակերպեին «չետնիկների» 1000 հոգանոց ջոկատ, Մաստարա-Մոլլա-Գյոքչա գծից արևմուտք, դեպի Արփաչայ ընկած սարերում համախմբեին թուրքերից փախած և սարերում հավաքված տղամարդկանց ու կազմակերպեին նրանց պայքարը: Հարկ եմ համարում նշել, որ Շիրակի գոյապայքարի շտաբը գտնվում էր Սոգյութլի գյուղում:

Հայտնի է, որ թուրքերը Շիրակում կայազորներ ունեին մինչև 1918թ. նոյեմբերի կեսերը, երբ հոկտեմբերի կեսերին հատկապես «Ագամեմնոն» նավի վրա կնքված զինադադարից հետո գերմանա-թուրքական բլոկը ստիպված էր ընդունել իր պարտությունը և հեռանալ Անդրկովկասից, Արևելյան Հայաստանից, այդ թվում՝ Շիրակից: Այդ նույն ժամանակաշրջանում էր, որ Մոլլա-Գյոքչայում ժամանակավորապես պատսպարված գաղթականները, հատկապես սասունցիները, բազում թուրք օկուպանտներ սպանեցին: Թուրքերի դեմ վճռական էին գործում նաև տեղի բնակիչները: Մոլլա-Գյոքչայում մինչև այժմ էլ հպարտությամբ են պատմում, թե ինչպես Բոզիկյան Այվազի կինը՝ Պետոենց Սիրունն իր օջախում խեղդել էր մի թուրք ասկյարի, որը ցանկացել էր օջախի երեխաների բերանից կտրել ու տանել, թալանել վերջին պատառ սննդամթերքը, յուղն ու պանիրը*... Այսպիսի փաստեր կային ինչպես Մոլլա-Գյոքչայում

* Այդ մասին տե՛ս նրա թոռնուհու՝ տնտեսագիտության դասախոս Զուլիետա Բոզիկյանի /Համբարյան/ հուշերը, որոնք պահպանվում են հեղինակի արխիվում:

ու Սառնաղբյուրում, այնպես էլ Շիրակի այլ գյուղերում:

Համառոտակի այժմ անդրադառնանք մի հարցի՝ Ձիթհանքովի կոտորածին, որը սերտորեն կապված է վերոհիշյալ իրադարձությունների հետ, և որը մեր պատմական գրականության մեջ դեռևս լուսաբանված չէ:

Մեր կարծիքով, հաղթանակից անմիջապես հետո Պանդուխտի հանկարծակի և շտապ հեռանալը Սարդարապատի ջոկատից դեպի Թալին-Մաստարա-Սոգյութլու պայմանավորված էր թուրքական կանոնավոր զորամասերի պաշտպանությամբ, այդ շրջանների քուրդ-թաթարական շեյխերի կողմից հայ բնակչության կազմակերպած կոտորածով, որն ավարտվել էր մայիսի 25-ին Ձիթհանքովում՝ ավելի քան 3000 հայերի՝ վայրագության բոլոր սահմանները գերազանցած նախճիրով: Այն Արևելյան Հայաստանում, Շիրակում ու Արագածոտնում թուրք բարբարոսների կողմից հայ ժողովրդի ցեղասպանության ուղղակի շարունակությունն է, որը Արևմտյան Հայաստանում իրագործած ցեղասպանությունից հետո ավելի «կատարելագործված», «անզիջում, անթերի» էր:

Սարդարապատում կրած խայտառակ պարտությունից հետո վրեժից կատաղած, «արյունն աչքերը կոխած» «ամենաբարբարոս ցեղի» (Ավ. Իսահակյան) այդ վրիժառու մնացորդները մայիսի 23-24-ին հավաքեցին ճանապարհներին պատահած հայերին՝ տեղացի, թե՛ գաղթական և նրանց տեղափոխեցին գլխավոր ճանապարհներից մի կողմ ընկած Ձիթհանքով (Բազիրխանա) գյուղը, որտեղ էլ իրագործեցին նրանց կոտորածը: Նրանք շուրջ 500 հոգու լցրեցին Շահինյան՝ Շահնանց եղբայրների երեք մարագները, ամուր փակեցին դրանց դռները և պատուհաններից նռնակներ նետելով, գնդացիրներից ու հրացաններից կրակելով՝ սպանեցին նրանց, և հետքերը կորցնելու նպատակով այրեցին մարագները: Բազմաթիվ հարսներ ու աղջիկներ, ձգտելով փրկել իրենց պատիվը՝ /այլ ելք չգտնելով/ գցեցին իրենց գյուղից հարավ-արևմուտք գտնվող լճակը և խեղդվեցին այնտեղ: Շուրջ 2000 հայեր՝ և՛ արևմտահայ, և՛ Կարսի ու Շիրակի երբեմնի բնակիչներ գնդակահարվեցին,

սրախողխող արվեցին գյուղի հյուսիսարևելյան կողմի սարերում:

Զբաղված լինելով Սարդարապատում Պանդուխտը, ամենայն հավանականությամբ, այդ չարագույժ լուրը ստացավ հաղթական ճակատամարտից անմիջապես հետո, ամսի 27-ի երեկոյան և շտապեց օգնության հասնել դժբախտության մեջ հայտնված ժողովրդին: Ինչպես գրում էր Ալ. Շնեուրը,- ճանապարհին կոտորում էր թուրքերի, տեղացի քրդերի ու թաթարների «մանր ջոկատները»[15]:

Այս իրադարձություններին 1919 թվականին անդրադարձել են անվանի պատմաբան Ա.-Դո-ն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) և Հայաստանի Հանրապետության պառլամենտի անդամ, ճանաչված հրապարակախոս Իրազեկը (Հակոբ Տեր-Հակոբյան), որոնք որոշ ժամանակ անց լինելով տեղում, տեսնելով դժոխային տեսարանը՝ հարյուրավոր գանգեր ու ոսկորներ, բազմաթիվ վկաներից, այդ թվում նաև հրաշքով փրկված, Ջիթհանքով գյուղի բնակիչ մի տղամարդից ստացված տեղեկությունների հիման վրա նկարագրել են կատարվածը՝ «Տաճկական գազանությունները Ալեքսանդրապոլի գավառում» ձեռագիր, թե ժամանակի մամուլում հրապարակված նյութերում: Իր հրապարակումների վերջում Իրազեկը մասնավորապես գրում է. «Մասնավորելով խոսքը Ալեքսանդրապոլի գավառի կոտորածների մասին, պետք է ասենք, որ այդ գործում չափազանց տխուր է նույն գավառում գտնվող քրդերի դերը: Նրանք ամենագործուն մասնակցություն են ունեցել հայ ժողովրդի կոտորածների ու հարստահարության մեջ՝ ղեկավարվելով զանազան բեկերից ու աղաներից:

- Ավելորդ չենք համարում,- շարունակում է նա,- հրապարակել գոնե ամենագլխավորների անունները, որոնք հետևյալն են. բուղոլեցի Քոռ նամեի տղա Զոռբեն, սույսըզցի Շամիլ Մամե օղլին, նույն տեղացի խուդո Բշար օղլին, Քրդի

[15] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 82, թ. 17:

Ղլիջաթաղցի՝ Զալալցի Սուեի Ամարը և Այիբ Քյալաշ օղլին, Հկօցի Սայադ բրո օղլին, ղարաղուլեցի Դավրեժ օղլին, ալաջեցի երկու եղբայրները՝ Տայո և Հասան բեկերը և Ղըզըլ մաղարեցի՝ Ամար հասան Աղա օղլին... Ամբողջ ժողովուրդը զայրույթով է հիշում նրանց անունները, մանավանդ որ եղել են իրար մոտիկ հարևաններ:

Այժմ, որքան մեզ է հայտնի, նրանք համարյա բոլորն էլ ողջ են և ապրում են Ղարսի Շրջանում*: Գոնե այդպես էր հավատացնում մեզ Ալեքսանդրապոլի ժողովուրդը:

- Շատ ցավալի է,- ավելացնում է հեղինակը, որ նման ոճրագործները մեզանում փոխանակ ամենախիստ ձևով պատժվելու, ման են գալիս ազատ և թերևս նորանոր ոճիրներ նյութում»[16]:

Այժմ քննարկենք մի այլ կարևոր հարց, որը 1918թ. Շիրակի բնակչության գոյապայքարի անբաժանելի մասն է կազմում, նրա տրամաբանական շարունակությունը: Այդ հարցը Սարդարապատի և Բաշ-Ապարանի հաղթական ճակատամարտից հետո ամբողջ Արագածոտնի, Շիրակի, Ալեքսանդրապոլի ազատագրման հարցն է:

Բանն այն է, որ 1918թ. թուրքական արշավանքի ժամանակ Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի այլ հայաբնակ շրջանների մեջ թուրքական վանդալների հասցրած ավերածությունների, կազմակերպած ցեղասպանության, թալանի առավել մեծ մասը բաժին է ընկել Շիրակին: Արխիվներում պահպանվող պատմական նյութերը անառարկելիորեն հաստատում են այդ հետևությունը: Վկայակոչենք փաստեր, որոնք հայտնաբերված են մասնավորապես ՀՀ ԳԱԱ պատ-

* 1919թ. Կարսը և նրան հարակից ընդարձակ շրջանները գտնվում էին Հայաստանի Հանրապետության կազմում:

[16] Տե՛ս արդեն նշված աղբյուրները, որոնք, ինչպես նաև Շիրակին վերաբերող այլ նորահայտ փաստաթղթեր, ամբողջությամբ կհրապարակվեն առաջիկայում՝ հեղինակի «Մարալիկ» մենագրության մեջ:

մության ինստիտուտում պահպանվող Լեոի ֆոնդից: Նման բազմաթիվ նյութեր կան նաև ՀՀ ՊԿՊԱ-ի ֆոնդերում, ժամանակի մամուլում: Պարզվում է, որ եթե Երևանի նահանգի Սուրմալուի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Շարուրի գավառներում առավելապես տուժած գյուղերի թիվը միասին վերցրած հասնում է 116-ի, իսկ այդ գյուղերի թալանված տնտեսությունների թիվը՝ 32.960-ի, ապա միայն Ալեքսանդրապոլի գավառի նման գյուղերի թիվը 62 էր, իսկ տնտեսություններինը՝ 11.453: Ելիզավետպոլի, Թիֆլիսի, Բաքվի նահանգների, Կարսի մարզի առավելապես թալանված գյուղերի թիվը 89 էր, իսկ դրանցում եղած տնտեսությունների թիվը՝ 7234[17]: Այդ փաստերը Թիֆլիս՝ Հովի. Թումանյանի գլխավորած կորուստների հաշվառման բյուրոյին էին ուղարկվել վերոհիշյալ մարզերից, տեղերում կազմակերպված ժողովների ու առանձին հեղինակավոր անձանց կողմից:

1918թ. մայիսից մինչև դեկտեմբեր զոհերի և գերի տարած հայերի թիվը (առանց Ալեքսանդրապոլի) կազմել է 10.300 (ըստ «Հառաջ»-ի տվյալների՝ 5086 զոհ, 4660 գերի/: Ի դեպ, Մոլլա-Գյոքչայի, Սառնաղբյուրի և դրանց հարևան գյուղերի զոհերի ընդհանուր թիվը հետևյալ պատկերն ունի[18]:

[17] Տե՛ս՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Լեոի ֆոնդ, ց. 1, գ. 253, թ. 1: Այդ փաստերը հրապարակված են Հր. Ավետիսյանի նշված աշխ. մեջ, էջ 271-272: Շիրակում 1918թ. մարդկային զոհերի, թալանի մասին. տես՝ նաև Ռ.Գրիգորյանի հրապարակումը «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրում (նո.1, 1996թ, էջ 103-110):

[18] Տե՛ս՝ «Հառաջ», 17 հոկտեմբերի, 1919թ. տե՛ս նաև «Բանբեր Հայաստանի արխիվների» նո. 1, 1996թ., էջ 106-110: Մեր ձեռքի տակ են նաև ամբողջ գավառի (առանց քաղաքի) սպանվածների և գերի տարվածների փաստերը, Իրազեկի, Ա-Դո-ի հրապարակած ու ձեռագիր տվյալները:

Աղին՝	465	սպանված,	30	գերի
Զարնջի՝	60	“–”	28	“–”
Ջիթիանքով՝ (իրականում՝ 3000)	455	“–”	51	“–”
Տաշղալա	21	“–”	48	“–”
Սոգյութլու	180[19]	“–”	113	“–”
Ադիաման	148	“–”	79	“–”
Մոլլա-Գյոքչա	35	“–”	71	“–”
Բողազքյասան	25	“–”	20	“–”
Սիրվանջուղ	218	“–”	36	“–”
Մահմուդջուղ	177	“–”	17	“–”
Հոռոմ	100	“–”	7	“–”

Այդ և այլ գյուղերից տարված գերիներից վերադարձել են շատ քիչ թվով մարդիկ:

Մայիսան հաղթական հերոսամարտերից հետո Արագածոտնի, Շիրակի, Ալեքսանդրապոլի, ինչու չէ նաև Կարսի ազատագրման հարցը հատկապես Մովսես Սիլիկյանի, նրա շուրջը համախմբված սպաների, կամավորական-պարտիզանական ջոկատների հրամանատարների մտահոգության հարցն էր:

Մայիսի 29-ին հայոց բանակի, աշխարհազորայինների, հազարավոր պարտիզանների բարձր մարտական ոգու պայմաններում հրապարակվեց գեներալ Սիլիկյանի նոր «Դիմում-հրամանը» ուղղված «հայեր»-ին՝ Ալեքսանդրապոլի ազատագրմանը մասնակցելու կոչով:

Դրանում ասվում էր. «Հայե՛ր, մենք պետք է հետ վերց-

[19] 1918թ. մայիսին Սոգյութլուի դիմադրության պայմաններում վերոհիշյալ թվերը մտահոգություն և տարակուսանք են առաջացնում: Ամենայն հավանականությամբ այդ կորուստները վերաբերում են 1918թ. հունիս-նոյեմբեր ժամանակաշրջանին, երբ Շիրակում գործում էին թուրքական կայազորները:

նեենք Ալեքսանդրապոլը, որը այնպես խայտառակորեն գրավել են թուրքերը: Անշուշտ ախորժակ ունեցող թուրքերը պահանջում են, որպեսզի մենք իրենց տանք Ախալցխայի, Ախալքալակի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի (վանքերով) գավառներն ամբողջությամբ, Երևանի և Նախիջևանի գավառների մի մասը:

Մի՞թե մենք կգնանք այդպիսի ստորացման:

Մի՞թե հանգիստ և թեթև սրտով թշնամուն կհանձնենք մեր հարազատ հողերը:

Ոչ՛, երբեք: Այդ ստորությունը չի լինի, եթե մենք շարժվենք դեպի Ալեքսանդրապոլ, այն ևս վերցնենք 3-4 օրում:

Եվ այդպես, չհապաղել հայեր՛: Բոլորն ի զեն՝ դեպի Ալեքսանդրապոլ»[20]: Սակայն Սիլիկյանի և շատերի այդ նվիրական ցանկությունը, ժամանակի չափազանց բարդ ռազմաքաղաքական իրադրության պայմաններում չկատարվեց: Դրա պատճառների վերաբերյալ եղած մեկնաբանություններից, մեր կարծիքով, հատկապես արժեքավոր են ու հավաստի Հայաստանի Առաջին հանրապետության անվանի ռազմաքաղաքական անվանի գործիչ Ք. Արարատյանի վկայությունները: 1919թ. փետրվարի 7-ին Թիֆլիս, Հովհ. Թումանյանի գլխավորած Առաջին աշխարհամարտում հայ ժողովրդի կորուստների հաշվառման բյուրոյին իր նո. 52 «Գաղտնի» զեկուցագրում[21] նա գրում է. «Թուրքերի հետ հաշտություն, ապա և խաղաղություն կնքելու պահին (խոսքը 1918թ. հունիսին Բաքումի բանակցությունների մասին է-Հ. Մ.) գեներալ Սիլիկյանի երևանյան ջոկատի գործերը մեզ համար միանգամայն նպաստավոր էին, բայց, ցավոք սրտի, հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Նազարբեկովի հեռագրերը՝ Ղարաքիլիսայի մոտ մեր զորքերի լիակատար անհաջողությունների[22] վերաբերյալ, ստիպեցին դադարեցնել դեպի Ալեքսանդրապոլ երևանյան ջոկատի հարձակողական գործողությունները, որովհետև Երևանը հայտնվել էր հակառակորդի կողմից հյուսիս-արևելքից ներխուժման վտանգի առաջ:

Դրանով ավարտվեցին հայկական զորամասերի գլխավոր գործողությունները ընդդեմ թուրքերի, որովհետև առաջին օրերի բոլոր գործողությունները (ներառյալ՝ մինչև ամսի 10-ը) արդեն վերաբերում էին 1918թ. հունիսի 4-ին Բաքումում կնքված զինադադարի ու հաշտության պայմանների կատարմանը:

Հունիսյան այդ օրերին,-շարունակում էր Արարատյանը,-թուրքերը երկաթուղով առաջ էին շարժվում դեպի Ռելուխանլու և ապա դեպի հարավ: Իրենց առաջխաղացման ճանապարհին նրանք ավերում էին հայկական գյուղերը, հատկապես Ղամարլուի շրջանը (Արտաշատ) և հարավից մոտեցան Երիվանին 7 վերստ հեռավորությամբ՝ հանդիպելով հայկական զորամասերի դիմադրությանը:

Հունիսյան անսպասելի ռազմական գործողությունների պատճառը այն էր, որ հայերը, որոնք կտրված էին ամբողջ աշխարհից, իրադարձությունների վերաբերյալ տեղեկություն չէին ստանում անգամ իրենց ներկայացուցիչներից, որոնք Բաքումում խորհրդակցում ու ստորագրում էին խաղաղության վերաբերյալ այս կամ այն պայմանագիրը: Այդ էր պատճառը, որ թուրքերը կարծում էին, թե հայերը դիտավորյալ չէին կատարում իրենց պարտավորությունները և ներկայացված վերջնագրերին պատասխանում էին զենքի ուժով:

Այս ամենը նկատած, իրենց ամբողջ խորությամբ ըմբռնած և արդարացիորեն զայրացած որոշ քաղաքական ու ռազմական գործիչների (Քաջազնունի, Խատիսյան, Պապաջանյան,

---

[20] Տե՛ս **И. Х. Баграмян,** Мои воспоминания , Ереван, 1979г., с. 89. Տե՛ս նաև **Հր. Ավետիսյան,** նշվ. աշխ. , էջ 117:

[21] Տե՛ս՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, g. 1, գ.84, թ.5-6:

[22] Սեծ Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին հանգամանորեն տե՛ս **Վահան Մելիքյանի** հոդվածը («Հայկական բանակ», նո. 2, 1998թ., էջ 49-62):

Նազարբեկյան) համար Արարատյանը միանգամայն արդարացիորեն եզրակացնում էր. «Խորհում եմ, որ մի ժողովուրդ, որից խլել են ամեն ինչ, և որին մնացել է մի փոքրիկ հողակտոր և մի քաղաք՝ Երիվանն ու Սուրբ Էջմիածինը, մինչև վերջին մարդը պետք է մարտնչի, այլապես նրան սպասվում է թշվառացում ու կործանում»:

Հենց այդպես էլ մտածում էր Մովսես Սիլիկյանը, որը մայիսի 29-ին, Բաթումի տխրահռչակ պայմանագրի կնքումից մի շաբաթ առաջ, պահանջում էր, «հրամայում» էր *3-4* օրվա ընթացքում ազատագրել Շիրակն ու ետ գրավել թուրքերին հանձնված Ալեքսանդրապոլը, դրանով մաքրել հայկական բանակի ու ժողովրդի վրա եղած սև խարանը...

Հազիվ թե Սիլիկյանը մտերիմ գործիչների՝ Արամի կամ Դրոյի միջոցով տեղյակ չլիներ, թե Հայաստանի ու հայ ժողովրդի գլխին ինչ դավեր էին հյուսվում Բաթումի բանակցությունների ժամանակ: Չ՞է որ այդ բանակցությունները վաղուց էին սկսվել, մայիսի կեսերից էլ վաղ: Գուցե՞ հենց այդ բանակցությունների հետևանքն էր Կարսի խայտառակությունից հետո Ալեքսանդրապոլի հանձնումը թուրքերին և ամբողջ Շիրակը նրանց «ողորմածությանը» հանձնելը...

Իհարկե, հենց այդպես էլ եղել է:

Հիշենք, որ մայիսի 14-ին թուրքական պատվիրակությունը պահանջում էր իրեն հնարավորություն տալ «բարեկամաբար օգտագործել Ալեքսանդրապոլ-Զուլֆա երկաթուղին»:

Սիլիկյանը, հակառակ բանակի գլխավոր հրամանատարության, Նազարբեկովի, ցանկանում էր Սարդարապատի, Բաշ-Ապարանի հաղթանակներից հետո էլ՝ ավելի ամրապնդել Հայաստանի դրությունը, վերջնականապես նրան դուրս բերել անհուսալի վիճակից, ժողովրդին մղել նոր հերոսացման...

Պատահական չէ, որ հետագայում վերհիշելով սարդարապատյան բախտորոշ իրադարձությունները և մի շարք կարևոր ընդանրացումների հանգելով՝ Սարդարապատի ճակատամարտի մասնակից «Վանոն» մարշալ Հովի. Բաղրամյանը, Մ.Սիլիկյանի մայիսի 21-27-ի ռազմական հիմնական որոշումները համարում էր միանգամայն ճիշտ, իսկ նրան բնութագրում որպես «հայկական բանակի առավել շնորհալի հրամանատարներից մեկը»:

Ճշմարիտ են և մեծ ուշադրության արժանի Ք.Արարատյանի նաև այն ընդհանրացումները, որոնք վերաբերում են մայիսյան հերոսամարտերի կազմակերպմանն ու ընթացքին: Իր «Զեկուցագրի» վերջում նա գրում է. «Ավարտելով գեներալ Սիլիկովի երևանյան ջոկատի խրոնոլոգիական կարգով գործողությունների համառոտ նկարագրությունը, ցանկանում եմ մի քանի խոսք ասել Երիվանի հայկական Ազգային խորհրդի գործունեության մասին, որի ոգին ներկայումս հանգուցյալ «Արամ փաշան» էր (Մանուկյանց)[23] և հոգով զինվորական, մեր ժողովրդական հերոս Դրոն (Կանայանց): Երիվանի շրջանում,- շարունակում էր Արարատյանը,- ամբողջ իշխանությունը կենտրոնացված էր Արամի ամուր ձեռքերում, որը լիակատար համերաշխությամբ գործում էր գեներալ Սիլիկովի և բանակին ու ժողովրդին ոգեշնչող Դրոյի հետ:

Երիվանի շրջանի զորեղության, տնտեսական ու այլ հարցերի կազմակերպման գործում Արամի ակնառու ընդունակությունները հայերի համար հնարավոր դարձրին զենքը ձեռքին պահպանել փոքրիկ հողակտորը, միակ քաղաք Երիվանը և Սուրբ Էջմիածնի վանքը *և եթե մեզ՝ հայերիս հետ հաշվի են նստել այն ժամանակ և հաշվի են նստում այժմ, ապա դա կարող եմ վերագրել բացառապես երեք անձանց՝ Արամին, գեներալ Սիլիկովին և Դրոյին»:* /Ընդգծումը իմն է - Հ.Մ./:

Մայիսյան իրադարձությունների այս վերին աստիճանի կարևոր հարցին՝ թուրքական նահանջող բանակի հետապնդմանը, Ալեքսանդրապոլի ազատագրմանը, Ղարաքիլիսիայի հայկական ուժերին օգնության հասնելուն լրջմիտ մեկնաբանություններով անդրադարձել է նաև ֆրանսիական հայազգի պատմաբան Սերժ Աֆանասյանն իր մեծարժեք «Սար-

[23] Արամ Մանուկյանը մահացել էր տիֆից, 1919թ. հունվարին:

դարապատի հաղթանակը» գրքում: Այդ հարցի առթիվ վկայակոչում ենք նրա նշած փաստերն ու որոշ մեկնաբանություններ:

«Մայիսի 30-ին գլխավոր շտաբը հրապարակում է մի հակիրճ հաղորդագրություն, որտեղ ասված էր. «Մեր զորքերը դուրս մղելով թուրքերին իրենց դիրքերից Արաքս կայարանի հյուսիս-արևմուտքում և գրավելով Կարաբուռուն կայարանն ու Վերին Թալին գյուղը՝ հետապնդում են թշնամուն Ալեքսանդրապոլի ու Մաստարայի շրջանում»:

Մայիսի 26-ին ձեռք բերված հաղթանակից հետո վերոհիշյալ Յաբլոկովը /5-րդ հրաձգային գնդի վաշտերից մեկի հրամանատարը-Հ. Մ./ մի քանի այլ սպաների հետ ռազմաճակատից կանչվում է Սիլիկյանի գլխավոր շտաբը, որը տեղավորվել էր մի վագոնում: Գնդապետ Վեքիլովը /Սիլիկյանի Երևանյան ջոկատի շտաբի պետը-Հ. Մ./ ընդունելով նրանց՝ ծանոթացնում է հաղթանակից հետո կիրառվելիք հարձակողական իր պլանի հետ, այն է՝ հասնել մինչև Ղարաքիլիսայի շրջան՝ միանալ այդ գոտում գործող գեներալ Բեյ-Մամիկոնյանի ուժերին: Դա համարձակ պլան էր, հնարավորություն էր տալիս մասնատելով թուրքական ուժերը՝ արշավն ավարտել հայերի օգտին: Սակայն այդ պլանն իր մեջ ռիսկ էր պարունակում՝ ռազմաճակատի ղեկավարներից և ո՛չ մեկը չէր համարձակվում Երևանը թողնել անպաշտպան:

Լիակատար ջախջախումից խուսափելու համար թուրքական 36-րդ դիվիզիայի և քրդական հեծյալների մնացորդները փախան Արաքսի ու Արփաչայի աջ ափը...

Տեսնելով թշնամու հապճեպ փախուստը՝ գեներալ Սիլիկյանը, որը սովորաբար շրջահայաց էր ու զգույշ, ցանկանում էր նրան հետապնդել մինչև Ալեքսանդրապոլ, հավատացած լինելով, որ ինքը կկարողանա երկու օրում ազատագրել քաղաքը: Նույն կարծիքին էր գնդապետ Վեքիլովը...

Հիրավի, հաղթանակից հետո հայկական զորքի ոգին բարձր էր այնքան, որ թվում էր ոչինչ չէր կարող նրան

կանգնեցնել: Սակայն մայիսի 30-ին Երևան ժամանած գեներալ Նազարբեկյանն արգելեց այդ օպերացիան, բավարարվելով նրանով, որ անձամբ ուզեց պարգևատրել աչքի ընկած մարտիկներին: Հայկական զորքերի ապրած դառնությունը դժվար է պատկերացնել: Տեղեկանալով գլխավոր հրամանատարի կռիվները դադարեցնելու որոշման մասին՝ Դանիել Բեկ-Փիրումյանը հայտարարում է կոմիտեի անդամներին՝ «Ես չեմ կարող իմ հաղթական զինվորներին հայտնել այդ կործանարար հրամանի մասին և նրանց ստիպել նահանջելու այն հողից, որը նրանք նվաճել են իրենց արյան գնով: Նահանջը նրանց լրիվ կբարոյալքի: Գնացեք ինքներդ կատարեք այդ նողկալի գործը»:

- Անշուշտ,- ավելացնում էր Ս. Աֆանասյանը,- Սիլիկյանի ու Վեքիլովի նախագծած գործողությունը զերծ չէր ռիսկից: Բայց դրա փոխարեն այն փաստը, որը զսպում էր հաղթական զորքերի պոռթկումը, կարող էր նրանց բարոյալքել և հանգեցնել զորքի քայքայմանը: Մի բան, որը տեղի ունեցավ մեկ ամիս հետո:

Անվիճելի է նաև, որ ռազմական հաջողությունը չուղեկցվեց քաղաքական որևէ հաղթանակով: Ամեն գնով հաշտություն կնքելու ձգտումը՝ մարդկային զոհերից խուսափելու համար, որոնք, ի միջի այլոց չխնայվեցին ռազմական գործողությունների վերջում, ստիպեց չափազանց թանկ վճարել, քանի որ այն հանգեցրերց այլ արժեքների ոչնչացմանը, արժեքներ, որոնք նվազ անհրաժեշտ չէին մի ազգի համար, որն ուզում էր գոյատևել և խուսափել անկումից: Սարդարապատի հաղթանակից հետո հայկական զորքերի ոգևորությունը, մարտավարությունը կարող էր թերևս թույլ տալ ազատագրել Ալեքսանդրապոլը: Հենվելով թուրքական աղբյուրների վրա՝ որոշ հեղինակներ պնդում են, որ *օսմանյան շատ սպաներ շտապում էին թողնել քաղաքը և նույնիսկ բարձրանում էին գնացքները* /ընդգծումներն իմն են-Հ. Մ./: Թուրքերի թվական գերիշխանությունը, հավանական է, կարող էր հետագայում իրավիճակը փոխել հօգուտ նրանց: Կոհե-

տածգեի՞ն արդյոք այդ պատճառով թուրքերն իրենց արշավանքը Բաքվի վրա, թ՞ե նրանք զիջումներ կանեին հայերին Բաթումում: Կարելի է հավատալ երկրորդ հիպոթեզին:

Ամեն դեպքում, հայերի վճռականությունը հասկացնել տվեց թուրքերին, որ այս ժողովուրդը այլևս չի խոնարհվի վայրագ ու դաժան հակառակորդի առջև:

Կարծում ենք, որ մինչև Բաթումի բանակցությունների ավարտը, մինչև պայմանագրի կնքումը Շիրակի, Ալեքսանդրապոլի, Կարսի ազատագրումը լիովին արդարացված կլիներ:

Առաջին աշխարհամարտը մոտենում էր ավարտին: Գերմանա-թուրքական բլոկը զգում էր իր մոտալուտ վախճանը: Բացառված չէր, որ իրադարձությունների նոր զարգացումն ամբողջ երկրամասում ոտքի կհաներ հայության ավելի լայն զանգվածներ, այն զգալի չափով կարող էր ետ պահել թուրքերին, ձգձգել նրանց առաջխաղացումը դեպի Բաքու: Նոր պայմաններում ռազմաքաղաքական իրադարձությունները կարող էին ընթանալ հօգուտ հայ ժողովրդի:

Վերջում հարկ եմ համարում նշել հետևյալը:

Ըստ արժանվույն գնահատելով Սոգյութլուի 1918 թվականի մայիսյան գոյապայքարը, Շիրակում դիմադրական շարժման վերաբերյալ բացահայտելով նոր, արժեքավոր փաստեր, կատարելով անհրաժեշտ ընդհանրացումներ, որոնք լրացնում են մայիսյան հերոսամարտերի պատմությունը, մենք՝ պատմաբաններս, գնահատականների հարցում պետք է դրսևորենք զգաստ և լուրջ մոտեցում: Մեր կարծիքով, դրանք հանգում են հետևյալին.

1. Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Մեծ Ղարաքիլիսայի մայիսյան հերոսամարտերը /ամսի 21ից մինչև 29/ ամենից առաջ *հայկական կանոնավոր զորամիավորումների,* բանակի կազմակերպված, վճռական գոյամարտն էր թուրքական բանակի և տեղական մահմեդական բնակչության ավազակային հրոսակախմբերի դեմ:

Հայկական զորամիավորումներին աջակցում էին աշխարհազորայինները, Արևմտյան Հայաստանից այստեղ

հասած զորաջոկատները, ռուսական կովկասյան բանակի շատ սպաներ ու զինվորներ, Երևանի նահանգի բնակչությունը: Դա բանակի ու ժողովրդի միասնական հզոր պայքարն էր, որը հանգեցրեց պատմական մեծ հաղթանակի:

2. Սոգյութլուում, նրան հարակից գյուղերում /Մոլլա - Գյոքչա, Սիրվանշուղ, Բողազքյասան Մաստարա, Մուսլուղլի, Տաշղալա/ թուրքական կանոնավոր զորամիավորումների ու տեղական զինված ջոկատների դեմ ձևավորված ճակատը կարևոր իրադարձություն է, գոյամարտ մայիսյան հերոսամարտերի պատմության մեջ: Այն արևմտահայ կամավորների, բազում փախստականների, նրանց ուղեկցող փորձառու ղեկավարների /Պանդուխտ, Սեպուհ, Մակեդոն, Բուլանղցի Մուրադ և ուրիշներ/ տեղի բնակչության ավագանու նախաձեռնությամբ ու ջանքերով ստեղծված ճակատ էր, որն իր մեջ էր առնում նաև նահանջող հայկական զորամիավորումներից, այդ ճակատի գյուղացի-պարտիզաններից, պայքարի պատրաստ արևմտահայ կամավորներից ձևավորված ջոկատները, որոնք անհրաժեշտության դեպքում պայքարի հանեցին 2-3 հազար «չետնիկներ-աշխարհազորայիններ, պարտիզաններ», մայիսի 27-ին Պանդուխտին տրամադրեցին 1000 զինված պարտիզաններ, որոնք Սարդարապատի զորամիավորումների հետ հետապնդեցին ու Արփաչայից արևմուտք քշեցին թուրքական զորքերին ու հրոսակախմբերին:

Սոգյութլուի ճակատամարտն ամենից առաջ հետապնդում էր բազմահազար փախստականների պաշտպանությունը, այն փախստականների, որոնց փրկության հույսը Ս.Էջմիածին, Երևան հասնելն էր:

Այն հիրավի հիացմունքի արժանի հերոսամարտ էր, որը դեռ կարիք ունի նոր, արխիվային փաստերով հիմնավորման ու գիտական, լուրջ ընդհանրացումների: *Այն նախորդեց մայիսյան նշանավոր հերոսամարտերին և դրական ազդեցություն ունեցավ թուրք բարբարոսների դեմ համաժողովրդական պայքարի գիտակցության արագ հասունացման գործում:*

Սոգյուբլուի ճակատամարտը, Շիրակի գոյապայքարի փաստերն արժանի տեղ պետք է գրավեն պատմական գրականության մեջ, տեղ գտնեն դպրոցական, բուհական դասագրքերում՝ որպես ժողովրդական հերոսական պայքարի էջ, որպես 1918 թվականի մայիսյան միասնական գոյամարտի անբաժանելի մաս:

* * *

Գիտաժողովում մեր զեկուցման մեջ, որը նվիրված էր Շիրակում թուրքական նվաճողների դեմ գոյապայքարի և մի քանի այլ սկզբունքային հարցերի քննարկմանը, մենք ինչ-որ չափով անդրադարձանք նաև Սոգյուբլուի 1918 թվականի մայիսյան հերոսամարտին: Մայիսի 16-ից մինչև 22-ն այստեղ տեղի ունեցած ճակատամարտը, ինչպես տեղի և Շիրակի բնակիչներն են այն անվանել՝ *«Սոգյուբլվա պատերազմը»*, անկասկած, առանձնահատուկ տեղ ունի հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտերի պատմության մեջ: Կարելի է առանձնացնել այդ ճակատամարտին բնորոշ հատկապես երկու առանձնահատկություններ.

1. նախ՝ որ Սոգյուբլու գյուղի գրեթե ամբողջ մարտունակ բնակչությունը միահամուռ ոտքի ելավ՝ մղելու մահու և կենաց գոյամարտ ընդդեմ վայրագ թշնամու:

Որքան էլ ցավալի է, բայց իրողություն է , որ ոչ միայն նոր կազմակերպված 20-25 հազար հոգուց բաղկացած հայկական բանակը, այլև ժողովրդի ճնշող մեծամասնությունը, ներքին և միջազգային օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների առկայության պայմաններում ի վիճակի չեղան, նախքան մայիսյան հայտնի հերոսամարտերը, հատկապես Կարսը և Ալեքսանդրապոլը թուրքերին հանձնելու ժամանակ, մասայաբար և վճռականորեն պայքարելու դարավոր թշնամու դեմ: Կարելի է ասել, որ *Սոգյուբլուի ճակատամարտը, նախքան մայիսյան բախտորոշ հերոսամարտերը առաջին անձնվեր, վճռական գոյապայքարն էր էրզրումը և Սարիղամիշը գրավելուց հետո անարգել առաջ շարժվող թուրքերի դեմ:*

Գյուղի բնակիչներից մի քանի տասնյակ մարդիկ հերոսացան այդ պայքարում և թեև ուշացումով, բայց երախտապարտ սերունդների կողմից արժանանում են հուշարձանի, որը՝ որպես պայքարի խորհրդանիշ, հավերժորեն կապրի սերունդների համար:

2. Սոգյուբլուի, ինչպես նաև նրա հարևան գյուղերի պայքարի մի այլ առանձնահատկությունն էլ այն է, որ այդ պայքարը միաձուլվում է ճակատագրի բերումով, մեծագույն տառապանքով այստեղ ապաստանած արևմտահայ, նաև՝ Կարսի ու Շիրակի շուրջ հարյուր հազար փախստականների հերոսական գոյապայքարի հետ: Գիտակցելով, որ դանակն արդեն ոսկորին է հասել և այլևս փրկություն չկա թուրքական յաթաղանից, փախստականներին ուղեկցած արևմտահայ փորձառու մի շարք անվանի գործիչներ, 1915-1918 թվականների հայկական կամավորական շարժման խմբապետներ, Անդրանիկի նվիրյալ զինակիցներ գլխավորեցին տեղի բնակչության, կամավորների ու նրանց միացած փախստականների պայքարը: Նրանք իրենց հետ բերած, հատկապես Կարսի անկումից հետո, անտերության մատնված պահեստներից ձեռք բերված զենքով զինեցին հերոսական գոյապայքարի ելած տեղական բնակչության ու փախստականների մարտունակ ուժերին, անհավանական թվացող կարճ ժամանակահատվածում ձևավորեցին պարտիզանների /«չետնիկ»/ 2-3 հազարանոց մարտունակ ջոկատ: Այդ ջոկատը ոչ միայն հերոսամարտ մղեց Արևելյան Շիրակն ու Արագածոտնը միաձուլող հատվածում, այլև Սարդարապատի բախտորոշ ճակատամարտի վերջին՝ ավարտական փուլում, խմբապետ Պանդուխտի /Միքայել Սեֆերյան/ գլխավորությամբ, շուրջ 1500 մարտիկներով, օգնության հասավ Սարդարապատում մարտնչողներին:

Սա անառարկելի իրողություն է և իր նշանակությամբ եզակի փաստ մեր ժողովրդի մայիսյան հերոսական գոյամարտի պատմության մեջ:

Մենք ավարտում ենք մեր գիտաժողովն այն հաստատ ու լավատեսական գիտակցությամբ, որ Սառնաղբյուր եկած մի խումբ մտավորականների և տեղական բնակչության այս միածույլ, եզակի հավաքն ավանդական իրողություն կդառնա և կյանք կմտնի որպես մտավորականության ու տեղական բնակչության սերտ բարեկամության, խթան կհանդիսանա գյուղի և Շիրակի երիտասարդության հայերնասիրական դաստիարակության գործում:

Ինչ վերաբերում է գիտաժողովում Սառնաղբյուրի երկու անվանի մտավորականների՝ կազմակերպչական բացառիկ ընդունակությամբ օժտված Ռ.Ե.Գևորգյանի և Երևանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի դոցենտ, աշխարհագրական գիտությունների թեկնածու Խ.Բ.Սարգսյանի զեկուցումներին, ապա, իմ կարծիքով, նրանց արժեքավոր, փաստերով առատ այդ զեկուցումները, գոյապայքարի պաշտպանական գծի քարտեզը, մեզ՝ պատմաբաններիս համար, կարող են հանդիսանալ հիմնականում հավաստի հուշերի, նաև արխիվային փաստաթղթերի վրա հենված պատմական կարևոր սկզբնաղբյուր: Դրանք կօգնեն առաջիկայում է՛լ ավելի խորությամբ ուսումնասիրելու և ամբողջացնելու Սոգյուլուի նշանավոր ճակատամարտի պատմությունը:

Կարելի է հավաստիացնել տեղի բնակչությանը, որ այդ պատմությունն իր արժանի տեղը կգտնի մեր ուսումնասիրություններում, բուհական ու դպրոցական դասագրքերում:

Եվ վերջապես, ի ուրախություն բոլորիս, ինչպես հավաստիացնում են մեր գիտաժողովի պատասխանատուներ՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր պարոն Աշոտ Մելքոնյանը, «Շիրակ միջազգային միություն» ՀԿ-ի պատվավոր ու գործնական նախագահներ, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանն ու Ռուս-հայկական /սլավոնական/ պետական համալսարանի ռեկտոր, պարոն Արմեն Դարբինյանը, Շիրակի մարզպետ պարոն Ռոմիկ Մանուկյանը, ամեն ջանք կգործադրվի, որպեսզի առանձին գրքով

առաջիկայում լույս տեսնեն այս գիտաժողովի նյութերը: Սառնաղբյուրցիները և Շիրակի մտավորականությունն իրենց ձեռքի տակ կունենան 1918թ. Շիրակում մայիսյան հերոսամարտերին նվիրված ամփոփ մի արժեքավոր ժողովածու, որը նկատելի ներդրում կլինի արդիական այդ հիմնախնդրի լուսաբանման գործում:

ԵԼՈՒՅԹՆԵՐ

ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

«Շիրակ միջազգային միություն» ՀԿ
պատվավոր նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հայերն ասում են. «Լավ է վառել մի օջախ, քան ամբողջ կյանքն անիծել խավարը», լավ է մի փոքր գործ անել, քան թե այստեղ-այնտեղ առավոտից երեկո փնթփնթալ: Այս միտքը ես շատ եմ օգտագործում: Դա ըստ իս՝ իսկապես մեր ստեղծարար ժողովրդին է բնութագրում: Մեր ժողովուրդն ամեն օր մի գեղեցիկ բան է անում և թողնում աշխարհում: Ճանապարհին՝ աջ թևում, կանգնած է հոյակապ եկեղեցին, մի փայլուն ճարտարապետական գործ: Գալիս ենք այստեղ՝ սարերի, ձորերի մեջ կորած մի հիանալի գյուղ, որի տները բոլորն էլ լավն են, բոլորը՝ քարաշեն: Ես չեմ ասում, թե ամեն ինչ լավ է, բայց այն, ինչ տեսնում եմ, իսկապես գոհացնում է հայ մարդուն:

Գիտեք ինչ կա, պատերազմում, կռվի ժամանակ ոչ միայն հաղթողներն են հերոսներ: Կարելի է պարտվել և լինել հերոս: Շատ հետաքրքիր է. անընդհատ հիշում են նրանց, ովքեր հաղթել են, բայց ովքեր իսկապես պայքարել են, բայց այս կամ այն առումով պարտվել են՝ չի նշանակում, որ հերոսներ չեն: Այն, ինչ-որ եղել է այստեղ, եղել է հերոսական ճակատամարտ և եղել են այստեղ հերոսներ, որոնք իրենց անունը պատվով են պսակել: Ես գտնում եմ, որ նրանց հետնորդները այստեղ են և հույս ունեմ, որ մի գեղեցիկ օր բոլորդ էլ հերոսներ կդառնաք: Կարող եմ ասել, որը վերջերս անընդհատ ինձ մտահոգում և ուրախացնում է մի բան. հաճախ ասում ենք, որ գիտության, կրթության, արվեստի բնագավառի այս կամ այն մարդը մեր ժողովրդի ամենափայլուն մարդկանցից է, կամ արդեն դասական է դարձել: Դասականներն այսօր ապրում են մեզ հետ, այ այստեղ: Հրեն նստած հայտնի չէ, այս երիտասարդների մեջ

կարող է նստած է հայ ժողովրդի ամենափայլուն զավակներից մեկը, որը պատիվ է բերելու հայ ժողովրդին: Այսինքն՝ դասականներն այսօր այստեղ են ապրում:
Շնորհակալությունն:

ԱՐՄԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ռուս-հայկական /Սլավոնական/ պետական
համալսարանի ռեկտոր
«Շիրակ միջազգային միություն» ՀԿ նախագահ,

Պատիվ ունեմ ողջունելու Սառնաղբյուրի ժողովրդին, նաև ձեզ բոլորիդ, ովքեր հավաքվել են այսօր այս դահլիճում: Սերգեյ Ալեքսանդրովիչն ասաց, որ մենք հուզումնալից ճանապարհ անցանք այստեղ գալուց: Հայաստանում երևի թե ամեն մի գյուղ, ամեն մի հատված յուրահատուկ գեղեցկություն ունի, և այստեղ գալուց մենք իսկապես ճաշակեցինք Սառնաղբյուրի այս գեղեցկությունը, իսկ այստեղ արդեն դահլիճում պատիվ ունենք ճաշակելու մարդկանց գեղեցկությունը: Ես շատ ուրախ եմ, որ մեր պատմաբանները հայտնություն են արել և այսօր ներկայացնում են մեզ, ներկայացնում են ողջ ժողովրդին: Դա Սառնաղբյուրի գոյամարտի ճշմարտությունն է և շատ շնորհակալ եմ պատմաբաններին՝ ճշմարտությունը մեզ այսօր մատուցելու համար: Բայց երևի թե ավելի շատ շնորհակալական խոսքեր պետք է ասենք մեր ժողովրդին, ես իսկապես շնորհակալ եմ մեր ժողովրդին, շնորհակալ ենք Սառնաղբյուրի ժողովրդին, շնորհակալ ենք մեր այն նախնիներին, որոնք այդ հերոսությունը երևի թե իրենց ամենօրյա գործնական կյանքով և ապրելով են ապացուցել և երևի թե այսօրվա խորհուրդն էլ դա է, որ մենք հիշելով, հիշատակելով և մի գուցե ճշմարտությունն առաջին անգամ այստեղ ասելով, երևի թե մենք պետք է կարևորենք մեր

ժողովրդի ամենօրյա հերոսական պայքարը նաև այսօր, որովհետև կյանքի պայքարը դեպի գեղեցիկ, դեպի ճիշտ, դեպի զարգացած երկիր տանող ճանապարհն անպայման պարունակում է իր մեջ պայքարի ելևէջ և երևի թե ժողովուրդը ճշմարիտ է և պատմական մեծ բեկումնային պահերին ընտրում է իր զարգացման ճշմարիտ ուղին: Ես շատ ուրախ եմ այսօր այստեղ լինելու համար և մեր «Շիրակ» հկ անունից գյուղի դպրոցի տնօրենին կուզենայի այս երկու համակարգիչը հանձնել՝ ի նշանավորումն մեր այսօրվա գեղեցիկ իրադարձության:

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
պ.գ.դ., պրոֆ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտաժողովում, որը գումարվեց Սոգյութլի՝ Սառնաղբյուր գյուղում, փաստորեն արծարծվող թեման պատմագիտական հայտնագործություն է: Դա պատիվ է բերում պատմության ինստիտուտին և ամբողջ հայ ժողովրդին:

Պատմության մեջ շատ է գրվել հայերի ցեղասպանության մասին, սակայն միշտ չէ որ ցեղասպանության, հայասպանության /արմենոցիդի/ խնդիրը զուգակցվել է հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերի հետ:

Այսօրվա գիտաժողովում այս հրաշալի գյուղի ծնունդ հանդիսացող Ռուդիկ Գևորգյանը, հենվելով իր հոր պատմածի և արխիվային փաստաթղթերի վրա, բազմակողմանիորեն հիմնավորեց այն ճշմարտությունը, որ 1918թ. Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերից հետո գոյապայքարի կարևոր էջ պետք է համարել նաև Սոգյութլիի հերոսամարտը, որը նպատակ էր հետապնդում փրկել տասնյակ

հազարավոր գաղթականների և Շիրակի բնակչությանը: Նա հանգամանորեն նկարագրեց գյուղի բնակիչների և նրանց միացած արևմտահայ տեղահանվածների, Շիրակի մի շարք գյուղերի բնակչության հերոսական գործողությունները թուրքական զինված ուժերի դեմ:

Ռ.Գևորգյանի հետաքրքիր զեկուցումից հետո նույն գյուղի ծնունդ աշխ. գիտ. թեկն. դոցենտ Խաչիկ Սարգսյանն իր կազմած քարտեզի միջոցով մանրամասնեց ճակատամարտի հետ կապված մի շարք հարցեր և հավաստի փաստերով հիմնավորեց գոյամարտը:

Գիտաժողովը նոր ավանդ ներդրեց հայ ազատագրական պայքարի գիտական լուսաբանման ասպարեզում:

ԱՐԵՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Տեխն. գիտ. թեկնածու

Տեխնիկական գիտությունների ներկայացուցիչ լինելով ինձ համարել եմ ոչ շատ հուզական անձնավորություն, բայց բազմիցս հուզվեցի այսօր զեկուցումները լսելով: Ուզում եմ մի շարք շնորհակալություններ հայտնել:

Առաջինը՝ պարոն Ռ. Գևորգյանին, որն այս ճակատամարտի վերաբերյալ համարձակ հայտնագործություն է արել՝ գիտնականներին հետազոտական մեծ աշխատանքի ճակատ բացելով:

Շնորհակալություն եմ ուզում հայտնել նաև Ակադեմիայի պատմության ինստիտուտի ղեկավարությանը, պատմաբաններին, որոնք գիտնականի ուժ և համարձակություն գտան՝ պատմական, արխիվային աղբյուրների հետ համադրելով սովորական մարդկանց վկայությունները հավաստի աղբյուր համարել: Շնորհակալություն...

Մյուսը՝ Սառնաղբյուրի հերոսներին, որոնց անուններն այս

քարտեզում են գրված: Հազար ողորմի իրենց, Աստծո լույսում մնան նրանց հոգիները...

Եթե չլիներ նրանց նմանների անձնվեր հերոսությունը, մեր սերունդը պարզապես չէր լինի:

Շնորհակալություն...

Եվ այդ հերոսական ավանդույթները պահպանվել են այսօր ներկա սառնաղբյուրցիների հոգում... Հրեն իմ կողքը նստած է հերոսամարտի մասնակիցներից մեկի թոռը: Այսօր, երբ, ինչպես նշվեց այս ամբիոնից, սիոնիստական գլոբալիզմը տարածում է իր համաշխարհային հարձակումը, մենք պետք է մեր արմատներին վերադառնանք: Եվ դուք դա եք անում, ապրե՛ք:

ԿԱՐԼԵՆ ՍԵՂԲՈՍՅԱՆ
Պատմ. գիտ. թեկնածու

Ուրախություն և հուզմունք է առաջացնում այն ակտիվ մասնակցությունը, որ ցուցաբերում են այսօր Սառնաղբյուր գյուղի բնակիչները հենց իրենց գյուղում հրավիրված գիտաժողովի նկատմամբ: Մայիսյան հերոսամարտերում՝ Սոգյուլիի գոյամարտի վերաբերյալ նման ուշադրությունը, որ տեղացի մտավորականների, տեղի բնակիչների մասնակցությամբ ու նրանց տված նյութերով, ինչպես և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի, «Շիրակ միջազգային միություն» հկ և այլ կազմակերպությունների գիտնականների աջակցությամբ իրականացվում է այստեղ, խանդավառել է մարդկանց: Տեսեք, թե հատկապես տարեց մասնակիցներն ինչպիսի ակտիվությամբ ու բծախնդրությամբ են հետևում ելույթներին, կատարում հարցադրումներ, լրացումներ ու մեջբերումներ անում: Եվ դա բնական է: Հայտնի է, որ յուրաքանչյուր գյուղի կամ ավանի բնակչություն տարիների ընթացքում սերնդե-

սերունդ լսում և վերարտադրում է իր պապերի և ծնողների պատմածներն իրական դեպքերի մասին: Նման գրեթե կենդանի փաստերի միագումարն ու համադրումը փաստական այլ նյութերի հետ ավելի ամբողջական և իրական են դարձնում տվյալ գյուղի կամ ավանի պատմությունը: Իսկ եթե գրավոր պատմական տեղեկություններն էլ չափազանց սակավ են, առավել ևս բանավոր նյութերն օգնում են վեր հանելու տվյալ բնակավայրի իրական պատմությունը: Այսօր մենք ականատեսն ենք նման իրողության փաստացի արարմանը, որ պատվով իր վրա որպես առաջադրանք վերցրել ու կատարում է ԳԱԱ պատմության ինստիտուտը:

Ես ազգագրագետ եմ: Ազգագրագետներիս աշխատանքը մշտապես կապված է բնակչության հետ: Մենք հետազոտում, ուսումնասիրում ենք թե՛ գյուղի և թե՛ քաղաքի բնակչության կենցաղն ու մշակույթը և վեր հանում ինչպես ազգային ավանդական և արդի կենցաղին ու սովորույթներին վերաբերող խնդիրները, այնպես էլ ժողովրդական հարուստ մշակույթի ամբողջ պատմությունը: Այսօրվա գիտաժողովը ապացուցում է, որ պատմական իրադարձություններն ավելի հավաստի են դառնում, եթե դրանք արխիվային ու այլ նյութերից բացի հենվում են տվյալ շրջանի վերաբերյալ առկա գրավոր ու բանավոր կենդանի հիշողությունների, ընդհանրապես՝ ազգագրական և բանահյուսական նյութի վրա:

Ողջունում եմ սառնաղբյուրցիներին և այս հաջողված գիտաժողովի բոլոր մասնակիցներին:

ԹԵԼՄԱՆ ՍԱՐՈՅԱՆ
«Շիրակ միջազգային միություն»
ՀԿ փոխնախագահ

Այսօրվա մեր գիտագործնական կոնֆերանսը հիրավի ունի պատմական նշանակություն: Դժվար է գերագնահատել այն իրողությունը, որ ի շնորհիվ մեր հարգարժան պատմաբանների այլևս մեր ժողովրդի սեփականությունն է դառնում ավելի քան 85 տարվա վաղեմության մի պատմական հիշողություն, ինչպիսինն է թուրք ելուզակների դեմ մղած Սառնաղբյուրի հերոսամարտը:

Սառնաղբյուրն ինձ համար սոսկ բնակավայր կամ աշխարհագրական հասկացություն չէ: Այն ավելին է, քանզի իմ մեջ արթնացնում են քառորդ դարի երանելի ու սրտաճմլիկ հուշեր:

Սառնաղբյուրը՝ իր հայկական լեռնաշխարհի յուրահատուկ բնությամբ, զմրուխտյա լեռնաշխարհով ու քառագագաթ Արագածով մի սքանչելի ներկապնակ է, մշտական, ողողանջող հնչերանգով, այն «ալ ու ալվան» սարի ճամփաների կենդանի մարմնացումն է, որտեղով անցնելիս յայլավորները շտապում էին պար բռնել բարձր լեռան ծաղկած լանջին: Սառնաղբյուրն իմ մանկապատանեկան տարիների քաղցր մտորումների օրորանն է:

Ճակատագրի բերումով Սառնաղբյուրն իմ սերնդի /50-60 ական թվականներ/ երիտասարդական տարիների արարումների կենդանի վկան է, այն տարիներին, երբ մենք կյանք էինք մտել դժվարին պայմաններում ապրելու և ստեղծագործելու հաստատուն վճռականությամբ, վառ հույսերով մեր վաղվա նկատմամբ: Մեր ուսերին կրեցինք մեզ վիճակված կյանքի արհավիրքները: Մեծ Հայրենականի անասելի դժվարությունները, ետպատերազմյան կիսաքաղց տարիները, և այդպես մինչև հայ շինականի կռացած մեջքի շտկվելը: Սակայն, ի պատիվ իմ սերնդակիցների, ինչու չէ՝ նաև

ավագ սերնդի, պետք է ընդգծեմ, որ մենք լիահույս էինք, որ մաքառումների ճանապարհով է կայանալու վառ ապագան, մենք տեսնելու էինք մեր բնակավայրերի զարթոնքը:

Կոմերիտմիության շրջանային մարմնում աշխատելու տարիներին ես ականատես եմ եղել սառնաղբյուրցիների հայրենանվեր աշխատանքին: Պետք էր տեսնել միայն 50-60-ական թվականների երիտասարդության ոգևորիչ աշխատանքը հայրենի գյուղում, ամենուրեք՝ համայնական դաշտերում, անասնապահական ֆերմաներում, ուսման բնագավառում և այլուր: Այդ երիտասարդության հետ միասին մենք վերաիմաստավորեցինք «ՁԱՂԱ»-ի, բնության այդ հրաշալիքի ամենամյա հավաքույթը՝ վարդավառն իր համահունչ միջոցառումներով:

Սառնաղբյուրը մշտապես ապրել է լիարժեք կյանքով, գյուղի բազմաթիվ երիտասարդներ փառաբանեցին իրենց բնակավայրի անունը գիտության, գրականության ասպարեզում, ռազմի դաշտում: Սառնաղբյուրցին այսօր ողջ հայ ժողովրդի հետ միասին հպարտանում է իր համագյուղացիներով՝ տաղանդավոր բանաստեղծ Արշալույս Սարոյանի, անխոնջ գիտնական Գ. Սահակյանի, Մեծ հայրենականի փառաբանված զորավար Մաթևոս Մադաթյանի և այլոց երջանկահիշատակ անուններով :

Ներողություն, որ բոլորի անունները չհիշատակվեց:

Սակայն վերադառնանք այսօրվա մեր հավաքի թեմային:

Մեր սերնդակիցներն իրենց ավագների հիշողություններից գիտեին այն ծանր օրերի մասին, երբ 1918, 1920 թվականներին թուրքական մահաբեր յաթաղանը կախվել էր իրենց գլխին: Նվաճելով Ալեքսանդրապոլը՝ թուրքական խուժանը կանոնավոր բանակի աջակցությամբ տեռորի էր ենթարկում Շիրակի դաշտի հայ շինականին, ռազմավարական ուղի ընտրելով Ղզլդաղի և Շիշթափայի լեռնանցքը՝ Ղռխի և Տաշխալայի վրայով ձգտում էր կոտորած սարքել Սառնաղբյուրում, որտեղ կուտակված էին 100 հազարավոր փախստականներ; անզեն կանայք, երեխաներ և ծերեր: Ահա այս

օրհասական օրերին էր, որ մի շարք ազգային գործիչների նախաձեռնությամբ սառնաղբյուրցիները և նրանց միացած շրջակա գյուղերի բնակչությունը, բազում փախստականներ մարտավարության նրբագույն բանիմացությամբ ոչնչացնելով թուրքական ջոկատներին՝ կոտորածից փրկեցին 100 հազարավոր մարդկանց:

Եվ այսօր մենք լսեցինք մեր հարգելի պատմաբանների գիտական ուսումնասիրությունները, նրանց խորաթափանց պրպտումները, անուն առ անուն /ճակատամարտի ամբողջ երկայնքով/ բոլոր հայրենասերների անունները, որոնք ծունկի չգալով թուրք ելուզակների առջև, մարտական տոկունությամբ կազմակերպեցին գյուղի պաշտպանությունը՝ փակելով նրանց ճանապարհը դեպի սուրբ էջմիածին: Սառնաղբյուրի և շրջակա գյուղերի հերոսամարտի պատմությունը նաև մի վառ ապացույց է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ:

Թուրքական ավազակախմբերի դեմ կազմակերպած հերոսամարտը հիրավի կարելի է դասել 1918թ. մայիսյան հերոսամարտերի շարքին: Այդ հիշարժան հերոսամարտը սոսկ գյուղի պաշտպանություն չէր, այլ ամենից առաջ թուրք թալանչիների ասպատակություններից 100 հազարավոր անմեղ մարդկանց փրկությունն էր, այն սարդարապատյան հերոսամարտի նախերգանքն էր: Մենք խոնարհվում ենք այդ հերոսամարտի բոլոր մասնակիցների հիշատակի առջև և ըստ առժանվույն գնահատելով նրանց սխրանքը, կոչ ենք անում մեր երիտասարդությանը արժանի փոխարինողը լինել մեր նախնիների, որոնք իրենց կյանքի գնով փրկեցին Հայաստան աշխարհը, բարձր պահեցին հայ մարդու մարտական ոգին, նրա արժանապատվությունը:

Դրվատանքի է արժանի Հայաստանի ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտնականների կատարած աշխատանքը, որոնք իրենց անասելի նվիրումով հանրության սեփականությունը դարձրեցին տասնյակ տարիների մոռացության տրված՝ թուրքերի դեմ Սառնաղբյուրի շրջանում Շիրակի բնակչության

մղած հերոսամարտի դրվագները՝ վերականգնելով պատմական իրողությունը:

Օգտվելով պահից, թույլ տվեք շնորհավորել մեր հարգելի պատմաբաններին, իմ սիրելի բարեկամներին՝ պատմության ինստիտուտի կազմավորման 60-ամյակի առթիվ և ցանկանալ նրանց ստեղծագործական բեղմնավոր աշխատանք:

Հավուր պատշաճի գնահատելով մեր պատմաբանների կատարած քրտնաջան աշխատանքը՝ Սառնաղբյուրի հերոսամարտի ուսումնասիրությունների բնագավառում, կարծում ենք առանձնահատուկ հիշատակության է արժանի մեր գործընկեր, «Շիրակ միջազգային միություն» ՀԿ վարչության անդամ, Սառնաղբյուրի ծնունդ, արժանավոր որդին Աթաշենց Եղիշի՝ Ռուդիկ Գևորգյանը, որն այդքան հետևականորեն ձեռնամուխ եղավ և իր տրամաբանական վախճանին հասցրեց Սառնաղբյուրի հերոսամարտի ուսումնասիրության աշխատանքները՝ սերտորեն համագործակցելով պատմաբանների հետ, երախտապարտ զավակի նվիրումով ու հաստատակամությամբ համախմբելով բոլոր ուժերը, կազմակերպեց այս հիանալի միջոցառումը: Համոզված ենք, որ համագյուղացիները կգնահատեն իրենց համագյուղացու համեստ ներդրումը այս գործում:

ԵԼԵՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Գյումրիի ՊՄԻ դոցենտ, պ.գ.թ.,
պատմության ամբիոնի վարիչ

Նախ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտական նստաշրջանի կազմակերպիչներին այս արդիական և կարևոր նախաձեռնության համար: Մեզ՝ հայերիս և մեր հանրապետության համար ներկայումս բավականին դժվարին ժամանակներ են, որոնք պահանջում են պետականության

կայացմանը նպատակաուղղված քայլեր և ստիպում են մշակել անկախ գոյության ռազմավարություն, ինչն առավել է բարդանում արդի գլոբալացվող և ինտեգրացվող աշխարհի իրողություններով: Ըստ այդմ էլ առավել կարևորված և արդիական են բոլոր այն ուսումնասիրությունները, որոնք փորձում են, հենվելով մեր ժողովրդի ոչ վաղ անցյալի պատմական իրադարձությունների վրա, դրանք շաղկապել ժամանակակից քաղաքական գործընթացների հետ:

Հայության պատմական փորձը արժեքավոր է նաև մեզանում ազգային գաղափարախոսության ձևավորման հիմնախնդրի առնչությամբ: Դրա կայացման գործում արդյունավետ դեր կարող են խաղալ այնպիսի գործոններ, ինչպիսիք են հայրենասիրությունը, սերունդների հաջորդայնությունը, պետության և ժողովրդի ճակատագրին մասնակցությունը:

Ցանկանում եմ գիտաժողովի մասնակիցներին տեղյակ պահել, որ վերոհիշյալ հիմնախնդիրները վաղուց ի վեր գտնվում են Գյումրիի մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի ուշադրության կենտրոնում: Սույն գիտական նստաշրջանի մասնակիցներից շատերը հանդիսանում են Գյումրիում անցկացված «Պատմական հիշողություն և ազգային գաղափարախոսություն» խորագրով գիտական ընթերցումների մասնակիցներ, որոնք տեղի ունեցան դեռևս 2000թ. նոյեմբերին: Ընթերցումները չէին կարող տեղի ունենալ, եթե չլիներ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի անմիջական աջակցությունը:

Ներկայիս նստաշրջանը առավել ևս ընգծում է հայ պատմաբանների կողմից դրսևորվող հետաքրքրությունը հայոց պետականության կայացման խնդիրների հանդեպ թե՛ անցյալում, թե՛ ներկայումս: Անհնար է մշակել անկողմնակալ և անաչառ պատմագիտական հայեցակարգ առանց Հայաստանի երեք հանրապետությունների պատմության ուսումնասիրման, քանզի դրանք շաղկապված են և ընդհանուր գործընթացի տարբեր փուլեր են ներկայացնում: Այդ տեսակետից վերին

աստիճանի կարևոր է նաև Առաջին հանրապետության կայացման ճանապարհի այնպիսի մի պատմական դրվագի գիտական ուսումնասիրությունը, ինչպիսին Սոգյուբլու-Սառնաղբյուրի 1918թ. հերոսամարտն է, թուրքական վանդալների դեմ Շիրակի բնակչության գոյապայքարը: Խորհրդանշական է, որ այն տեղի է ունենում այդ պայքարի հենց կենտրոնում, որտեղ շարունակում են ապրել այդ հերոսական իրադարձությունների սերունդները, որոնք իրենց կենսագործունեությամբ գալիս են իմաստավորելու նախնիների սխրանքը: Սոգյուբլիի հերոսամարտը հայ ժողովրդի ընբոստ ոգու և նրա ինքնակազմակերպման, նրա քաղաքական հասունության վկայությունն է:

Մենք համոզված ենք, որ նման նստաշրջանների անցկացումը նպաստում է երիտասարդների հայրենասիրական դաստիարակությանը: Տարբեր տարիքի և սերունդների գիտնականների և մասնակիցների ներկայությունը այս գիտաժողովում խոսում է այն մասին, որ անցյալի դրվագները ոչ միայն ուսանելի են, այլև ձևավորում են ազգային գաղափարախոսություն պատմական հիշողության միջոցով և ամրապնդում ազգային միասնության գաղափարը, որը հենված է ընդհանուր անցյալի, ընդհանուր ներկայի և ընդհանուր ապագայի վրա:

ՀՄԱՅԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ
Սառնաղբյուր գյուղի դպրոցի տնօրեն

Մեր մանկավարժական կոլեկտիվի և հասարակության անունից ցանկանում եմ խորին շնորհակալություն հայտնել այսօրվա գիտաժողովի բոլոր մասնակիցներին, մեր հարգարժան գիտնականներին, հյուրերին, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանին, «Շիրակ միջազգային միություն» հկ նախագահ Արմեն Դարբինյանին, այս գեղեցիկ արարողության կապակցությամբ: Թող որ այսպիսի առիթներ հաճախակի լինեն:

Շնորհակալություն:

ԵԼՈՒՅԹՆԵՐ ՀՈՒՇԱՔԱՐԻ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն

Այսօր բոլորիս համար ուրախալի օր է: Մենք 1991թ. ձեռք բերելով անկախություն, ապրում էինք նաև դժվարին օրեր: Բայց մեկ տասնամյակն անցավ, ինչպես ասում են թունելի վերջում լույս է երևում: Մենք մեր ամենամյա աշխատանքում խոր ցավ ենք ապրել, երբ արձանագրել ենք Հայաստանի գյուղերի դատարկվելու իրողությունը. մարդիկ հեռանում են. ու՞մ է մնալու մեր հայրենի հողը: Բայց մենք՝ պատմաբաններս, չէինք վհատվում, խոսում էինք Արևմտյան Հայաստանի մասին, կորուսյալ հայրենիքի մասին: Խոսելով կորուսյալ հայրենիքի մասին, նկատի ունեինք առաջին հերթին այս հայրենիքը: Ես բախտ եմ ունեցել երեք անգամ լինելու Արևմտյան Հայաստանում: Գտնվելով Ախուրյանի աջ ափին՝ շատ ավելի խորը պետականության զգացում էի ապրում, երբ նայում էի ձախ ափին՝ Հայաստանի Հանրապետությանը, որովհետև եթե երբևէ տեղի ունենա Արևմտյան Հայաստանի ազատագրությունը, ապա այն գալու է այս՝ Ախուրյանի ձախ ափից: 1918թ. մայիսյան հերոսամարտերի մասին դժվար էր խոսել, միայն պատմական հիշողությունն էր, որ սերնդեսերունդ անցնում էր, իսկ արխիվային փաստաթղթերն ագելված էին: Հատկապես կուզենայի նշել մեր պետական արխիվի 200-րդ ֆոնդի մասին: Արխիվի աշխատակիցները որպես մասունք պահպանում էին այն: Եկան լուսավոր օրեր, արխիվները բացվեցին, պատմական հիշողությանը գումարելով արխիվային հավաստի նյութերը, նորից ժողովրդին է վերադառնում պատմական ճշմարտությունը:

Այսօր ոտք դնելով ձեր գյուղը՝ հպարտություն ապրեցի, որ Հայաստանում կան այսպիսի հզոր բնակավայրեր: Առիթ ունեցել եմ անցնելու այս խաչմերուկով, բայց երբևէ դեպի աջ չեմ թեքվել, չեմ մտել այս գյուղը: Շնորհակալություն բոլորիդ՝

սառնաղբյուրցիներ: Եկեղեցում ես մի փոքրիկ մակագրություն թողեցի. «Լինելով գյուղում ես համոզվեցի, որ այսօրվա սառնաղբյուրցիներն արժանի են իրենց պապերի արժանավոր զավակը լինելուն, սոգյութլեցիների հաջորդը լինելուն»: Այն պահվածքը, որ նկատում էի ձեր գյուղացիների մեջ, այն հարցերը, որ դուք տալիս էիք մեզ, վկայությունն էր այն խրոխտ ոգու, որ դրսևորել էին ձեր պապերը 1918թ.: Ամեն անգամ, երբ ձեր համագյուղացի Ռուդիկ Գևորգյանը մտնում էր մեր ինստիտուտ՝ մեկ հուսահատված, որ հնարավոր է, որ այս միջոցառումը չստացվի, մեկ էլ այնքան ոգևորված, որ Արմեն Դարբինյանն է գալու է և գալու է ոչ դատարկաձեռն, գալու է ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը, գալու են մյուս գիտնականները՝ դա ուրախացնում էր բոլորիս, որ իսկապես եկել են ժամանակներ, երբ մեր պատմական անցյալը գնահատվում է ըստ արժանվույն: Մարդիկ դրա համար հպարտություն են ապրում:

Շնորհակալություն ձեզ, որ դուք այս հողի վրա եք: Գործնական հայրենասիրությունը հողի վրա ապրելու մեջ է, ոչ միայն խոսքի: Գրավոր խոսքն իհարկե պետք է, որ մնա և մշտապես պարտավորեցնի մարդկանց ներկայի և ապագայի համար: Ես շնորհակալ եմ, որ ինձ հնարավորություն է տրվել խոսքով հանդես գալու այս հուշաքարի առջև, և ես հաճույքով կխնդրեի, որ մեր շատ սիրելի ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը բացի այս հուշաքարը: Համոզված եմ, որ մենք միասին առաջիկայում ներկա կգտնվենք հրաշալի հուշարձանի բացման արարողությանը:

ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հուշաքարը բացելուց առաջ երկու խոսք եմ ուզում ասել այս գեղեցիկ լեռնաշխարհի մասին: Այնտեղ եկեղեցի է հպարտ կանգնած, այստեղ՝ ժայռեր և դրանց դիմաց մենք բաց ենք

անում մի նոր հուշաքար: Բայց ես ուզում եմ իջնել հողի վրա, որ այդպես մոտ լինեմ պատմական անցյալին, զգամ հողը...

Ես ուզում եմ ասել, որ ձեր գյուղը հիանալի մարդիկ է տվել: Դրանցից մեկն իմ լավ բարեկամ, ընկեր, գործընկեր Գուրգեն Սահակյանն էր՝ փայլուն մարդ, հիանալի հայրենասեր, գեղեցիկ սրտի ու մտքի տեր էր և ես կուզենայի մի գեղեցիկ օր, գալ այստեղ՝ Սառնաղբյուր, և մի հուշարձան բաց անել, որ նվիրված լինի անվանի գիտնական Գ.Սահակյանին: Համոզված եմ, որ այս հուշարձանը միշտ հիշեցնելու է նաև Գ.Սահակյանին և սառնաղբյուրցի մյուս բոլոր հերոսներին: Թույլ տվեք բաց անել հուշաքարը:

ԱՐՄԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ
Ռուս-հայկական /սլավոնական/ պետական
համալսարանի ռեկտոր
«Շիրակ միջազգային միություն»
ՀԿ նախագահ,

Սիրելի բարեկամներ, թանկագին սառնաղբյուրցիներ.

Ես նույնպես շատ հպարտ եմ այսօր այստեղ գտնվելու համար, որովհետև մենք եկել ենք մեկ անգամ ևս պատվելու մեր հերոսական անցյալը, որի մի փառավոր էջը հենց այստեղ, այսպիսի գողտրիկ, գեղեցիկ հայկական գյուղում է ծնվել: Եվ ճիշտն ասած այս օրը շատ մեծ խորհուրդ ունի, որովհետև մենք ոչ միայն մեծարում ենք անցյալը, այլ հուշաքարի հարևանությամբ գտնվելով՝ մտածում ենք նաև ապագայի մասին:

Ա.Մելքոնյանը շատ ճիշտ ասաց, որ մենք ամեն անգամ, հիշատակելով, հերոսացնելով անցյալը, պետք է մտածենք նաև, ինչպես ենք մենք այսօր արդարացնում և արդարացնու՞մ ենք արդյոք իսկապես մեր հերոսական անցյալը: Ես կարծում եմ, որ մենք դա պարտավոր ենք արդարացնել մեր ամենօրյա աշխատանքով: Սառնաղբյուրցիներին հանդիպելով, ևս մեկ

անգամ համոզվեցի, որ այստեղ իսկապես խելոք և շատ արժանապատիվ ժողովուրդ է ապրում: Ես ողջունում եմ ձեզ բոլորիդ և շնորհավորում եմ այս հուշաքարի բացման առթիվ:

Շնորհակալություն ձեզ:

ՎԻԼԵՄ ՀԱԿՈԲՅԱՆ
Մ.Հերացու անվան պետական
բժշկական համալսարանի ռեկտոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ինձ համար այսօր մեծ պատիվ է լինել այստեղ, շփվել այս ժողովրդի հետ, վերհիշել այն հերոսամարտերը, որ տեղի են ունեցել այս սուրբ հողում: Լատինական հնագույն ասացվածքն ասում է. «Եթե ուզում ես վաղվա օրը տեսնես, եթե ուզում ես գալիքը տեսնես, պետք է իմանաս քո անցյալը»: Եվ այսօր անցյալը հիշելով, հիշելով հայոց հերոսամարտերը՝ մեր ժողովուրդն ապացուցեց, որ իրավունք ունի գոյություն ունենալու: Այդ առումով ես հպարտ եմ: Հպարտ եմ, որ այստեղի ծնունդ եմ, հպարտ եմ, որ մեր ժողովուրդը պատրաստ է օրհասական ծանր ժամանակներում համախմբվելու, մի բռունցք դառնալու և պայքարելու, պայքարելու հանուն ազատության, հանուն վաղվա օրվան: Մեր ժողովուրդը փոքր ժողովուրդ է: Նա իրավունք ունի լավ ապրելու և ես հուսով եմ, հավատում եմ, որ մեր վաղվա օրը հիանալի է լինելու, քանզի մենք հերոսական անցյալ ունենք: Ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ, որ այս դժվարություններից չընկրկեք և միշտ նայեք դեպի առաջ: Վաղվա օրը մեր պայծառ է լինելու: Ես ողջունում եմ ձեզ բոլորիդ և թող աստված հնարավորություններ ընծեռնի, որ շատ արագ այս հուշաքարին փոխարինի իսկական կոթողը:

Շնորհակալություն:

1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ԷՋ

1918 թ. մայիսյան հերոսամարտերի
և Հայաստանի Առաջին Հանրապետության 85-ամյակին
նվիրված գիտաժողովի նյութեր

Հրատ. խմբագիր՝ Ս.Գուլասարյան

Հրատ. պատվեր N 12:
Հանձնված է տպագրության 05.01.2005թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ N 1:
Ծավալը՝ 6.4 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ հրատարակչություն,
Երևան, Մարշալ Բաղրամյան, 24գ: